


35  
Գ. Մ. ՔԱԼԵԱՆ  
Գ. Մ. ՔԱՅԷԼԵԱՆ

# ԿԱՅՄԵՐ



Գլխ

Մ

491.99-8  
Խ-49

Երրորդ հրատարակումին Գ. ՏԱՐԻ

ԱՂԵՔԱՍՆԵՐԱԳՈՒ

Տպարան «ՍՎԱՅՑԻՍ»

1917



Թ. ՆՁՄԱԼԵԱՆ  
Գ. ՄԻԳԱՅԼԵԱՆ

491.99-8  
Խ-49

1005-10

# Կ Ա Յ Ժ Ե Ր

## ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Երրորդ տարայ դասագիրք Հայկական դպրոցների  
երրորդ բաժնի

և

Պետական դպրոցների նախադաստիստական դասարանների  
նախագ.

Մեր ինքնորոշյն նկարների, ինչպէս և փոխադրած յօդածներէ  
արատաւորութեան իրաւունքը վերադաճած է:

Попечительскому Совету Кавказского Учебного Округа постановлено  
допустить в качестве руководства для учебных заведений округа  
(3 января 1914 года № 146)

Երրորդ նրատարակութիւն



ԱԼԵԿՍԱՆԴՐԱՊՈԼ  
Տպարան «Ավարդա»  
1917

14094

08.05.2013

18493



### 1. ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Եղբորդ վարժուհու ներկայութեամբ դու ցաւացրիր մօրդ սիրտը, Սուրէնիկ, Տես, այդ բանը այլ ևս չըկրկնուի: Կոպիտ խօսքըդ դանակի պէս սիրաս ծակեց: Ես յիշեցի, որ տարիներ առաջ մայրդ ամբողջ գիշերներ անկողնիդ մօտ նստած լաց էր լինում, երբ դու հիւանդ էիր: Եւ դու այժմ վշտացնում ես նրան, վրշտացնում ես մօրդ, որ պատրաստ է դռներ իր կեանքը քեզ համար: Սուրէնիկ, լսիր և միտքդ պահիր: Գուցէ դու էլ վատ օրեր ունենաս կեանքիդ մէջ, բայց ամենավատը կը լինի այն օրը, երբ դու կը զրկես մօրիցդ: Գու կը մեծանաս, ուժեղ մարդ կը դառնաս, բայց միշտ էլ նրան օգնութեան կը կանչես: Գու ամօթից կը կարմրես, երբ յիշես, որ մօրդ նեղութիւնն ևս պատճառելի էր: Մինչև մահ խիղճը կը տանջի այն մարդուն, որ ցաւացրել է իր մօր սիրտը: Այլ ևս զուր կանցնեն ներողութիւնները: Սուրէնիկ, մայրական սէրը սուրբ է և ազնիւ: Վրայ նրան, ով ստանալիս կանէ այդ սէրը: Ես քեզ սիրում եմ, սիրելի Սուրէնիկ, դու ես կեանքիս միակ յոյսը: Բայց և այնպէս լաւ է քեզ մեռած տեսնեմ, քան ապերախտ:



1262-62

### Կարդա

Կարդա՛, սո՛ւ ի՞նչ խելո՞ք Տանուկ,  
 Կարդա՛, գրքի՛ր փարթի՛ն բոլոր  
 Կարդա՛սցողի՛ խելի՛ն է կարուկ,  
 մի՛բայք պայծառ ու լուսաւոր:  
 Գիր կարդա՛լով, դու գրքի՛րու՛մ  
 Շայ՛ք նորանոր բան կրճատես:  
 Շայ՛ք շարի՛րից, շար բանի՛րու՛մ  
 մերժով եփու՛ն կրարդանես:

Գիր կարդալով դու աշխարհիս  
 կրճատանչես շարն ու բարին,  
 Ա՛յ է խնդում, ո՞վ է լալիս,  
 Ա՛յ է գրկում խեղճ թշուառին:

Կեանքում ծածուկ էլ քեզ համար  
 Բան չի մնալ, որ չխմանաս,  
 Քո մէջ կապրի արար-աշխարհ,  
 Հոգով այնքան կրպորանաս:

Դու կրճատես, ինչու՞ մարդիկ  
 Պէտք է ապրեն իրար համար,  
 Ի՞նչն է մարդկանց ցան ու կարիք,  
 Ի՞նչ է լոյսը, ինչ է խաւար:

Վարդան, որդիս, որ հօրդ պէս  
 Քու էլ անուս, խեղճ շրմնաս,  
 Որ ամենքին վիզ չըծուես,  
 Եւ միշտ ազնաւ սուաջ գնաս...

### 3. ՍՂՋԻԿՆ ՈՒ ՎՅՌԻԿՆԵՐԸ

Երեկ,—պատմում էր լուսինը,—ես ցած հայեցի մի փոքրիկ բակ, որը շրջապատւած էր բարձր պատերով: Բակում կար հաւաքուն, ուր նստած էր թխական հաւը իր տասներմէկ վառիկներով: Մի փոքրիկ սիրուն աղջիկ թռչկոտում էր նրանց շուրջը և աշխատում էր բռնել վառիկներին: Հաւը յուսահատ կշկշում էր և թևերը տարածում էր իր ձագուկների վրայ:

Ես այդ պարզ տեսնում էի, ասաց լուսինը, սրովհետև նայում էի պատի ճեղքով:

Յանկարծ ներս մտաւ աղջկայ հայրը և յանդիմանեց նրան: Ես առաջ անցայ և շուտով մոռացայ այդ դէպքը:

Այսօր երեկոյեան նորից աչքս ձգեցի ցած՝ դէպի այդ բակը: Ամեն ինչ հանդիստ էր. մէկ էլ յանկարծ եկաւ փոքրիկ աղջիկը, կամացուկ մօտեցաւ հաւաքնին, յետ քաշեց դռնակը և ներս ծըկեց: Հաւն ու վառիկներն սկսեցին բարձր կշկշալ և դէս ու դէն թռչել: Աղջիկն աշխատում էր բռնել հաւին: Խիստ բարկացայ չար աղջկայ վրայ և անչափ ուրախացայ, երբ ներս մտաւ հայրը և երեկւանից աւելի խիստ յանդիմանեց նրան: Փոքրիկը դուրսը թեքեց: Նրա կապոյտ աշիկների մէջ երեացին արցունքներ:

— Ի՞նչ ես անում այստեղ, — հարցրեց հայրը:

— Ես... ես ներս մտայ. — կմկմաց աղջիկը, — որ համբուրեմ հաւին և ներսուլիւն խնդրեմ երեկւայ արածիս համար: Ես չը համարձակեցի այդ բանը քեզ ասել:

Հայրը համբուրեց նրա անմեղ ճակատը. ես էլ համբուրեցի աշիկներն ու շրթունքները:

#### 4. ՄԱՅՐՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՐ

Փոքրիկ սենեակում կանթեզը դժգոյն,  
Ազոտ ու մեղմիկ լոյս էր արձակում,  
Իսկ դուրսը, այգում քամին բարկացած,  
Ծառերն էր շարժում, ոռնում կատաղած:  
Մայրը մանկիկին քնքուշ նայելով՝  
ձօճն էր օրօրում, նանիկ ստելով:  
— Ա՛խ, լսի՛ր, քամի՛, մի՛ շարժւէ՛ր ուսի՛ք,  
Սիրուն մանկիկս քնում է մեղմիկ.  
է՛յ, գիժ փոթորիկ, թող քնի որդիս,  
Ամպեր, հեռացէ՛ք երկնի երեսից...  
Քնի՛ր, իմ բալիկ, քնի՛ր անխոով,  
Որտե՛ն ու քամին կըլուեն շուտով.  
Ցանջւած մայրիկիդ աղօթքը բարի  
Սնուշ ու հանգիստ քեզ քուն կըբերի:  
Վաղն որ գարնանես, աշքերդ բացես՝  
Նորից մայրիկիդ երգը կըլսես՝  
Նորից կըտեսնես պայծառ ալեզակ,  
Սիրող մայրիկիդ անուշ փայփայանք...

#### 5. ՈՂՈՐՄՈՒԹԻՅՆ

Այս առաւօտ Գրիգորը դարձեց շատ ուրախ. նա արագ-արագ հագնւեց, համբուրեց մօրը և մի բաժակ կաթ խմելով, գնաց պարտէզը խողալու: Պարտիզում նա քարեր էր շարժում ճնճողուկների վրայ, որոնք երկիւղեց խմբերով այս կողմից այն կողմն էին թռչկոտում: Այս բանը շատ էր զարձացնում Գրիգորին:

Պաղի տաք ժամանակը յանկարծ իրանց դարբասի մօտ նա նկատեց մի փոքրիկ աղջիկ, որ ողորմութիւն էր խնդրում: Աղջիկը սարսափելի նիհար էր, փոքրիկ: Նա հազել էր պատառոտւած շորեր: Նրա ոտքերը մերկ էին, մազերը կեղտոտ ու խճճւած, երեսը արկակէր:

Գրիգորը ուզում էր բարը նետել ճնճողուկներին, երբ աղջիկը մօտենալով՝ կամացուկ շնջաց:

— Աղա ջան, քեզ մատաղ. աղքատ եմ, մի ողորմութիւն արա: Աղքատ ես, հաց ես ուզում, տօաց Գրիգորը, ապա ձեռք պահի: Աղջիկը լստան պարզեց իր փոքրիկ, նիհար ձեռքը:

— Ահա, տօաց տղան և նրա բուռը դրեց քարի կտորը:

Աղջիկը ոչինչ չտօաց, նայեց քարին, յետոյ արտասուալից աչքերը յառեց Գրիգորի վրայ և դուրսը քարը ձգելով, հանգարտ հեռացաւ փոշոտ ձօնապարհով, իր հետ տանելով Գրիգորի տւած քարի կտորը:

Աղջիկը ոչինչ չտօաց. բայց Գրիգորի ուրախութիւնը կորաւ. նրա գէմքը մնայլեց:

Գրիգորը վագեց խոհանայր, մի մեծ կտոր հաց կտրեց, դուրս եկաւ փողոց և սկսեց այս ու այն բակը մտնելով, որոնել աղջկան: Բայց այս բոլորը գուր անցաւ, աղջիկը անհետացել էր ..

Գրիգորը կտորւած արտով վերադարձաւ տուն և հացը կոնատակին կանգնելով դարբասի մօտ սպասում էր, թէ գուցէ աղջիկը նորից կերևայ:

Ա՛խ, նա սրբան ուրախ կըլինէր, եթէ աղջիկը դէն շարտէր քարը, նեղանար, հայհօյէր իրան, բայց նա ոչինչ չէր արել, արտասուալից աչքերով նայել էր Գրիգորին և հեռացել: Այդ խղճալի հայհօցքը կարատում էր Գրիգորի սիրտը:

Նրանից յետոյ ա-



մեն անգամ երբ աղքատի ձայն էր լսում, Գրիգորը դուրս էր վազում այն յոյսով, թէ կըզտնէր աղջկան:

Բայց իզմուռ, աղջիկը այլ ևս չերևաց. նա անհետ չքացել էր, տանելով իր հետ քարի կտորը...



6. Մ Ա Ն Կ Ա Ն Ը

Մանուկ, անմեղ քո սրտի մէջ  
կարեկցութեան զգացմունք  
Թող միշտ վառի, մնայ անշէջ,  
Բուրէ անուշ, որպէս խունկ:

Եւ երբ մի օր քո աչերից  
Ցօղես արցունք բիւրեղիկ,  
Դու կազատես ճնշող բեռից  
Եւ քեզ կըզգաս երջանիկ...

7. ԱՄԵՆԱՍԻ ՎԿԱՑԱԿԱՆԸ

Մի վաճառական լրագրներում յայտարարել էր, թէ իր խանութի համար ուզում է մի աշակերտ վարձել:

Չատ մարդ եկաւ գնաց, վերջապէս վաճառականը մեկին ընտրեց և խանութն ուղարկեց:

—Ասան ինձ, բարեկամ, հարցրեց ծանօթներից մէկը. ինչո՞ւ այդ աղային ընտրեցիր: Ոչ վկայական ունէր, ոչ էլ սերիշ կերպ ճանաչում էիր: Ուրիշները հրաշալի վկայականներ ունէին, և դու ճամբու գրիր:

—Սխալում ես, ասաց վաճառականը, այս աղան շատ վկայականներ ունէր: Սենեակը մտնելուց առաջ ոտները լու սրբեց ու դուռը ծածկեց առանց թրխկացնելու, ուրեմն մաքրասէր է ու կարգապահ: Իր նստած աթոռից վեր կացաւ ու տեղ աւեց կազ

մարդուն, ուրեմն բարեսիրտ է ու յարգում է աւելի հասակաւորներին: Դեռ շէմքին՝ գլխարկը հանեց և արագ, կտրուկ պատասխաններ էր տալիս իմ հարցերին. ուրեմն քաղաքավարի ու աչքաբաց է: Կուացաւ, բարձրացրեց զիրքը, որ գիտմամբ ձգել էի յատակին, մինչդեռ ուրիշները դէմ էին ընկնում գրքին կամ կողքից անցնում: Հանգիստ սպասում էր իր հերթին՝ չաշխատելով ուրիշների առաջը կտրել, ուրեմն լաւ կրթւած աղայ է: Ծորերը լաւ սրբւած էին, իսկ երեսն ու ձեռները մաքուր: Ի՞նչպէս ես կարծում, այս բոլորը լաւագոյն վկայականը չէ:



8. ԴՈՒ ՔԵՉ ՀԱԽՍԱ

Չըհաւատաս դու, եթէ քեզ ասեն՝  
Հանգիստ դու նստիր և յուսով եղիր.  
Օրեր, տարիներ անհոգ թնոց անցնեն,  
Քեզ համար գործը կըզայ ինքն իրեն:

Դու մի հաւատար, թէ որ քեզ ասեն՝  
Չեղբդ մի շարժիր, նստիր ինչպէս կուտ,  
Արժիւն ու առիւծ ոսկի կըբերեն,  
Քեզ համար օտարք անդուլ կըգործեն:

Դու մի հաւատար այլոց խօսքերին.  
Աչքդ մի ձգիր այլոց ձեռքերին.  
Միայն հաւատաս քո իսկ ուժերին  
Եւ քո խելացի առողջ մաքերին:



### Որսորդն ու կապիկը

Արևմտյան մի որսորդ անկասկած էր ընդ-  
 դասնան կապիկի է հանդիպում էր երկու զու-  
 ւակի երկու մասին և իսկոյն երազանք պար-  
 արում է ծորը վրա : կապիկը ժողովում է իր վեր-  
 զինն ու ժրրը, մի զուակին հասցնում ծառի զու-  
 զարը, իսկ դառնում, որ միևսին էլ փակի, բայց  
 ուժիրը չին ներում և նա ընկնում է : Արևմտ-  
 յույ առաջ, նա մի շիռ-ժով գրկում է միայն  
 զուակին, իսկ միևս շիռ-ժով վերջը սխալում  
 ու արիւնոսը շիռ-ժով որսորդին ցոյց փայլա-  
 թանկի : Արևմտյան ընկնում է թէ իր առաջ, մի  
 ծարդ է միջնում և ինկը մարդասպան է :



Պատկեր այս պատկերները ներառված են, ցանկերը և  
 նրանց ցանկերը :



11 ՎԱՅՐԵՆԻՆ ԵՒ ԳԻՐԸ



Մի ճանապարհորդ ընկաւ վայրենիների աշխարհը: Նրանք գաղափար չունէին գրի մասին և մինչև այդ ճանապարհորդի երևալը գրագէտ մարդու երես չէին տեսել:

Ճանապարհորդն ածտառում իրա համար մի փորրիկ տուն էր շինում, իսկ

վայրենիներից մի քանիսը օգնում էին նրան: Մի անգամ ճանապարհորդը սղոցը տանն էր թողել: Նա թուղթ չըզանելով գրպանում, վեր առաւ տաշեղը և նրա վրայ ածուխով գրեց կնոջը, որ սղոցն ուղարկէ: Տաշեղը տւեց վայրենուն և պատւիրեց յանձնել կնոջը:

Վայրենին զարմանալով բացականչեց. «բայց չէ որ ձեր կինն ինձ կանպատէ, որ ես նրան տալիս եմ այս անպէտք տաշեղը»:

—Ոչ, նա քեզ չի անպատւի, այլ կը տայ, ինչ որ գրել եմ, պատասխանեց ճանապարհորդը:

Վայրենին վերցնելով տաշեղը, հարցրեց. «ինչ ասեմ տիկնոջը»:

—Ոչինչ հարկաւոր չէ ասել, տաշեղը կասէ, ինչ որ պէտքն է, ասաց ճանապարհորդը:

—«Բայց ինչպէս կարող է խօսել փայտի կտորը, միթէ նա լեզու ունի», գոչեց վայրենին:

—Տար այդ տաշեղը և գու կը համոզուես, որ նա խօսում է, վրայ բերեց պարոնը:

Վայրենին տաշեղը տարաւ և տւեց ճանապարհորդի կնոջը: Վերջինս կարգաց և տալով նրան սղոցը՝ պատւիրեց ամուսնուն յանձնել:

Զարմանքից վայրենու բերանը բաց մնաց: Տանելով սղոցը, նա ճանապարհին հիացմունքով պատմում էր իր հարեւաններին, թէ ինչպէս իմաստուն սպիտակները խօսեցնում են փայտի կտորներին:



12. ԳԻՐՎԱՅԻՆ ՈՒ ԱՐՁԸ

Գիւղացին իր բոստանում Գարնանը սերմ էր ցանում, Արջը եկաւ՝ բարե քեզ, Ի՞նչ ես անում քեզ ու քեզ:

Արի, այ մարդ, միամանք,  
 Մէկտեղ անենք վար ու ցանք.  
 Վար ու ցանքը մեր կիսրար.  
 Հունձն էլ անենք հաւասար:

«Աչքիս վրայ արջ ապէր.  
 Յոտը խօմ չէնք կուգես բեր,  
 Հէնց անաջին անգամը,  
 Յանենք սօտիս շողկամը:  
 Ինձ արմատը հողումը,  
 Քեզ փրերն ու ցօղունը»:

— Յանենք, ասաւ ապէրը,  
 Ինձ ցօղունն ու փրերը:  
 Քաղցր ու խոշոր շողկամը,  
 Հողում տողեց աշնանը:  
 Մեր ապէրն ու գիւղացին  
 Շողկամն հողից հանեցին:  
 Ապէրն ասաւ փրերը,  
 Ընկերն արմատները:  
 Արջը տեսաւ որ խաբւեց,  
 Մարդու գէմը քիչ լարւեց,  
 Վայ, ինձ խաբէ՞ գիւղացին.  
 Կաց, էն միւս ցանոցին,  
 Ինչ որ ցանենք հողումը,  
 Նրան կը տամ ցօղունը:

Միւս տարի ցանոցին  
 Արջին ասաւ գիւղացին.  
 «Ապէր, արի էլի մենք  
 Կիսովի մի բան ցանենք,  
 Արջը թէ՛ հն, շատ բարի,  
 Միայն անշուշտ էս տարի  
 Ինձ արմատը հողումը,  
 Քեզ փրերն ու ցօղունը:



«Հա ժածայն եմ ես նորէն»,  
 Էս հետ ցանենք մենք ցորեն:  
 Մարդը գիտէր իր բանը,  
 Ապօրը հետ՝ իր ասանը  
 Ճորենն ածեց սոսորակը,  
 Տւեց նրա շալակը:  
 Տարան ցանեցին արտը  
 Բրգոտ ապէրն ու մարդը:  
 Ընկերները յունիտին,  
 Արան հնձեցին միասին,  
 Մարդը վերցրեց վերը,  
 Իսկ արջը՝ արմատները:



Արջն էլ չըհամբերեց.  
 Հատեղ մի լաւ փրփոեց.  
 — Հում կաթնուկեր, խաբեբայ,  
 Աստաւ կըզան, դու ապա.  
 Տես՛գլուխդ ինչ բերեմ.  
 Միտդ վրէժ բըրբըրեմ:  
 Արջը էպպէս նեղացած,  
 Թքեց մարդին ու զնաց:

13 ԱՏԱՂՁԱԳՈՐԾ ՍԻՄԷՕՆԸ

Մի աշխատատէր ատաղձագործ իր լաւ փաստակի ժամանակ  
 սպրում էր շատ շափաւոր: Նա բաւականանում էր հասարակ շորե-  
 րով, այդպէս էր պահում և իր երեխաներին:

— Ո՛ր ես ծախսում քո զրամը, հարցրեց մի անգամ նրօն իր  
 զրացիներից մէկը:

— Մասամբ ես սխաբաբս եմ վճարում, պատասխանեց ատաղ-  
 ձագործը. — մասամբ էլ տալիս եմ տոկոսով:

— Վահ, ինչ ես ասում, Սիմէօն, գոչեց հարեանը, որքան ես  
 պիտեմ, դու չունես ոչ պարտք և ոչ էլ տոկոսարեք զրամ: Ես ու-  
 նիմ թէ մէկը և թէ միւսը, վրայ բերեց ատաղձագործը: Ահա պատմեմ

Իրամբ, որ ես վճարում եմ իմ գառամեալ ծնողներին, ընդունում եմ իբրև վճարող պարտք, իսկ գառակներին կրթութեան վրայ ծախսածը հաշուում եմ մի գումար, որի սոկոսները արդէն ստանում եմ: Իսկ երբ որ հասնեմ ձերութեան, որդիքս էլ հասակ առնեն, այն ժամանակ կըստանամ նաև ամբողջ գումարը, որովհետև ես յոյս ունիմ, որ որդիքս կը կարողանան վճարել ինձ իմ պարտքը: Ինչպէս իմ ծնողները ոչինչ չըխնայեցին իմ կրթութեան համար, այնպէս էլ ես ոչինչ չեմ խնայի իմ որդոցս համար: Ինչպէս որ ես պարտք ես համարում վարձատրել իմ ծնողներին նրանց արած բարիքների համար, այնպէս էլ ես ժամանակին յոյս ունիմ իմ որդիներից վարձատրութիւն ստանալ:

14 Մ Շ Ա Կ

Բեռը թրկուներին  
Մէջքից կուսցած՝  
Գնում է մշակը  
Թուրքը ցամաքած:

Սլլում է բրաները  
Փոշոս կրեսից,  
Չուել են աչքերը  
Իր ծանր բեռից:

Ինգոււմ են ոտները  
Ոյժ չըկայ վրան,  
Կտարւում է մէջքը  
Ոյժ աւէք նրան...



Այրաւոյնացործ Արմէ՛ճը

Մի աշխատարանէր այրախոյնացործ իր լաւ վաւարակի բոլոր ժամանակամբողջ -  
ցում ապրում էր շաւր չափաւոր: Աս  
բաւականանում էր հասարակ շրթ -  
բուկ այդպէս էր իր երբեմնեւերբն պատում  
- Ուր իս ժախտում ին դրամը. հարցրից  
մի անգամ նրան իր դրամային երկը  
- մասամբ իս պարբիս ի՞մ վճարում, պա  
րասխանեից այրաւոյնացործը, - մասամբ  
էլ արաւիս ի՞մ փոկոսով:

1262-62

15 ՎԵՆԱՆՆ ՕՏԱՐԱԿԱՆԸ

Ծանր ձմեռ էր, ձիւնը երկու արշինից աւել էր հասել:  
Գարնան դէժ յանկարծ սկսեց շոգը: Ձիւնը արագ հարեց  
և շրթը բարձրացան:  
Գետի ափին բնակ ունեւոր իրանց անները, հեռացան:  
Քիայն մի ընտանիք չկարողացաւ հեռանալ: Չուրը յանկարծակի



կարծակի շրջապատեց նրանց սուներ: Սառոյցի կտորները դիպ-  
չում էին խրճիթի պատերին, քիչ էր մնում, որ սուներ հիմնապա-  
տակ լինի: Թշառ ընտանիքը լուսամուտից օգնութիւն էր աղեր-  
սում:

Գետի սպին մեծ բազմութիւն կար: Ամենքն էլ խզում էին,  
շատերը լաց էին լինում, լայց ոչ ոք սիրտ չէր անում օգնելու  
խեղճ ընտանիքին:

Այդ ժամանակ ամբոխից չսկնեց մի օտարական: Նա նստեց  
ձկնորսական նստակը, թիովորեց և յաջողութեամբ մտեցաւ  
տանը: Բայց որովհետև նաւակը փոքր էր, նա կարողացաւ միայն  
երկու մարդ վերցնել: Այսպէս նա կրկնեց երեք անգամ և ազա-  
տեց ողջ ընտանիքը:

Հազիւ նա կարողացաւ ընտանիքի վերջին երկու անգամնե-  
րին օփ իջեցնել, երբ անագին սառցէ կոյտը զարնեց խրճիթին:  
Խրճիթը գողողաց և դղրդիւնով գետին տապալեց:

Մինչդեռ ամենքի աչքերն ուղղւած էին դէպի քանդուող խրճ-  
ճիթը, անձանքին անհետացաւ: Ոչ ոք չըկարողացաւ իմանալ  
նրա անունը:

Քաղաքում սկսեցին սրունել նրան, բայց չըկտան:

16 Մ Ա Ն Կ Ա Ն Ը

Ուրախութիւն բեց անպակաս,  
Ով դու մանուկ սիրելի,  
Մլիս, ծաղկիս ու ծերանսա,  
Տարով պատուդ արժանի:

Որպէս ծաղիկ, մանուկ քաղցր ես,  
Եւ շնորհագից սրպէս օր,  
Մանուկ-մանուկ, ինձ չըխտրես,  
Միշտ կաց այլպէս լուսաւոր:

Մի-հաւնչե Երասրակներ

Ժանք շճի- էր, շիւնը երկու արշի -  
նից աւելի էր նարի:

Գարնան դէժ յաւելարժ սկսեց հալ-  
կըլուցը: Զիւնը արագ հալեց և գրիքը  
բարչրայան: Գիտի ստիճն բնակ-ողնի-  
քը թողնելով խրանց քնեցրը, հի-ն սպանե:  
Միայն մի ընկրանիք չը կարողացաւ ա-  
պար-ի:

17. Գ Ժ Գ Ո Հ Ծ Ա Ռ Ը

Անտառում կանգնած էր մի փոք-  
րիկ ծառ: Տերկների փոխարէն նա  
հազել էր ասեղանման փշեր: Ի՞մ բո-  
լոր ընկերները հրաշայի տերկներ ու-  
նեն դժգոհեց ծառը, — միայն իմ հա-  
զինն են ասեղանման փշեր՝ ոչ ոք չի  
մտակնալ ինձ: Եթէ ինձանից կախում  
լինէր, ես կը ցանկանայի օտկէ տերկ-  
ներ՝:

Վրայ է հասնում գիշերը, և ծա-  
ռը քնում է: Առաւօտեան դարձնում,



տեսնում է, որ ինքն ամբողջապէս ծածկւած է ոսկի տերեւներով:  
„Այժմ ես գո՛հ եմ,—ասաց ծառը,— ոչ մի ծառ անտառում չունի  
ոսկե տերեւներ“:

Բայց երեկոյեան տուրքակը ուսին մի մտբացկան անցնում էր անտառով. նա տեսնում է ոսկե տերեւները, պոկոտում է թուրբը և սքազ-արագ շարունակում իր հանապարհը, թողնելով ծառը մերկացած ճիւղերով:

«Ափսոս իմ ոսկե տերեւները, գանգաւում է ծառը,— ամաշում եմ միւս ծառերից. նրանց վրայ այնպիսի սքանչելի տերեւներ կան: Եթէ ինձնից կախւած լինէր՝ ես կը ցանկանայի ինձ համար օտակեայ տերեւներ“:

Ծառը քնում է կրկին: Առաւօտեան գարթնում է և նորից տեսնում, որ ամբողջովին գուգւած է ապուկեայ տերեւներով:  
„Ի՞նչ գեղեցիկ եմ: Այժմ ես գո՛հ եմ,—ասաց ծառը,— ոչ մի ծառ անտառում այնպէս չի փայլում, ինչպէս ես“:

Յանկարծ փոթորիկ է բարձրանում ու ծառերը շարժում. թռչում-անցնում է ապակեայ տերեւների վրայով— և անա թափւած են նրանք կանաչների մէջ՝ բոլորովին փշրւած:

„Իմ ապակիներն ընկած են կանաչների մէջ,—լալիս է ծառը,— իսկ միւս ծառերը անա կանգնած են իրանց կանաչ տերեւներով. եթէ ես էլ ունենայի այնպիսի կանաչ տերեւներ“:

Ծառը քնում է և առաւօտը գարթնելով, տեսնում է, որ դարդարւած է կանաչ տերեւներով: Փայտում է ծառը ու ասում.—  
„Ա՛յ, ես էլ ունիմ նրանց նման տերեւներ, ես այժմ շեմ ամաշում“:

Յանկարծ մօտ է փայլում մի այժ նա խոտ կամ կանաչ էր փնտրում, որ ուտի և աւելի շատ կաթ տանի իր ուլիկներին:

Նա տեսնում է տերեւները և ասանց երկար մտածելու, ուտում է բոլոր կանաչները ու փոքրիկ ոտերը: Եւ անա ծառը կրկին կանգնած է մերկ: Այն ժամանակ նա ասում է — Այլնս ես չեմ ցանկանում ոչ մի տեսակ տերեւ: Երանի թէ ունենայի իմ ասեղները: Եւ նա տխուր սրտով քուն եղաւ, արտաք էլ գարթնեց առաւօտեան: Լուսացաւ. արեգակի լոյսով նա նայեց իր չորս կողմը և երկար ու ուրախ ծիծաղեց: Նրա վրա կային իր նախկին ասեղները:

18. ՓԱՅՏԱՀԱՏՆ ՈՒ ՄԱՀԸ

Ծերն հազարով, կըլտարով,  
Թոյլ ճնկներին զօս տարով,  
Մէջքից ցախը վեր առաւ,  
Նստեց այսպէս սուգ արաւ.  
— Ես տուն ունիմ՝  
Գուռ չունի,  
Թոնիր ունիմ՝  
Խուփ չունի,  
Չիւնն է ծածկել գոնակս,  
Փայտն է մաշկել կոնակս,  
Ես ձեր... անցած...  
Տընով քաղցած,  
Հա մերկ... հա գուրկ...  
Տալիք ու տուրք...  
Խարճ ու խարած...  
Լեզուս է կարճ...  
Վայ, վայ, վայ վայ,  
Ո՛ւր ես սև մահ,  
Այս էլ ապրիւտ...:  
Մին էլ պուպուտ  
Մահը թէ՛ «հա»,  
Ծերուկ, ի՞նչ կայ...  
— Ասումս վկայ,  
Ոչինչ չըկայ.—  
ձաքած լեզին,  
Մոմից դեղին,  
Կըմկըմալով,  
Լեզւին տարով,  
Ծերուկն ասաւ,  
Մինը չըկար,  
Որ էս փայտը շալակս տար:

Ապրես տեսար,  
 Ինչ շուտ հասար.  
 Բան մի կարծի...  
 Փայտն ինձ բարձի  
 Դու յիտ դարձի:

19. ԴՓԱՍԻՐՏ ՀՆՂԿԱՅԻՆ

Հնդկացիները դերի վերցրին մի երիտասարդ անգլիացու, կապեցին ծառին և ուղում էին սպանել:

Մի ծերունի հնդկացի մտանցաւ նրանց և ասաց.

—Միք սպանիլ նրան, այլ ինձ յանձնէք:

Նրան յանձնեցին ծերունուն:

Ծերունի հնդկացին ազատեց անգլիացուն, տարաւ իր խրճիթը կերակրեց, ամբողջ գիշեր իր մօտ պահեց: Առաւօտեան հնդկացին իր հետ առնելով անգլիացուն՝ ճանապարհ ընկաւ: Նրանք երկար գնում էին և երբ հասան անգլիական սահմանագլխին՝ հնդկացին ասաց.

—Չերոնք սպանեցին իմ որդուն, բայց ես խնայում եմ քեզ. այժմ գնա՛ ձերոնց մօտ և շարունակեցէք սպանել մեզ:

Անգլիացին զարմուցաւ և տասց.

—Ինչո՞ւ ես ծաղրում ինձ. ես գիտեմ, որ մերոնք սպանեցին քո որդուն, դու էլ սպանիք ինձ:

Այդ ժամանակ հնդկացին պատասխանեց.

—Երբ ուզում էին քեզ սպանել, ես յիշեցի իմ որդուն և խրդճացի քեզ. ես չեմ ծիծաղում, այլ ասում եմ՝ գնա՛ ձերոնց մօտ և էլի սպանեցէք մեզ:

Արտասաւալից աչքերով կրկնեց ծերունին և արձակեց անգլիացի անվեհեր երիտասարդին:



20. ՆԱՄՈՒՍ ՌԻ ԴԷՅՐԱԹ

Դեռ թոթովախօս մի մանուկ էի,  
 Եօթը տարեկան անգամ չըկայի,  
 Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուն՝  
 Մի սրբազան խօսք և դա էր՝ «նամուն»:

Գպրոցի շէմբին դեռ ասք չըգրած,  
 Դեռ նոր էի ես գիրք ձեռքս առած,  
 Երբ մօրս համբոյք թըջեց իմ ճակատ  
 Աւ պատիրեց ինձ, անել միշտ «դէյրաթ»:

Բայց կարճ մնացի ուսումնարանում,  
 Աղքատի բախար գէ ինչ է լինում...  
 Հօրըս պատէրով սովորեցի արհեստ,  
 Սիրեցի նրա վաստակը համեստ:

Եւ այն օրից յիտ,  
 Երբ ընկերացայ մուրճ ու սայի հետ,  
 Քրտինքը գէմքէս ծորում է կաթ—կաթ  
 Աւ ինձ յիշեցնում նամուն ու դէյրաթ:



21. ՈՍԿԻ ԿՍՅԻՆ

1.



Մի խեղճ գիւղացի գետափին ծառ էր կըտրում: Յանկարծ կացինը դուրս պրծաւ ձեռքից և ընկաւ ջուրը:

Գետը խորն էր, գիւղացին չէր կարող այնտեղից հանել իր կացինը: Խեղճը յուսահատութիւնից նստեց գետափին և սկսեց լաց լինել:

Ձրի ոգին խղճաց նրան. ծերունու կերպարանքով դուրս

եկաւ ջրից. ձեռքին բռնած մի ոսկէ կացին և տապ.

—Այս է քո կացինը:

Ոչ, պատասխանեց գիւղացին:

Ծերունին ցոյց տւեց նրան մի արծաթէ կացին և նորից հարցրեց.

—Այս է քո կացինը:

—Ոչ, ոչ, պատասխանեց գիւղացին, իմ կացինը երկաթի է:

—Իսկ որ չը ցանկացար ոչ ոսկին և ոչ էլ արծաթը. առ ուրեմն քո կացինը. նրա հետ և այս երկու կացինը:

Գիւղացին շատ ուրախացաւ, որ իր ճշմարտախօսութեան համար այսպէս առատ վարձատրուեց. նա գնաց գիւղը և պատմեց բոլորին իր հետ պատահած դէպքը:

Հարուստ գիւղացիներից մէկը, որ ամենից ազահն էր, նախանձելով աղքատ հարեանի բողոքին, միւս օրը գնաց գետափը և հէնց նոյն տեղը ձգեց իր երկաթէ կացինը: Ապա նստելով գետափին, սկսեց սուտ լաց լինել:

Իուրս եկաւ նոյն ձերբունին ձեռքին բռնած մի ոսկէ կացին և հարցրեց:

—Այս է քո կացինը:

—Այո, այո, այո է իմ կացինը, բացականչեց ազահը:

Շատ բարի. եթէ քոնն է, կարող ես վերցնել,—ասաց ձերբունին և կացինը գետափին դնելով, ինքն անհեռացաւ:

Ազահը մտտեցաւ. ոսկէ կացինին. կուացաւ որ վերցնէ, գլխի վայր ընկաւ ջուրը և տեղնուտեղը խեղդուեց:



### Ասանդուխտը

Այսպէս լինելով մի ասանդուխտ էր դրւա՛ծ: Թէպէտ ասանդուխտի բոլոր աստիճանները միմիայն հաւասար էին, բայց վերին աստիճանը հպարտութիւնով էր նայու՛մ ներքին աստիճանի վրայ:

Մէկ մարդ ասանդուխտի ծայրով անցնելիս նկատեց այդ բանը և շրջից նրան վրաբար: Աւ գոռոյ աստիճանը ընկաւ ասիւնից ցածր վրայ:

### 22. ԽՈՁՆ ՈՒ ԿՍՂՆԻՆ

Մի գարեհոր կաղնու տակ  
Խողը ազահ ու անյազ  
Էնքան կաղին զըխուեց,  
Որ ցած ընկաւ ու փուեց.  
Փուեց, չուեց ու քնեց,  
Բնեց, քնեց, որ զարթնեց,  
Գունչը տարաւ ու մէկից

Ծառը փորեց պինդ տակից:  
,Քո արածը, սպասէ,  
Չէ որ ծառին փոստ է.  
Նա կըչորնայ արևից՝,—  
Ազահն առաւ վերևից:  
—Չորանում է՝ չորանայ,  
Ինձ ինչ օգուտ որ մնայ,



Իսկի էլ չեմ ափոտում,—  
Տակից էն խոզն էր առում.  
Միայն կաղին ունենում,  
Ուտեմ, ուտեմ, գիրա-

նամ:

— Այ տպերախա խոզենի,  
Ով քեզ նման վիզ ունի,  
Իր կայր աչքով չի տեսի,  
Ար կաղինը հիւթալի  
Կանաչ ճիւղերս են տալի.—  
Ասաւ կաղինն խոզուկին՝  
էն կախղուխ կուզիկին:



24 Օ Ն Ա Ն Ը

Օհանը իննը տարեկան էր, նա սրբ էր, ոչ հայր ունէր և ոչ էլ մայր: Նրան խնամում էր իր պապը, որին գիւղում Մակար բիծա էին կանչում: Մակար բիծան ազգատ լինելով, Օհանին տարաւ քաղաք և աշակերտ տւեց կոշիակար Պօղոսի մօտ:

Թաթախման երեկոն էր: Կոշիակարը և իր կինը դնացել էին եկեղեցի: Օգուելով աւրերի բացակայութիւնից, Օհանը զրպանից հանեց մի կտոր սորբում թուղթ, դարակից վերցրեց կոշիակարի ժանդոտած գրիչը ու թանաքամանը և այս ամենը գրեց սեղանի վրայ: Նա նայեց լուսամտուտից դուրս և համոզւելով, որ ոչ ոք չը վրայ, չոքեց ցածիկ սեղանի մօտ, այն քաշեց և հետեւեալ նամակը գրեց իր պապին.

«Ի սիրելի Մակար պապի, շնորհաւոր Մնունդ և Մկրտու-  
թիւն: Ցանկանում եմ քեզ երկար կեանք և առողջութիւն: Ես որբ եմ, ոչ հայր ունիմ և ոչ էլ մայր. Գու ինձ համար հայր էլ ես,

մայր էլ: Եթէ իմ կողմանէ կը հարցանես, դրութիւնս շատ վատ է: Երէկ վարպետս մի լաւ ծեծեց ինձ, որովհետև երեխային օրօրելիս քունս տարել էր: Անցած օրն էլ տանախիկնս ինձ մի ձուկ էր աւել մաքրելու: Ես պոչից էի սկսել մաքրել: Նա ձուկը խլեց ձեռքիցս, մի քանի անգամ հասցրեց քիթ ու պռունկիս, որ այլ ևս չը սխալեմ: Բանւորները ծիծաղում են ինձ վրայ. գոնազան անուններ են տալիս: Նրանք ինձ ուղարկում են խանութից արաղ բերելու: Մարդ ու կին ամեն դատարկ բանի համար ինձ ծեծում են և վատ են կերակրում: Ասաւօտը ինձ տալիս են մի կտոր չոր հաց, ճաշին մի աման ապուր, երեկոյեան էլի մի կտոր չոր հաց: Ինձ քնեցնում են սառը հաշտում: Երբ երեխան լաց է լինում, ես պէտք է նրան օրօրեմ: Այնպէս է պատահում, որ սղջ գիշերը աչք չեմ կպցնում:

«Իմ թանկագին, իմ աչքի լոյս պապի, ի սէր Աստուծոյ ինձ հանիր սրանց մօտից և գիւղ տար, այլես չեմ կարող ապրել: Ազաչում եմ, ձեռքդ եմ պաշում, ինձ գիւղ տար»:

Օհանը սկսեց ընկալել սրբեց արտասուքը և լացալուծած շարունակեց.

«Ես քեզ համար կաղօթեմ Աստուծոն, գիւղի ոչխարը կը պահեմ, մշակ կը մանեմ ուրիշի մօտ, ամեն ինչ կանեմ, միայն թէ ինձ գիւղ տար: Այս քաղաքում ոչ ոչխար կայ, ոչ այծ, ոչ կով և ոչ էլ գոմէշ... Ռեզում էի փախչել այսանդից, սորով գալ գիւղը, քայց արեխներս մաշել են, բոբիկ սորով չեմ կարող գալ, ցուրտ է»:

«Ի սէր Աստուծոյ արի ինձ գիւղ տար, Մնամ քո Օհան. պապի ջան շուտով արի»:

Օհանը թուղթը չորս տակ ձայեց և գրեց ծրարի մէջ, որ նախորդ օրը գնել էր մի կոպէկով: Ապա մի փոքր մտածելուց յետոյ խոշոր տաւերով գրեց ծրարի վրայ. «մեր գիւղը, Մակար պապիս»:

Վերջացնելով հասցէն, Օհանը վագեց փողոց և թանկագին նամակը ձգեց մօտիկ արկղը..

Այս գիշեր Օհանը հանգիստ քուն եղաւ, երազի մէջ տեսնում էր, թէ ինչպէս պապը ստացել էր թուղթը: Նա որոնում էր գիւղի տիրացուին, որ կարգացնել տայ թոռնիկի նամակը:



# Օհանք

Օհանք իննք քաւրիկան էր: Դա որք էր, ոչ հայր ու նէր և ոչ էլ մայր: Դրան իննածու ծ էր իր պապը, որին գիւղու ծ մակար քրժա էին կանչու ծ: մակար քրժան անխաբ լինելով, Օհանին քարաւ փաղափ և աշակերտք քուրց կոչկակար Եջոզուի Ծօր:

## 25. Ո Ր Բ Ի Կ

Մերկ ու թուլակազմ երկար այս աշխարհ և և մօրդ գրկում կաննէիր հանգիստ. Ի՞նչ էր դաննութիւն, չարչարանք ու վիշտ Քեզ ծանօթ չէին, խողաղ էր հոգիդ:

Իայց միայն, աւանդ մանր տարածում Տառնպեակ մօրդ դրաւ գերեզման, և քեզ, խեղճ դաննուի, որք, անօգնական թողեց օտարի մշտափակ դանն:



Ի՞նչ է ուզում՝ անկ ազատք: Երա կտուցը՝ յանձն՝ ա՛լ է ջրին



Ազատք իր կտուցով ի՞նչ է ուզում՝ անկ ջրի շեր:



Ի՞նչ է ուզում՝ անկ ազատք իր մ'արմուկ:



Այնուհետև ի՞նչ է անում



Ազատք շա՞տ քարի կտորներ ցրեց շի մ'էջ: Ի՞նչ կուս յետանքը: Իրոնցէր «Թերսի ազատի» իրարանչիւր պատկերը, նախ պատմեցէր և ապա գրեցէր շուրթի լովանդակութիւնը:



27 ԽԱՂՆԿԵՐՆԵՐ

Մի փոքրիկ գաւառական քաղաքումն էր տեսածս, պատմում էր լուսինը: Պանդոկում նստած էր արջ-պարածողը և իր ընթրիքն էր անում: Դուրս փայտէ սիւնից կապած էր արջը: Նա սարսափելի տեսք ունէր, թէպէտ իր կեանքում ոչ ոքի վնաս չէր արել:

Վերնատան սենեակում իմ պայծառ շողերի մէջ խաղում էին երկու փոքրիկ երեխաներ. մեծը վեց տարեկան կը լինէր, իսկ փոքրը չորս տարեկան:

Թրմիկ-թրմիկ, մէկը սկսեց բարձրանալ սանդուխքով. ո՞վ պիտի լինէր:

Դուռը լայն բացուեց.— արջն էր եկողը, տնազին բրդոս արջը: Զանձրացել էր խեղճը ներքեւում և ահա գտել էր սանդուխքի ճանապարհը:

Մանուկներն այնպէս սարսափեցին, տեսներով այդ տնազին

կենդանուն, որ ամեն մէկը մի անկիւն մտաւ: Արջը երկուսին էլ գտաւ, հաստեց իր լայն դնչով և ոչինչ չարեց նրանց:

Ի հարկէ, սա մի մեծ շուն է, ասացին նրանք և սկսեցին փազաքշիլ նրան: Արջը սրտիկեց յատակի վրայ, կրտսեր սղան սկսեց նրա վրայ թաւալել: Սպա մեծ եղբայրը բերեց մի թրմբուկ և սկսեց գարկել: Թմբուկը թնդաց. արջը վեր կացաւ. կանգնեց յետին սաների վրայ և սկսեց պար գալ:

Մէկ ուրախութիւն էր սր...

Մանուկներից ամեն մէկը վերցրեց մի փայտէ հրացան: Այգպիսի մի հրացան էլ արջին տւին: Մի շատ լաւ ընկեր էին գտել և անդադար բարձր-բարձր կանչում էին. «Մէկ-երկու մէկ-երկու»:

Այդ ժամանակ մէկը գուռը բացեց, մանուկների մայրիկն էր:

Պիտի տեսնէիք նրան, նրա սնխոս սարսափը, նրա կտաւի պէս սպիտակած երեսը, նրա կիսարաց բերանը, չոած աչքերը:

Բայց մանուկներից փոքրիկը ուրախ գլխով արեց և բարձր ասաց մայրիկին. — մենք գինւորներ ենք խաղում:

Եւ հէնց այդ ժամանակն էր, որ ներս մտաւ արջ-պարածողը:

28. ՄՕՐՍ

Անդժօր, յոգնած թափառում եմ  
Տանջւած սիրաբա ցաւով լիք,  
Սրախդ նման սիրտ չեմ գըտնում  
Դարդով լցւած իմ մէրիկ:

Կուգեմ կտրել ծով ու ցամաք  
Հասնել քեզի, իմ մայրիկ,  
Դարդըս պատմել, դարդիդ խառնել,  
Որ միտսին լաց լինինք:

Խորթ մօր պէս են ինձ փայփայում  
Օտար երկինք ու հովեր,  
Ա. խ, ինձ տւէք իմ երկինքը—  
Կարօտ մօրս արցունքներ,

I.

Մեննում էր մի ժլատ հարուստ: Այս հարուստը իր կեանքում ոչ որի լաւութիւնն չէր արել և այսպիսով դիզել էր իր համար մեծ հարստութիւնս:

Նրա կարծիքով փողը այս կեանքում ամեն ինչ էր:

Եւ անա այժմ, երբ մօտեցել էր մահուան ժամը, նա մտածում էր. թէ երեի այն աշխարհումն էլ փողը ամեն ինչ է, ուրեմն պէտք է նախապէս պատրաստել, որ այնտեղ մարդ կարիք չունենայ:

Նա կանչեց իր սրբիներին և վերջին հրաժեշտը տալով՝ հրամայեց դազադում իր կողքին դնել փողով լիքը քսակ:

Սրբիները կատարեցին իրանց ծնողի վերջին կամբը և միքանի հազար ոսկի ամեցին դազադի մէջ:

Այն աշխարհում նա սոստիկ քաղց և ծարաւ զգաց:

— Ի՞նչ պէտք է անեմ, կորած եմ այստեղ, — մտածում էր նա:

Յանկարծ տեսնում է մի ճոխ սեղան զանազան համեղ ուտելիքներով և ըմպելիքներով:

— Այժմ կարող եմ պարծենալ, — ասում էր նա ինքն իրան, — որ կարողացայ առաջուց իմանալ, թէ այստեղ էլ ամեն բան այնպէս է, ինչպէս մեզանում: Ի՞նչ լաւ արի, որ հետս փող վերցրել:

Եւ մեծ ուրախութիւնով շոշափելով փողով լիքը քսակը՝ մօտեցաւ սեղանին:

— Ի՞նչ արժէ, — խորխա ձայնով հարցնում է նա տիրոջը, հոյց տալով թանկագին ուտելիքներից մէկը:

— Մէկ կոպէկ, պատասխանում է տէրը:

— Արժան է, — մտածում է հարուստը, — չեմ կարծում, որ այսպէս լինի: Անպահ, մէկ ուրիշի մասին հարցնեմ:

— Իսկ սա ինչ արժէ, — ցոյց է տալիս նա տաք-տաք համեղ կարկանդակը:

— Իս էլ մէկ կոպէկ արժէ, — պատասխանում է սեղանի տէրը և ժպտում:

Եթէ այդպէս է, այն ժամանակ խնդրում եմ մի ամանի մէջ

ուէք ինձ տասը հատ այս կարկանդակներից, հինգ հատ էլ միւսներից:

Սեղանի տէրը լսում է նրան սոսանց շատպելու:

— Մենք փողը առաջուց ենք առնում, — ասող կերպով յայտարարում է նա:

Փողը... ուրախութեամբ:

Այս ասելով հարուստը հանեց մի հատ ոսկի և աւեց նրան: Տէրը վերցրեց ոսկին, նայեց, շուռ ու մուռ աւեց և ասաց.

Ո՛չ, սա այն կոպէկը չէ. — և յետ վերադարձրեց:

2.

Նառ տիրեց և վերաւորեց մեր հարուստը:

— Ա՛յ քեզ բան, — մտածեց նա, — ուրեմն սրանք միայն կուպէկներ են վերցնում: Չարմանք... Պէտքէ ուրեմն մանրացնեմ:

Նա խկոյն վազում է սրբիների մօտ և տսում:

Յետ վերցրէք ձեր ոսկիները, ինձ հարկուսը չեն, սրանց փոխարէն լցրէք քսակը կոպէկներով, թէ չէ կորած եմ:

Սրբիները վախեցած միւս օրն և եթ կատարում են հօր պահանջը և լցնում են քսակը կոպէկներով:

Հայրը, վերցնելով փողն՝ ուրախացած վազում է սեղանի մօտ և բարձր ձայնով կանչում:

— Այժմ ինձ շուռ ուտելու բան ուէք, սովից մեռնում եմ:

— Մենք փողը առաջուց ենք առնում, — լսում է նոյն ստոր և չոր պատասխանը:

— Համեցէք, համեցէք... ասում է խկոյն հարուստը, քսակից մի բուռը փայլուն կոպէկներ հանում և ամում սեղանի վրայ: — Վերցրէք, միայն թէ ինձ ուտելու բան ուէք...

Տէրը նոյն սառնութեամբ դիտեց այդ փողերը և ծիծաղեց:

— Ինչպէս տեսնում եմ, դուք շատ քիչ բան էք տեսել և սոփորել այնտեղ, ձեր աշխարհում: Մենք այստեղ ընդունում ենք ոչ թէ այն կոպէկները, որ ձեր ձեռքին են այժմ, այլ այն, որ դուք ուրիշների ձեռքն էք դրել: Մտաբերեցէք, դուցէ դուք երբ և իցէ տեղ էք այդպիսի կոպէկներ մուրացկաններին, օգնել էք աղքատներին:

Հարուստը ցած դցեց իր աչքերն ու ընկաւ խորը մտածմունքի մէջ:

Նա իր կեանքում երբէք ողորմութիւն չէր արել:

### Յոզնամ իրկիրը

Կոչուն ապրող իրը կապոյտ իրկնում  
 Իրգում ին անուշ միասին խոսքում,  
 և զգուշութամբ կամայ ին իրգում,  
 չը վարթեցրնին իրկիրը ներիամ:  
 Ահա, ամբողջ օրը չբրզող ուրեքից,  
 անվերջ աշխատող կուռ բազուկներից,  
 ամուր բարախող մարդկանց արարից  
 խիղճ մայր-իրկիրը սասարիկ է յոզնամ...

### 31. ՄԵՐ ՉՈՒՉԻԿԸ



Ես, եղբայրս և բոլորս փոքրիկ  
 երեխաներ էինք, երբ մի օր մեզ մի  
 մեծ դժբախտութիւն պատահեց:

Առաւօտը, նոր էինք վեր կացել, որ մեր ծառան յայանեց, թէ գոգերը մտել և մեր բոլոր հաւերն ու աքաղաղը տարել են: Խորին կսկիծով վազեցինք պարտէզ, գէպի հաւանոցը, և ահա, տեսանք նա գատարի: Հիմա հաս-

կացանք, թէ ինչու մեր սիրելի Չուշիկը— փոքրիկ շունը, գիշերն այնպէս անդադար հաշում էր ու մէկ վազում գէպի բակի դուռը, մէկ գէպի պարակըր, ուր գտնուում էր հաւանոցը:

Այդ առաւօտ մեր թէյը զլիններուս խոով կզաւ. երեքս էլ զլիտարաց ընկել էինք գէս ու գէն „Չու Չու“ կանչում, բայց ոչ մի տեղից չէր լուսում մեր հպարտ աքաղաղի ծուղրուզուն ու շատախօս հաւերի կշիշոցը. իսկ Չուշիկը մէկ վազում էր գէպի փողոց, մէկ գէպի մեզ. նա էլ անկեղծօրէն մասնակից էր մեր վրշտին, և ինչո՞ւ չըպիտի ինքն էլ տխրէր, քանի որ խաղի ընկեր էր նա հաւերի և աքաղաղի հետ: Իսկ մեր վիշաք մեծ էր, որովհետև մենք ունէինք հաւերի մէջ մեր սիրելիները, որոնց անուններ էինք զրել և սաներին զոյն—գոյն թելեր կապել:

Մայրս պատւիրեց ծառային, որ առաւօտեան բանը վերջացնելուց յետոյ գնայ մեր տան ետևում ընկած թաղը հարց ու փորձ անէ, սրտէ հաւերին:

Մենք չէինք կարող համբերել մինչև ծառայի բանից պարտնելը, բայց վախենում էինք գնալ, որովհետև այդ թաղում կային ծուռ ու մուռ, մութն ու նեղիկ փողոցներ, աղքատիկ աներ՝ այնտեղ լինէր փողոցի անկարգ աղաներով, որոնց բանն ու գործը գոգութիւն անեմ էր:

Մի բէշ քաշ գալուց յետոյ որոշեցինք, ինչ էլ որ լինի, զընանք որոնելու:

Եւ երբ Չուշիկի հետ կանգնել էինք դարբասի առաջ փողոցում, մեր շնիկը զետինք հոտոտեց, նայեց վեր ու վար և մէկ էլ յանկարծ զլուխը բարձր բռնած, վազեց գէպի վերև: Մենք էլ ընկանք նրա ետևից. անցանք մի քանի ծուռ փողոցներ. յետոյ Չուշիկը մտաւ մի սրահ, կանգնեց մի հասարակ շէնքի փակ դռան առաջ և բարձր, բարձր հաջեց. այդ միջոցին՝ ահա մէկ էլ փակ դռան ետևից լուսեց մի ուրախ ծուղրուզու, մեր աքաղաղի ծանօթ ծուղրուզուն, նրանից յետոյ հաւերի ազմկալի կշիշոցը: Մեր ուրախութեանը չափ չըկար:

—Գտանք, գտանք. ուրախ գոչեց բոլորս, իսկ եղբայրս զլիտապատառ վազեց տուն ծառային բերելու: Մենք էլ պահապան կանգնեցինք:

Չուշիկը անսիրտ հաջուճ էր ու գուռը չանկուճ, ներսից էլ ծուղրուղուի և կշկշոցի մի այնպիսի իրարանցում կար, որ սուս էլ չի լինի:

Մի քիչ անց վազեվող եկան եղբայրս ու մեր ծառան՝ ձեռքին մի կացին:


Ծառան էլ ոչ մի բանի չսպասեց, կացնի կոթով ուրեց դասն ախր, կտորեց փականքը և գուռը բացեց... Ի՞նչ ուրախութիւն, մեր բոլոր հաւերը աքաղաղի հետ գլարթ դուրս թռան բանախից: Աքաղաղն ու Չուշիկը իրար մօտեցան, բարևորան, յետոյ աքաղաղը հաւաքեց հաւերին, իր ընտանիքի անդամներին. թեև բթաթ աւեց և մի գիլ ծուղրուղու կանչելով, առաջ ընկաւ. նա այնպէս երջանիկ էր, տես, նորամիտայ էր, հարսանիք էր գնում, կատարը ցից բռնած, հպարտ-հպարտ քայլելով: Չուշիկն էլ՝ պոչը պրօշակի պէս բարձր բռնած՝ հեռուում էր հաւերին. և մենք բոլորս գերութիւնից ազատած մեր սիրելիների հետ յաղթական ընթացքով եկանք տուն:

Չմտանամ ասել, որ մեր պատահական Չուշիկը, որին պարտական էինք մեր հաւերի գանձելով, այդ օրը մեզ հետ սեղանի բազմեց, ինչպէս մի պատուաւոր հիւր:

32 ՄԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Ինչ ձէն, ինչ ծուկ,  
Ինչ աղմուկ,  
Իր ծակիցը  
Ոչ մի մուկ  
Դուրս չէր հանում գոշիկը,  
Չար կատուն էր ընջիկը:  
Սով է, սով է Մկտան  
Կառուի ձեռքից լլստան:  
Գիլըն ընկաւ դռնէ դուռ,  
Գիւղամէջը շուռ ու մուռ,  
Էլ չբխողեց գուռ-կառուր,

Չաճել, աճել գեղովի,  
Չոջերին շոկ, աեղովի  
Կանչեց բերեց ժողովի,  
Թէ ինչ անեն, որ կատէն  
Մի հնարքով ապտաւեն:  
Եկան գիւղի շոջերը,  
Երկար բարակ պոչերը,  
Մասնակցեցին խորհրդին:  
Մի շոջ լսուեց իր հերթին.  
„Մէրը, մոնուկ ուրացած,  
Ծակերի մէջ կուրացած.



Լսէք, մկներ ցեղակից,  
Չունեմ որդի, կողակից.  
Ես մի անուէր ծերուկ եմ,  
Բայց պատուաւոր մի մուկ եմ  
Պակսեց ուժը իմ ոտի,  
Պէտք է մեռնեմ անօթի.  
Էլ չեմ կրժի չորթանը,  
Էլ չեմ ծծի ես թանը.  
Մահս է կանգնել դռանը,  
Սով է դրկել Մուտանը,  
Մի մուտանը, մուտանը,  
Վեր է ընկում մառանը:  
Հէջ նման չի դազանի,  
Ինչքան ասես նազ անի,  
Ստից ստակի տազ անի,  
Մեզի տեսնի, վազ անի,  
Դիւսից բռնի կախ անի.  
Թաթովը տայ խազ անի,  
Ուտի, քէֆը չազ անի:

Էսպէս գուլում ու կրակ,  
Դեռ աչքերն էլ Չախա ճրագ:  
Բայց թէ ազնիւ մեր ցեղը  
Կորչերու չի գուր տեղը.  
Ցան էլ ունի իր դեղը:  
Հանք, հանք  
Հրամանք,  
Կառուի գոշին դէմ առանք:  
Սյ բերել եմ  
Ես մի գանգ.  
Ծափ ծնոց,  
Մէջը գնոց,  
Կառուի վզից  
Մենք կախ տանք.  
Որ ինչքան էլ օրօրայ,  
Որ ինչքան էլ շօրօրայ,  
Ստից ստակի,  
Տազ տանի,  
Գալն իմանանք

Գազանի։  
 Է, գանդը մի կախ անի։  
 —Ալօ, դնւ,  
 «Ալօն տանի»,  
 —Բալօ դնւ,  
 «Բալօն կախէ»,  
 —Չալօ դնւ։  
 «Չալօն կաղ է»,  
 —Մասօ, դնւ։  
 «Մասօն կարճ է»,  
 —Փասօ, դնւ։  
 «Էդ էլ խիղճ է»,  
 —Նամբօ, դնւ։  
 «Ես տկար եմ»,  
 Չամբօ, դնւ։  
 «Ես տանաւեր եմ»,

—Սադօ, դնւ։  
 «Սաենք տարնայ»,  
 Բա որ կատուն  
 Գայ ինձ վրայ»։  
 —Բաօն, Խաօն թող մէկից  
 Բունեն կատուն քամակից.  
 «Ի՞նչ է խօսում չոր գանդը,  
 Էտ է դու տար էդ գանդը»  
 էլ ի՞նչ Բաօ, ի՞նչ Փասան»,  
 ճասաց Բաօն ճատճասան։  
 —Լոխ, յանդունդն,  
 Կոտորէք դուք.  
 Վախկոտներիդ ես թաղեմ.  
 Ճառ տտեմ, թէ՛ գանգ կախեմ»,  
 Գոչեց ջոջը,  
 Քաշեց պոչը։

33 ԱՌԻՒՄՆ ՈՒ ՇՈՒՆԸ



Մէկ քաղաքում ցոյց էին տալիս վայրենի գազաններ և իրրե վարձ ստանում էին փող կամ շուն ու կատու, գազաններին ուտեցնելու համար։ Մէկ մարդ կամեցաւ նայել գազաններին. նա փողոցում մի շուն բռնեց

և բերեց նրան գազանանոց։ Նրան ներս տարան նայելու, իսկ շանը՝ ձգեցին առիւծի վանդակը։ Շունը պոչն իրան քաշեց և կուչ եկաւ վանդակի անկիւնում։ Առիւծը մօտեցաւ նրան և սկսեց հոտտանել։ Շունը պարկեց կռնակի վրայ, թաթերը բարձրացրեց և սկսեց պոչը շարժել։ Առիւծը թաթով նրան շուռ տւեց։ Շուռ

նը վեր թռաւ տեղից և կանգնեց յետին սաքերի վրայ, առիւծի առաջ։ Առիւծը նայեց շանը, գլուխն այս ու այն կողմ դարձրեց, բայց չըդիպաւ նրան։ Երբ տէրը միս ձգեց առիւծի առաջ, սա մի կտոր կտրեց կերաւ, իսկ մնացածը թողեց շանը։ Երեկոյեան, երբ առիւծը պառկեց քնելու, շունն էլ նրա մօտ տեղաւորեց և գլուխը դրեց առիւծի թաթերի վրայ։


Այդ օրից սկսած շուն բնակւում էր առիւծի հետ միեւնոյն վանդակում։ Առիւծը չէր զիպչում նրան, ուսում էր կերակուրը քնում էր նրա հետ միասին, երբեմն էլ խաղում էր հետը։

Մէկ օր մի պարոն գազանանոցն եկաւ և տեսնելով շանը, ճանաչեց. նա յայտնեց որ շունն իրանն է և խնդրեց գազանանոցի աիրոջը վերագարձնել։ Տէրն ուզեց սալ, բայց հէնց որ սկսեցին շանը կանչել, որ դուրս հանեն վանդակից, առիւծը ցընցւեց և մռնչաց։ Այսպէս մի ամբողջ տարի առիւծն ու շունը միացին միեւնոյն վանդակում։ Մի տարուց յետոյ շունը հիւանդանաւ և ստակեց։ Առիւծը վշտից էլ չէր ուտում, այլ միշտ հստատում և լիզում էր շանը, շարժում էր նրան թաթով։ Երբ որ նա հասկացաւ թէ շանը ստակել է, յանկարծ վեր թռաւ տեղից, ցնցւեց և սկսեց պոչով կողքերին խփել, յարձակւել վանդակի պատերին և կրծել նիւթերն ու յատակը։

Ողջ օրը նա զարկւում էր վանդակի այս ու այն կողմին և մռնչում էր, իսկ վերջը պառկեց ստակած շան կողքին և լռեց։ Տէրը կամեցաւ դուրս հանել շանը, բայց առիւծը ոչ ոքի թոյլ չէր տալիս մօտենալ։

Տէրը մտածեց, որ առիւծն իր վիշտը կլմստանայ, եթէ մի ուրիշ շուն արւի, ուստի ձգեց առիւծի վանդակը մի կենդանի շուն։ Սակայն առիւծը պատտապատտա արեց նրան։ Ապա նա գրկեց ստակած շանն իր թաթերով և այսպէս անշարժ մնաց հինգ օր։ Վեցերորդ օրն առիւծն էլ ստակեց։





Ո՞ր է նստած թռչնակը և ո՞ր  
կղանակին:



Ո՞վ տեսա թռչնակին և ի՞նչ  
արաս:



Ո՞րտեղ էր սպրում՝ ձմեռը  
թռչնակը:



Գարնանը ի՞նչ արաս տղձիկը  
թռչնակին:



Ա՛նտր ո՞րտեղ էր սպրում թռչ  
նակը և ի՞նչ էր անում:



Չ՞մբան գարնն պէս ո՞ր թույլ  
թռչնակը:

Գիտեցէք «Աղձիկ և թռչնակ»-ի խրատանշիւր պատկերը, նախ պատմե-  
ցէք և ապա գրեցէք բոլորի բովանդակութիւնը:



35 ՊՈՉՈՏ ԱՂԻԷՍԸ

Փախաւ աղւետը,  
 Փախաւ թախարակից,  
 Բայց պոչի կէսը  
 Թողեց նա ներսը,  
 Էտպէս պոչաւ,  
 Պոչից անջաւ,  
 Գնաց ասաց ընկերներին.  
 — Այ ձեզ մատաղ, ես ձեր գերին,  
 Գէն զցեցէք ձեր պոչերը,  
 Ի՞նչու են պէտք էա փշերը.  
 Դրանք գարդ չեն ու գարդարանք.  
 Այլ մեր գլխին պատիժ, փորձանք,  
 Գեանի աւել,  
 Վազքի խափան,  
 Մեզ անվայել  
 Աւերորդ բան:

Էտտեղ մի ձեր վարպետ աղւէս  
 Ասաց նրան. «Ապրէս, ապրէս,  
 Այ ծակամուտ թոռիս թորը,  
 Էտքան չեն տայ խելքին գորը.  
 Բա քանի որ տեղն էր պոչդ,  
 Ի՞նչու չարիք գու էա կոչդ?»

I

Հոռմի իշխաններից մէկի ստրուկը Անդրօկէս անունով մի շատ ծանր յանցանք գործեց և պատժից ազատելու համար փախաւ Աֆրիկա: Այդ երկրում սարսափելի շոգ է լինում: Անդրօկէսն անտանելի շոգերից պատապարեց մի քարանձաւում, բայց ինչպէս սիրիւնեց նա, երբ նոյն քարանձաւը մի քանի վայրկեանից յետու մտաւ մի անուշի առիւծ: Առիւծը իր քնակարանում հիւր տեսնելով, անմիջապէս մօտեցաւ նրան և իր ահագին թաթը մեկնեց դէպի նա:



Անդրօկէսը հասկացաւ առիւծի ցանկութիւնը, ցննեց նրա թաթը և նրանից մի երկայն փուշ դուրս հանեց: Առիւծը թեթևութիւն գգալով, ի նշան շնորհակալութեան՝ ըսկսեց լիզել Անդրօկէսի ձեռքը: Այդ վայրկեանից սկսեց մտերմութիւն առիւծի և Անդրօկէսի մէջ: Առիւծն ամենայն օր իր հետ բերում էր սրօք մի մասը Անդրօկէսին, շարունակ լիզում էր նրա ձեռքերը ու ոտները, փայփայում նրան: Անցնում է ամբողջ երեք ամիս: Անդրօկէսն այսքան ժամանակ մարդու երես չտեսնելով, վերջ ի վերջոյ սասաթիկ ձանձրանում է քարանձաւից և վճռում է լոյս աշխարհ գուրս դալ: Բայց նրա այնտեղից դուրս գալն ու բռնելը մէկ է լինում: Անդրօկէսին կապկապած ուղարկում են Հոռմ իր պատիժը կրելու: Առիւծը նոյնպէս բռնուում է և ուղարկում է Հոռմ:

II

Այն ժամանակները Հոռմում սովորութիւն կար, որ մահաւան պատապարաւած ստրուկներին, մերկ ու մի փայտ ձեւին, կուեցնում էին քաղցած գազանների հետ մի հրատարակի վրայ: Իսկ ժողովուրդը՝ նստած մի բարձր տեղ՝ մտիկ էր տալիս այդ սարսափելի կուին: Թէ ինչպէս քաղցած գազանը պատաստում էր խեղճ ստրուկներին և նրանցով կշտանում: Ահա մի այդպիսի պատիժ էլ ընկաւ խեղճ Անդրօկէսին: Սա պէտք է կուէր քաղցած առիւծի հետ: Եւստով գազանների վանդակի դուռը բաց եղաւ և մի սարսափելի ու ահագին տեսքով առիւծ գուրս թռաւ նրա միջից: Սա սկսեց օդ ծծել, նայել շորս կողմը և յետոյ անուշիկ ձայնով դուռալ: Այնպէս էր դռնում, որ բոլոր ժողովուրդը զոզում էր նրա ձայնից: Առիւծը կամաց—կամաց, ծանր քայլերով և ամպի պէս որոտալով՝ մօտեցաւ Անդրօկէսին: Անդրօկէսը ափսոսանքով վախեցաւ, որ ձեռքի փայտն էլ պէն ձգեց: Խեղճը սպիտակ կաւսի գոյն էր ստացել: Բայց առիւծը մօտ գալով Անդրօկէսին պատկեց նրա ոտների մօտ, առանց մի փասս պատճառելու նրան:

Յետոյ բաց արին միւս վանդակները և դուրս թողին մնացած գազաններին: Բոլոր գազանները իրանց որսը ձարեցին և սկսեցին ուտել: Միայն Անդրօկէսը գեռ մնացել էր անվնաս կանգնած առիւծի մօտ: Այդ ժամանակ գազաններից մէկը, որ չէր ձարել իր համար որս, մօտեցաւ Անդրօկէսին՝ նրան պատաստակելու մտքով, բայց առիւծը վրայ թռչելով՝ այդ գազանին լափեց և նրանով կշտացաւ:

Ամենքը զարմացած նայում էին Անդրօկէսին և առիւծին: Սրանք իրանց օրումը երբէք չէին տեսել այդպիսի բան: Բայց Անդրօկէսը ձանաչել էր արդէն իր ընկեր առիւծին, նա պատմեց, թէ ինչպէս ինքն այրի մէջ պատահել էր նրան: Անդրօկէսին ներեցին և առիւծն իրան ընծայեցին: Նա սկսեց Հոռմի վտոգոյներով ման ածել առիւծին: Ժողովուրդը նրանց սիրալիր սղջունում էր և առիւծի առաջը ծաղիկները թափում:






## Արախապազէս կասիկը

Մի կոյր գութակահար շրջելիս է լի -  
 նու՛մ միշտ մի կասիկի հետ, որը նուա-  
 զիւրս յետոյ ժողովու՛մ էր փողերը և քրտո-  
 զը քալիս: Մի սիրուն քղայ, որը ըստ իր-  
 ւոյրին հարուստի քղայ էր, որովհետև  
 նրա զլխարկը մարգարիտով և ոսկով էր  
 կարած, ամէն օր կասիկին փող էր քալիս:  
 Մի օր, երբ կասիկը մտնու՛մ է դրան յան-  
 կարծ այդ քղան սարսափելի ճիւղ է սը-  
 շակու՛մ: Բանից իրևաց, որ քղայի զլխար-  
 կը մէկը իւր փախցնու՛մ էր: կասիկը իւ-  
 կոյն հասնու՛մ է չարագործին և այն-  
 ժան կծու՛մ, սպրակու՛մ, կսմբու՛մ նրան,  
 որ նա իսկ է քալիս զլխարկը:

## 38. ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐ

Ամսուս սարէն ուրախ ձէնով  
 Զուր է գալիս սնցնում շէնով:  
 Մի թուխ մանուկ դուրս է վազել,  
 Զեռն ու երես պաղ լացել,  
 Լացել է ձեռքն ու երես  
 Ու դարձել է խօսել էսպէս.  
 Դու սր սարէն կուգաս, ջրիկ,  
 Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:  
 — Ես էն սարէն կուգամ մթին,  
 Որ հին ու նոր ձիւնն է գլխին:  
 — Դու սր առուն կերթաս, ջրիկ,  
 Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:  
 — Ես էն առուն կերթամ գլարթ,  
 Ուր ափերն են շուշան ու վարդ:  
 — Դու սր այգին կերթաս, ջրիկ,  
 Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:  
 — Ես էն այգին կերթամ դալար,  
 Որ աէրն է ժիր մէջն այգեպան,





## 39 Ա. Շ ՈՒ Ն

Դեռ Յունիսի Ծ-ից օրը սկսում է կարճանայ և գիշերը երկարել, Սեպտեմբերի 11-ին արդեն ցերեկը հաւասար է գիշերին: Այս օրը մենք կոչում ենք աւանանախոս:

Ամպերը գրեթէ անպակաս են երկնքում, բայց ամառնային այն սիրուն ամպերը չեն: Մոխրագոյն և թանձր ամպերը առաջին խոլ օրից սկսում են երևալ: Օդաստոսի վերջին օրերից եղանակը սկսում է ցրտել: Յրաութիւնը գլխաւորապէս նկատելի է լինում առաւօտները: Իսկ Սեպտեմբերին սկսում է թեթև սառնամանիք: Առաւօտեան գարթնելիս մեր հարեանի տան կտուրը սպիտակած ենք տեսնում:

Աշնանային անձրևներն ամենեին նման չեն ամառնային անձրևներին: Աշնանային անձրևը գալիս է անդադար և երկիրը նրան այնպէս շուտ չի ձծում, ինչպէս ամառը:

Բամին փչում է սառնոց դադարելու: Ծառերի տերեւները սկսում են զեղնել դեռ Օգոստոսի վերջին, իսկ Սեպտեմբերին ինչպէս և Հոկտեմբերին, նրանք օդի մէջ տարուբերում են և ընկնում թաց դեռնի վրայ: Բոլոր բոյսերը զեղնում են, միմիայն ձմեռնային ցանն է, որ սկսում է կանչել:

Ամեն ինչ մթնում է, օրը կորցնում է իր ամառնային պայծառութիւնը և ընդունում է միակերպ, մառախլապատ տեսք: Այդ ժամանակ բնութիւնը նմանում է յոգնած, աշխատանքից շարժարւած մարդու, որ քնել է ցանկանում:

## Լիշուն

Լիշնանային փամբները փչել ցին,

Ժառու Ժառուկունի փերեւերը քափփին,  
Երկրեւի մուսլ, գիշեր-ցերեկ անպաւսած,

Ասարու շորեր մէջ-մառախուղ փայտաւած:

Լեմայայան անդաւորանեւք, այլիւնիք:

Թուղունեւերի ուրախ երգը դադարից,

Խոպանայան աղմկալից ծամբանեւք,




Եւ սայլերի անպուղարչը ընդհաւրելից:

Յոգնած իշներն հանգստապան ցոմբրած,

Օգախի շուրջ պիղզուկները քափուլով

Մշխապանի պարուղներն ինձայիւնով

Ուրախ-պարթ, մինչև զարուն ապաւիտով:



Գիտեցէր այս պատկերներից իւրաքանչիւրը, պատմեցէր Եւ գրի տուեր  
ամբողջի բովանդակութիւնը

I

Հազիւ տասը, տասնութէկ ասորի է անցել այն օրից: Վաղ  
տառուտ էր: Երեսու քայց վաղարդեան անուշ գոզի տուաջ, ես քաղ-  
ցըր քնի մէջ էի կարի վրայ: Սալմաստում ամբողջ ամառը դի-  
շերները կարի վրայ են քնում:

Ձրն՝ գ, զրն՝ գ, զըն՝ գ՝ մեղմիկ հասու պիանջիս: Ձարթնելս,  
անկողնից վեր թռչելու ու կառուրից ցած—փողոց հայելս, մէկ  
եղաւ: Ձրն՝ գ զըն՝ գ զըն՝ գ, լուում էր փողոցից, ձիերի առփի-  
նի հետ միասին:

Չիապանն էլ մի տասնեակի շափ ձիեր տուաջն առած՝ բշում  
էր: Ա, այսօր ուխտ են գնում: Մեր թաղի ուխտաւորներն էին  
վարձել այդ ձիերը: Չիապանը նրանց դռները մէկ-մէկ թակում  
ու կանչում էր, որ պատրաստեն:

Քշեց, անցաւ մեր տան առաջով: Բայց դուռը չը թակեց:  
Մենք ուխտ չէինք գնում: Ու ես ասիւրեցի:

Արեգակը դեռ չէր ծագել: Նոր էի ցած իջել կառուրից, որ  
մեր դռնից շատարով ներս մտաւ իմ մօրաքոյր Մարթան: Նա դի-  
մեց մօրս և խնդրեց, որ թոյլ տայ ինձ էլ իրանց հետ ուխտի  
աանելու:

Սասուած իմ, ինչպէս ուրախացայ ես:

Ստանց սպասելու մօրս պատասխանին, վրայ վազեցի և թե-  
ւերս տարածելով, մօրաքրոջն ցածիկ ուսերի վրայից, պինդ-  
պինդ գրկեցի նրա պարանոցը:

— Միշտ այդպէս բարի ես գու, սիրելի մօրաքոյր, դու ան-  
չափ ուրախացրիր ինձ:

Մօրաքոյրս պատասխանեց ինձ մի տաք համբույրով՝ թշիս վրայ:  
Մայրս միթէ կարող էր մերժել:

Ուրախութիւնիցս խելքս թոցրի: Արագ-արագ մի քանի ան-  
գամ համբուրեցի մօրաքրոջն ու դուրս պրճայ փողոց՝ հայ գէ:

II

Քամու պէս արագ, մի շնչով վազեցի մինչև մօրաքրոջն  
տունը: Այնտեղ գեղամիջի մեծ առւի ափին, զուռնիների տակ

կանգնել էին և ձիերը խըռթ, խըռթ՝ ուսում էին առնոյտի չոր խոտը: Երանց շուրջը բոլորել էր հետաքրքիր մանուկների մի մեծ բազմութիւն: Կանչը, ծիծաղը, վէճն ու զրոյցը միախառնուել էին իրար: Հասնելով այնտեղ, ամբողջ թափովս ինձ նետեցի Երանց մէջ և կոչեցի:

— Հէյ, ես էլ եմ գալիս:

— Օ՛հօ, այդ սով է, որ պակաս էր մնացել, — ասացին Երանք: Ես եմ, ես, ինձ վերցնում է իր հետ իմ մօրաքոյր Մարթան:

Մօրաքոյր յո որդի Արշակն էլ այնտեղ էր: Թեևրով միմեանց պարանոց գրկած, սկսեցինք ցատկոտել ու երգել:

Մեզ հետ միասին, մի ընտանիքի պէս ուխտ էին գնում և Ծաղիկ տաար՝ իր հարս Զէյրանի հետ և ամբողջ զիւղին յայտնի ծերունի Մեսրոպը:

Մայրս եկել էր ինձ ճանապարհ դնելու:

Մինչև կրկերագոննաս, գիշերները երազով հետո կը խօսեմ, ջերմ սիրով ասաց նա ինձ:

— Բեզ համար անմահական ջուր կըրերեմ, մտըրիկ, զիշերները գեղեցիկ ու հրաշալի երազներ տես:

Ծերունի Մեսրոպի համար ձիու վրայ պատրաստել էին մի փափուկ ու յարմար տեղ:

Էսպէս հանդիստ տեղ իսկի շանն էլ չունի իր թախախ վրայ, — ասաց նա՝ երբ մեր օգնութեամբ նստել էր ձին:

Շշուկն ու աղմուկը շատացան լսում էին զանգալիների ընդհատ ձայներ: Բոլորը պատրաստ էին:

Ես ու մօրաքոյրս նստեցինք մի ձի. թեևրով ամուր խտտած մօրաքոյր յո մէջը, ես հրճում էի, զիտելով մեր ուրախ քարաւանք:

43. ՀՈՎԻԻ ՀՐԱՒԵՆՏԸ

Մնաք բարով, մարդեր,  
Արօտներ փայլուն,  
Ամառն անցկացաւ,  
Հօտը գնում է տուն:

Մենք էլի կըգանք, կըբարձրանանք սարը,  
Երբ թռչունների կըգարթեն երգերը,  
Երբ ծաղիկները կըծածկեն երկիրը,  
Անուշ մայիսին կըվազեն ջրերը,

Մնաք բարով, մարդեր,  
Արօտներ փայլուն,  
Ամառն անցկացաւ,  
Հօտը գնում է տուն:

44. ԱՆՁՐԵՒԱՅԻՆ ԸԻՃՈՒ

Արագաթուխք արծիւը ուժգին թևերը շարժեց և սրացաւ մինչև մութ ամպերը. նրա սաների տակ էին գիւղեր, քաղաքներ, ձիւնապատ սարեր, իսկ արևը նրան սղոզում էր սկիւր ճառագայթներով:

Նրա ոտին ցեխի ու տիղմի հետ կպած էր և մի անձրևային ձիճու: Անձրևային ձիճուն ևս սաւառնում էր այդ անասնման բարձրունքում. նա նայում էր բարձրից ցած և քիչ էր մնում հպարտութիւնից սիրտը պատուի:

— Ինչքան լաւ է, սրբան բախտաւոր եմ ես, — ասում էր ձիճուն, սով կարող է ինձ չափ բարձր թռչել. սով կարող է հասնել այստեղ և սով է տեսել այս բարձրունքը:

Որքան ողորմելի են այժմ ինձ համար այն մանր թռչունները, մանաւանդ թիթեռներն ու բզեզները, որ հազիւ կարողանում են մի թիզ թռչել: Ես արժւին հաւատար եմ:

Արիւժը սկսեց կամաց-կամաց ցած իջնել: Ձիճուն տեսաւ օդի մէջ թռչող շատ թռչուններ, նրանք ուրախ-ուրախ ծլլում էին ու երգում:

— Ո՛րքան լաւ է մեր կեանքը, ինչքան պայծառ է օրը: Ո՛րքան մենք բարձր ենք թռչում:

Ձիճուն սկսեց ծիծաղել.

— Այ տխմարներ, դուք ի՞նչ էք տեսել, դուք երբէք չէք բարձ-

բացել այնքան բարձր, որքան ես...

Արժիւն աւելի ցած էր իջնում, Օգի մէջ միտում էին հա-  
զարաւոր միջասներ, գոյն-գոյն թիթեռներ, սպիթե բզեզներ ու  
ու հազար տեսակ ճանճեր, մորեխներ, մլակներ: Նրանք բոլորն էլ  
երջանիկ էին, որ այնպէս գալար էին դաշաւը, բուրաւէս էին  
ձողիկները: Նրանք բոլորն էլ ազգալով, բզգալով թռչում էին և  
երգում:

—Որքան լաւ է մեր կեանքը, որքան զեղեցիկ է աշխարհը:  
Արժւի սաին կրպած ճիճուն սկսեց քահ-քահ ծիծաղել:

—Յիմարներ, կանչեց նա, դուք ինչ էք տեսել, ինչ գիտէք:  
Մէկ ինձ տեսնէիք, թէ մինչև ուր էի թռել և ինչեր տեսայ...


#### 45 ՀՐԱԺԵՇՑ

Տխուր, պղտոր գեան է հոսում  
Վշիշտով, շաապով,  
Ոլոր-մոլոր ափին գարկում  
Հառաչելով, երգելով:


Մնաք բարով ծառ ու ծաղիկ,  
Այգի, անտառ, կանաչ, խոտ,  
Միրուն ժայտեր, դառն ու ուլիկ  
Պիտի մնամ ձեզ կարօտ:

Ես ետ կըրգամ գարձեայ ձեզ մօտ  
Քամու ուժով, երկնքով,  
Մաղիկեցնելու դաշտ ու արօտ  
Մեզմ, գովարար անձրևով:

Փեան է հոսում ախօր, պղտոր,  
Հառաչելով, երգելով,  
Ափին գորկում, ոլոր-մոլոր  
Առաջ գնում գէպի ծով:



Դիտեցեր այս տախտ գնար պատկերը, նախ պատմեցեր և ապա  
զրեցեր բովանդակութիւնը:



47. Չ Մ Ե Ռ

Յունւորի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր, թրեխը՝ գետին չէր ընկնիլ: Սպիտակ էր գետինը, սպիտակ էին աների պատերն ու կառուցները, սպիտակ էին մանաւանդ փողոցների և պարտեզների ծառերը. ձիւնի միատեսակ ճերմակ սաւանը փռւած էր ամեն տեղ, պատել էր ամեն ինչ: Գիշերը խիստ դարգկայ էր, և այժմ սառած ձիւնն անցուղարձ անողների սաների տակ անախորժ ճոճոց էր հանում, որ մարդու մարմինը փշաքաղում էր: Սրև չըկար, մառախլապատ էր երկինքը՝ սաստիկ ցրտից յանկարծ խտացած գուրջիները բարակ եղեամներ դարձած՝ խաղում էին օդի մէջ: Ազոաններն ու աներես ճնճողներն անգամ այսօր, սովորականին հակառակ, ճիչ ու ազմուկով չէին թռչկոտում կրարից կտուր, բակից բակ՝ պաշար թռչնելու, նրանք նստուակ էին այս ու այն պատի վրայ, այս ու այն ծառի ճիւղերին լուռ, խըղճուկ, կծկւած. սաստիկ ցուրտը սրանց էլ էր նեղել: Ամեն մի անկիւնից, ամեն մի ընկից, ամեն մի սաքուկից, ուր որ կենդանի շունչ կար՝ ծուխ էր բարձրանում. մարդիկ կուռւմ էին ցրտի դէմ, ինչով և ինչպէս կարող էին՝ տաքանում էին:

Թէև արդէն սառւում էր, բայց Ա...-ի փողոցները դատարկ էին և անկենդան, ո՞վ էր գժւել այս կատաղի ցրտին գլուխ դարս հանել անից, հազիւ երբեմն փողոցների այս ու այն ծայրում ըստւերների պէս երևում էին մուշտակների, կափուռջիների կամ վերարկուների մէջ կտրւած մարդիկ. սրանք էլ, ո՞վ գիտէ, որպիսի անհրաժեշտ կարիքից ստիպւած էին թողել իրանց փափուկ բնակարանները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ ակամայից վազում էին՝ համարեա հեալով:

Ձիւն

Ձիւնը որ կուգայ երկնէն ի վայր,  
 իմացիր մի՞՞ք բախար է մարդուս համար  
 Վլրմակի պէս քաւ կը ծածկէ գիպնին,  
 Որ բոյսի արմարը դիմանայ ցրտին:  
 Նա հողին կուգայ հիւ թ, պարարտութիւն,  
 Դաւարին ու արտին մի՞՞ առաքուրբիւն:  
 մի՞՞ ցրտնզար, մարդ, դու բնուրբիւն:  
 Թէ քաւ և թէ ցուրտ՝ մի՞՞ միշտ օգուրբիւն:

40 ԱՆԿՈՉ ՀԻՒՐԸ

Տարւայ վերջին գիշերն է:  
 Անհամբեր ուրախութիւնով սրտերը լցւած, երեխաները ըստպատում են նոր տարուն:  
 Շատ անգութ է նոր տարին, կարծես փոքրիկներին տանջելուց բաւականութիւն է զգում, սրբան ուշանում է... Բակում

պամուկ բարձրացաւ. մի է. միթէ կարելի է անկարգութիւն անել,  
նոր տարին մօտ է, գասուս են փոքրիկները:

Շրթիկ-չրթիկ ետ զարկեցին զաները, շէմքում երեսոց մի  
այլանդակ ձերունի: Երեխաները վախից վեր թռան սեղերից:  
Տարօրինակ ձերունին հասաչելով և ճօճալով առաջ եկաւ:

Մըքան զարհուրելի է. բարձր հասակը կորացած, աճազին  
զլիսով, զզզուած մազերով, երկնւր-երկնւր մօրուքով, լայն բաց-  
ւած աչքերով և կնճռոտ ու վիրաւոր ճակատով: Հազնւած է  
շատ աղքատ, աճազին սաքերը բոբիկ են, իսկ կոշտացած ձեռ-  
քերն այնպէս գոգում են: Ծերուկն սկսեց խօսել: Չայնր ստու-  
կայի է:

— Խղճացէք անբախտ ձերուկիս. մի տար անկիւն տէք,  
թուլացած ուժերս էլ չեն զիմանայ տանջանքի. օ, ցուրտ է, իսկ  
ես ձեր... արիւնս ստակ է երակներումս:

Կար ժամանակ, ես էլ ձեզ պէս փոքր ու բնօրոյշ մանուկ էի.  
Իմ ծնունդն ուրախութիւն էր ամբողջ աշխարհին. ինձ երգ ու  
պարով ընդունեցին հարուստ ու աղքատ. իմ գալուստը զիմաւո-  
րելով դատարկում էին լիք-լիք բաժակներ: Ինձ սօնեցին մարդիկ  
երկրում, աստղերն երկնքում, թռչունները բներում, ձկները ծօ-  
վում:

Ես առողջ ու աշխոյժ էի ձեզ նման, իմ թշնամի ժամանակը  
խորտակեց կեանքս, ձեր եմ, խաւարել է աչքերիս լոյսը:

Առաջ որ թագաւոր էի, այժմ թշուառ մուրացկան եմ, այս  
բուք-բորանին ոչ-ոք չի խղճում ինձ: Անպութ ժամանակը խեց  
իմ փառքն ու պատիւը, ինձ ծաղրում ու հալածում են չարաշար.  
մարմինս ծածկւած է վերքերով: Ձեզ եմ զիմում, բարի երեխա-  
ներ, զթացէք ինձ չէ որ ես ձեզ բերել եմ բիւր բարիքներ...

Լալիս է թշուառ ձերուկը. սըքան խղճալի է, փոքրիկները  
չըջապատեցին նրան ու սկսեցին մխիթարել.

«Պապի, սիրելի, պապի, մի վշտանար. կայ մեզ մօտ, մենք  
հոգ կրտանենք քեզ վրայ ու կըսիրենք:

Ջընգ-զընգ—խփեց Դեկտեմբերի վերջին զիշերուայ տամեր.  
Կու ժամը:

«Ահա հասաւ նոր տարին, խնդրենք նրան, որ մեր խղճուկ

պապին էլ ուրախացնէ», գոչեցին երեխաները, պարելով ձերու-  
նու շուրջը:

Նոր-տարու անունը լսելով, թշուառ ձերուկը հասաչեց ու  
վայր ընկաւ անկենդան: Նրա կրծքին գրւած էր՝ հիմ սարի:

50. ՉԲԵՒ

Չմեռն եկաւ... ձիւն է գալիս,  
Քամին սաստիկ է փչում.  
Մարդ, անասուն, գազան, թռչուն  
Նրա անից են գոգում:

Գաշտ ու ձորեր սաւան հագան,  
Առուն մտաւ սառցի տակ,  
Որ չըլսեն անգուր ձայնը՝  
Փչող քամու ստանորակ:

Գուրսը ցուրտ է, ոչ ոք չըկայ,  
Ոչ մի շունչ չի լուռում,  
Միայն քամին խուլ վայելնով  
Խոր հանդիսան է վրդովում:

Նա խփում է հեռուն կանգնած  
Փայտոտ լեռան լանջերին,  
Չեան զէզերը հիւր է տանում՝  
Նրա խոր-խոր ձորերին:

Իսկ ազաւը ցրաի ձեռքից  
Քարի տակ է կուչ եկել,  
Եւ ցրտահար սաք ու ձեռքով  
Էլ չէր ուզում կառանչել:

51. ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Արանից երեսուն համ քառասուն տարի առաջ, Բուն Բա-  
րեկենդանի վերջին շաբաթը Աշտարակ գիւղի փողոցներովը շէր  
կարելի անցկենար: Ամեն տեղ ուրախութիւն, ամեն տեղ սէր ու  
խնջոյք էր, ամեն բարձր աստիքի վրայ սեղան փռել բայ անս-  
լը հասարակ բան էր: Ել երիտասարդ ու ծեր շրկար, Ել պատանի  
ու հալետր շրկար, ամենքն էլ միասին երիտասարդացել, կայտառա-  
ցել էին: Պապիս պէս պատուելի իշխանները կաշերումը „լախախ“,  
էին խաղում ու հաստ կառել գօտիկից ոլորած լախառ այնպէս  
էին ֆուտայնում, իրար մէջքի կաշնում, որ մէջքի մտրթը բարձ-  
րանում էր. և եթէ մէկը ցաւի սասակութիւնից գանգատում էր,  
«Ո՛չինչ, այսօր արձակուրդ է. բարեկենդան օրեր են, խելքներս  
կօրել են», պատասխանում էին մեր իշխանները և շարունակում  
իրանց խաղը:

Այսպիսի իրաբանցում, այսպիսի ազմուկ՝ եթէ ուրիշ ժամա-  
նակ լինէր, ամենքը կը կարծէին թէ գիւղի վրայ թշնամիներ  
են յարձակել ու քանդում, կողալաում են. գուցէ մօտակայ  
գիւղերիցն էլ օգնութեան վազէին. բայց հիմա ամբողջ Արագած-  
ոտան գաւառն է այսպէս, ինչ անես:

— Ի՛նչ, բաւական է, ասացին միմեանց, մօրուքներիցդ ամա-  
չեցէք. դոնէ այն երեխաներիցն ամաչեցէք, որ թաշկինակը կա-  
պել են ձողի ծայրին, դրօշակ են շինել ու այն բարձր տանիքի  
վրայ „եայլի“ են կանչում: Գնանք, մենք էլ մի քիչ կոկորդներս  
թաց անենք:



Բարեկենդան



Նկարագրեցէք այս «բարեկենդանը» և համեմատեցէք ձեր սովորած  
և տեսած բարեկենդանների հետ:





53. ՊԱՊԱՃԼՍՍ

Ձմռան վերջին ամենից շուտ  
Այգիններում, դաշտերում,  
Չալիկ-մալիկ, կուրծքը սրւտ սրւտ  
Մի թռչուն է լոյս ընկնում:

Ու էտ խեղճը դեռ ցուրտ օդում,  
Առանց արեխ՝ առանց չուտտ  
Թռչկոտում է, կանչում, խնդրում  
Թէ՛ «պապածըստ, պապածը՛ստ»...

Երբ գալիս է սիրուն դարուն,  
Որ էլ պէտք չեն արեխ, չուտտ,  
Նա տաքանում ու չի կանչում  
Էլ՝ «պապա, չուտտ, պապա, չուտտ»:

54. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում: Էս մարդ ու կնիկը իրար հաւանելիս չեն լինում: Մարդը կնկանն է ասում յիմար, կնիկը մարդուն, ու միշտ կուեկիս են լինում: Մի օր էլ մարդը միքանի փութ կը ու բրինձ է աննում, տալիս մշակի շալակը, տանում տուն:

Կնիկը բարկանում է: Այ, որ ասում եմ յիմար ես, չես հաւատում, էսքան եղն ու բրինձը մի անգամից ինչի համար ես առել բերել. հօրդ քէլէին ես տալիս, թէ տղիդ հարսանիքն ես անում:

Ի՞նչ քելէիս, ի՞նչ հարսանիք այ կնիկ, ի՞նչ ես խօսում. տար պահիր, բարեկենդանի համար է: Կնիկը հանգստանում, տանում է պահում:

Անց է կենում մի առ ժամանակ. էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը չի գալիս: Մի օր էլ շեմքումը նըստած է լինում, տեսնում է, մի մարդ վաղ-վաղ փողոցով շանց է կենում: Չեղը դնում է ճակատին ու ձէն տալիս:

Ախպէր, անպէր, հալա մի կանգնի:

Տղէն կանգնում է:

— Ախպէր բարեկենդանը դու հօ չէս:

Անցւորանքը նկատում է, որ էս կնկայ ծալը պահաս է, ասում է, հա ասեմ, տեսեմ ինչ է դուքս գալի:

— Հա, ես եմ բարեկենդանը, քոյրիկ ջան, ի՞նչ ես ասում:

— Ին եմ ասում, որ մենք քո ծառան հօ չենք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցիրք հերիք չէր... չես ամաչում... Ինչի՞ չես գալի քո սպրանքը տանում...

— Գէ էլ ի՞նչ ես նեղանում, քոյրիկ ջան, ես էլ հէնց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման գալիս, չէի գտնում:

— Գէ արի տար:

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը շալակում ու կրունկը դէս անում, երեսը գէպի իրանց դիւզը:

Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է:

— Հա, էն բարեկենդանն եկաւ, իր բաները իրան սկցրի, տարաւ:

Ի՞նչ բարեկենդան, ի՞նչ բաներ...

— Այ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսեմ վերեից գալիս է, մեր տունն էր ման գալի, կանչեցի, մի լաւ էլ խայտառակ արի, շալակը տւի տարաւ:

— Վայ քո անխելը տունը քանդելի, որ ասում եմ յիմար ես— յիմար ես էլի... Ո՞ր կողմը գնաց:

— Այ էն կողմը:

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետեից: Ճանապարհին բարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է մի ձիաւոր քշած գալիս է: Գլխի է ընկնում, որ սա էն կնկայ մարդը պէտք է լինի:

Գալիս է հասնում իրան:

— Բարի օր, ախպէրացա:

— Ասո՞ժու բարին:

— Հօ էս ճամբով մարդ շանցիացում:

— Անցկացաւ:

— Ի՞նչ ունէր շալակին:

— Եղ ու բրինձ:

—Հա, հէնց էդ եմ ասում:

—Ի՞նչքան ժամանակ կըլինի:

—Բաւականին ժամանակ կըլինի:

—Որ ձին քշեմ՝ կըհասնեմ:

Մըտեղից կըհասնես, դու ձիով, նա ստով: Մինչև քու ձին չորս ստը կըփոխի—մին, երկու, երեք չորս—նա երկու ստով՝ մէկ—երկու, մէկ—երկու, մէկ—երկու, շուտ-շուտ կըզնայ, անց կըկենայ:

—Բա ի՞նչպէս անես:

—Ինչպէս պէտք է անես, ուզում ես, ձիդ թող ինձ մօտ, դու էլ նրա պէս ստով վաղի, գուցէ հասնես:

—Հա, էդ լաւ ես ասում:

Վեր է գալիս, ձին թողնում սրա մօտ ու ստով ճամաղարն ընկնում: Սա հեռանում է թէ չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամբէն ծռում, քշում:

Էս մարդը ստով գնում է-գնում է, տեսնում է, չըհասաւ՝ ետ է դառնում, տեսնում, ձին էլ չըկայ: Գալիս է տուն: Նորից բուկում են կուել, մարդը եղ ու բրնձի համար՝ կնիկը ձիու:

Մինչև օրս էլ էս մարդն ու կնիկը կուում են դեռ: Սա նրան է ասում յիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում:

55. ԳԱՐՈՒՆ

Գարնան շողով,

Անուշ տաղով

Միծառն եկաւ կարապետ.

Յօղաշաղախ

Վարդը չքնաղ

Ժպտաց իսկոյն նրա հետ:

Գաշտ ու արօտ

Վազուց կարօտ

Չերմ արևին կենսատու,

Այ ու ալւան,

Կանաչ հագան՝

Ողջունեցին իրարու:

Չոր ու անտառ,

Հովիտ ու սար

Գոյն-գոյն ծաղկով գարգարուն՝

Իրար գրկում,

Երգ են երգում

„Ո՛հ, ինչ սիրուն է գարուն„...

56. ԻՆՉՈՒ Է ՄԱՆԻՇԱԿԻ ՎԻՉԸ ԾՈՒՌ

Ասում են մանիշակն ու վարդը քոյր ու եղբայր են եղել: Չար բախար սրանց յաւիտեան բաժանել է իրարուց: Երբ մանիշակը իր կապուտակ գլուխը հանեց մօր ծոցից և ժպտաց աշխարհին, վարդը դեռ նոր էր բողբոջում:

Կարօտով քոյրիկ մանիշակը սպասում էր վարդ-եղբոր աշխարհ գալուն, որ ընկնի նրա փշերին, արիւնտաի իր կուրծքը, Չերմ համբոյրներով ծածկի նրա ալ թերթիկները, կարօտն առնի ու մեռնի: Բայց դեռ վարդ-եղբոր կոկոնը չըճեղքւած՝ մանիշակը արցունքներով լի աչիկները երկրին խոնարհած՝ թառամեց: Նրա թերթիկները մէկիկ-մէկիկ թափւեցին ցած՝ իրանց եղբորը հասնելու անդօրութիւնը սղբալով: Երբ բոլոր մանիշակները կարօտ ու սէրը սրտերում մեռնում են,



չքանում, նոր վարդը գեղեցիկ գլուխն է բարձրացնում: Ու այն օրւանից մինչև հիմի դեռ քոյրիկ-մանիշակը չէ արժանացել վարդ եղբորը: Ու այն օրւանից քոյրիկ մանիշակի վիզը մնացել է ծուռ:

Մանկիակ

Դիռ ուր է Ժրժար, դիռ ուր է սոխակ,  
 Գարնան կարասիքը եկաւ մանկիակ,  
 Արկնային խունկը չորս կողմը բուրբից,  
 Արաժին աշխարհ նախ նա համբուրբից,  
 Արկնին է անամայ, շողջողուն արև,  
 Աման մանկիակին, էրիւիւի, բարև,  
 Ար մի դաշտերին բերաւ նոր զարուն,  
 Ասիւղուն հաւիրով, ծաղկով զարգարուն:

ՃՏ. Գ Ա Ր Ո Ւ Ն

Օգի մէջ մի քնոցը, թեթև շունչ կոյ, որ գարուն է յիշեցնում:

Բայց նա արդէն եկել է: Մար ու ձոր սեպեկ են արդէն: Գաշտերը կարծես մէկի ձեռքով սրբած աւրած են ու մարտը: Եւ բարձրանում է գոլորշին արևի ջերմութիւնից, աստղաստի ձևեր տալիս, հաւաքում ու բաժանում է հսկայական վարազոյ՝ ըի պէս: Եւ ծայրը արդէն հասել է երկինք:

Բայց դեռ ուր է կանանչ ուր է ծաղիկ—նրանք չեն երևում: Տեղ-տեղ միայն, այն էլ հազարից մին, կըտեսնես որ անձ կանանչը զաղասեղ զուրս եկել՝ քեզ է մտիկ տալիս: “Գարունը եկել է”, . . . ասում են և զգում, որ սիրտդ այնպէս է ճրխում սնց որ վճիտ երկինք անսած արտաւա: Ճիտւմ է նա և քաղցը մարում կըծքիդ տակ, և այնպէս ուզում են ապրել...

Բարձր սարի ծայրին դեռ ձիւն կայ նստած: Բայց նրա աչքերն էլ լցւել են ուրախութեան արցունքներով, նա էլ փուլ է գալիս:

Տխուր գիւղերով և սև արտերով ծանրաբեռնած գաշտը քանի գնում, ալիք է խփում, դառնում բլուր: Նա էլ գնում խոժոտանում է և վերջանում բարձր շենքերով, որոնց միջից, ալեգարդ բուրմի նման, անա բաց է արել իր սպիտակ ճակատը մի կանաճե զագաթ:



Գուրանի երգ

Արի՛, գուրան, վարի՛, գուրան,  
 Օրն էկել է ծաւ դաւել:  
 Առը շուն քուր, խոփիդ դուրպան,  
 Օրհնեալ է Լուսնամ, հորովէլ:  
 Բաշիք, Բաշիք, ուսիդ մայրաղ,  
 Բաշիք, Բաշիք, վար անիւնի:  
 Քրպրին արև, Գլիք, հոյրաղ,  
 միք սև օրին ծար անիւնի:

Պարտաւէրը զանգամ գնաց,  
 Իեօխվէն կըգայ՝ կըծեծի:  
 Տէրաւըն օրհնեց, անվարձ մնաց,  
 Կըբարկանայ՝ կանիծի:

Դէ՛հ, քաշեցէ՛ք, դէ՛հ, քշեցէ՛ք,  
 Էլ մեր գառը քրտինքը:

Չարչարեցէ՛ք, աշխատեցէ՛ք՝  
Ոգորմած է երկինքը:

Արի՛, գութան, վարի՛, գութան,  
Օրն եկել է, ճաշ դառել,  
Առ շնու տուր, խոփից զուրբան,  
Օրհնեա՛լ է Ասուած, հորովէ՛լ ..



60. Գ Ա Ր Ո Ւ Ն

Դարուն էր, տաքացել էին օրերը, բարձր սարերի, հալ ընկել ձիւները, քչքչան ատուններ ու աղբիւրներ, դաշտ ու ձոր բռնել: Կանաչել էր խոտը, ծաղիկներ ծաղկել, և անուշ բուրմունք ամեն տեղ սփռել: Մարդ ու անասուն, թիթեռ ու թռչուն ուրախ ու զւարթ ամեն կողմ լցւել ..

Մածկալը հանդուս էր վարն էր անում, նախըջին՝ դակահակն ուսին՝ կով ու գոմշուկին արօտը տանում. հորթարածն իր հորթերն առած, խոզարածն իր խոզն ու գոջին, գառնարածը,

փափրիկ ու նաշխուն գառներն առաջին, ինչպէս և հովիւը խուրջինը շալկած, բրդոտ ոչխարներ առաջը ձգած, ճի՛, հէս, հօ՛, հա՛ բարձր բզաւում, կանչում ու շւում և կանաչ խոտում արածացնում:

Իսկ մեր թռչնիկներ, բմբուտ հաւիկներ, ծիծեռնակ, սարեակ ու քաղցրիկ սոխակ, լոր ու մշահաւ, արտուա ու կաքաւ, սիրուն ճւղցով, անուշիկ երգով, թփից ծառ թռչում, ծառից դէպ ծաղկունք, ամենքի սիրտը իրանց են գրաւում ..

Բայց այն թիթեռներ, նաշխուն բզէզներ, որ խոտերի մէջ վեր վար են ցատկում, բզգում ու աղգում ու յանկարծ խոտից մի այլ տեղ թռչում, ինչքան քաղցրութիւն է մեզ սպասեցնում ..

Բայց այս դեռ ոչինչ, անհ կէս օր է, արեւ վերեւից կրակ է թափում, բաց դաշտավայրից ամենքին քշում դէպ խոր-խոր ձորեր և կամ տերևոտ ու գով անտառներ:

Հանդն ու արօտը սրան մի լոտեցին, թռչկան հիւրերից գրկեցին, միայն դեռ հովտում քչքչան աււի վշտոցն է լուում: Ահա մեր մածկալն իր մածը թողեց, եզների վզից սամիքն արձակեց, հոտաղ ու մշակ իր շուրջն առած, թանէ սպտոր մէջ տեղը բաշեց ..

Կերէք, տղէք ջան, ձեր ջանին զուրբան, այսօր լաւ օր է, աջող է մեր բան:

61. ՍԵՐՄԵՆՍԱՆ



Ո՞ւր ես գնում, այ գիւղացի, Բեռան տակին տնքալով. Այդ ի՛նչ բեռն է, որ շալկած ես Ու տանում ես ինդալով:

— Արի՛ ինձ հեա դու կրտեսնես՝ Ուր եմ գնում տնքալով, Երկրի յոյսն է իմ շալակին՝ Ես տանում եմ ամանջելով ..

Ասաց. կապեց իր գողնոցը, Ապա նայեց երկնքին. Սիրտը խօսեց, լեզուն շարժւեց

Ես նայեցի արցունքին...  
 «Կապոյա երկինք հալալ սրտով  
 Քեզ եմ կանչում՝ միայն քեզ,  
 Որ դու արև, անձրև շատ տաս  
 Իմ այս սերմին՝ սրբի պէս...  
 Դու լաւ դիտես թէ քանի՜ մարդ  
 Աչք կը դնի ցանածիս,  
 Քանի՜ պարաքեր ու պատուհաս  
 Միշտ կը սպասեն-սերմածիս...»  
 Այսպէս ասաց ու երեսին  
 Խաչակնքեց դոզալով,  
 Սերմը լցրեց գոգնոցի մէջ՝  
 Սկսեց ցանել իր բունով ..

62. ԹՈՉՆԱԿԻ ԵՐԴՂ.



Մի մեծ քաղաքում, նեղ  
 ու ամուր բանտի մէջ նստած  
 էր մի խեղճ բանտարկեալ: Չար  
 մարդիկ շրթայել էին նրան և  
 բանտը ձգել:

Բանտը խոնար էր, մութ և  
 ցուրտ: Անկողնու տեղ նրա հա-  
 մար թաց ծոց էին զցել և  
 միայն հաց ու ջուր էին դնում  
 սուղեր: Երկար տարիներ նա  
 այնտեղ նստած էր՝ գունատ,  
 հիւանդ և արտում: Արեւը քիչ

էր լուսաւորում նրա նեղլիկ պատուհանը. թարմ օդը չէր մըտ-  
 նում բանտը: Նա ախուր մտածում էր իր սիրելիների մասին, իր  
 փոքրիկ զաւակների մասին. մտածում էր գուցէ վաղուց՝ արդէն  
 ամենքը մոռացել են, արդէն ամենքը մեռած են համարում ի-  
 րան:

Ի՞նչ է կատարում արդեօք այնտեղ ներքեում, երկրի վրայ,  
 հայրենիքում: Նա մօտեցաւ պատուհանին: Հրաշալի ամառնային  
 երեկոյ էր: Արեւ մայր էր մտնում անտառի յետեր, շառագու-  
 նելով ծառերի կատարները, մարդիկ անց ու դարձ էին անում  
 փողոցներով: Բանտը շատ բարձր սարի վրայ էր և մարդիկ փոքր  
 էին երևում: Նա կանչում էր, բայց ոչ ոք նրա ձայնը չէր լսում:  
 Կապոյա երկնքում թռչում էին թռչուններ: Պատուհանի մօտից  
 կամացուկ սաւառնում էր արծիւր:

— Արծիւ, արծիւ — կանչեց նրան բանտարկեալը, — նստիր  
 պատուհանիս: Պատմիր թէ ի՞նչ է կատարում աշխարհում. մի  
 երգ երգիր ինձ համար:

— Ո՛չ. — պատասխանեց արծիւը. — քո պատուհանը շատ  
 փոքր է. նստելու տեղ չըկայ ինձ համար: Ես չեմ պատմի քեզ,  
 թէ ի՞նչ է կատարում աշխարհում, որովհետև քիչ եմ երկիր իջ-  
 նում: Ես բունս շինում եմ բարձր ժայռերի և դարաւոր կաղնի-  
 ների վրայ, շար մարդկանց աչքից հեռու, որ նրանք բունս չա-  
 ւերեն: Ես թռչում եմ բարձր, բարձր և իմ երգը լսում է միայն  
 յաւիտենական արեւը:

Եւ իր լայն թևերը ուժղին թափահարելով՝ հպարտ արծիւը  
 բարձրացաւ դէպի երկնքի խորքերը և աչքից շրացաւ:

Բանտարկեալը խնդրեց կարապին և ճնճողակներին մի բան  
 երգել, բայց նրանք էլ մերժեցին նրա խնդիրը:

Յանկարծ մօտ թուաւ մի գեղեցիկ թռչնակ. պտուեց պա-  
 տուհանի առջև և նստեց երկաթէ վանդակի վրայ:

— Բարով ես եկել, իմ սոխակ: Ծնորակալ եմ, իմ փոքրիկ  
 թռչնակ, որ ինձ այցելեցիր: Պատմիր ինձ, ի՞նչ է կատարում  
 աշխարհում, մի երգ երգիր ինձ համար:

— Ես կը սպասեմ քեզ, թէ ի՞նչ է կատարում աշխարհում,  
 ևս երգ կերգեմ քեզ համար, — պատասխանեց սոխակը:

Եւ այնպիսի հնչիւններ լսեցին, որ խեղճ բանտարկեալն ու-  
 բախութիւնից լաց եղաւ, ընկաւ ծոցաւ վրայ:..

„Նրէկ առաւօտեան, լուսադէմին, — այսպէս էր երգում սո-  
 խակը, — շատ զով էր ու թարմ: Ես թուայ քո անակի մօտ, նրա-  
 տեցի կանաչ թփի վրայ բաց պատուհանի առջև և շարունակ եր-

գում էի ու երգում: Օրօրացի մէջ պառկած էր քո մանուկը. նա բաց էր արել իր խոշոր պայծառ աչիկները և հարցնում էր, „Ո՛ւր է հայրիկս, հայրիկս ո՛ւր է: Եւ ահանջ էր դնում իմ երգին:

„Քո հարազատները լաց են լինում, մտաբերելով քեզ: Նըրանք քեզ սիրում են, շատ են սիրում և կամենում են քեզ հետ տեսնել: Մի վհատիր: Ասուած տեսնում է որ դու անմեղ ես: Չար մարդիկ բաց կըթողնեն քեզ և դու նորից ազատ կըլինես, աշխարհ դուրս կըգաս, թարմ օդ կըծծես:

„Քո երեխաները քեզ կըփայփայեն և կըգուրգուրեն: Կըլինին մի խաղաղ ամառնային երեկոյ. երկար կըձգւեն ծառերի ստուերները, արևից կըպսպղան պատուհանների ապակիները, դու ձեր անակի դռան առջև նստած՝ պատմելիս կըլինես երեխաներիդ, թէ ինչպէս էիր դու այստեղ տառապում:

„Դու կըսովորեցնես նրանց, որ մեծանալով թոյլ չըտան չար մարդկանց չար գործեր անել. չըբարկանան չար մարդկանց վրայ. այլ աշխատեն, որ բոլոր մարդիկ իրար սիրեն, որպէս եղբայրը եղբօրը:

„Եւ քո երեխաները կըլսեն քեզ: Երբ նրանք կըմեծանան, դու կըտեսնես նրանց ազնուութիւնն ու բարութիւնը, դու կըտեսնես՝ ինչպէս նրանք օգնելիս կըլինեն աղքատներին: Դու կապրես երկար, շատ երկար: Մաղերդ բոլորովին կըճերմակեն, բայց սիրտըդ ուրախ կըթրթռայ կըծքիդ մէջ:


„Եւ երբ կըմեռնես, բոլորն էլ լաց կըլինեն քեզ վրայ և աղօթք կանեն. ու մի պայծառ արև օր կըտանեն քեզ կանաչ դերեզմանատուն: Գերեզմանիդ շուրջը վարդի թփեր կըտնկեն և ես ամեն լուսապէմին կըգամ, կերգեմ գերեզմանիդ վրայ:



Արևի շողիք

Բանարիս խորիք շողիէ ընկի,  
շողիքի միտնեմ, այ արև.  
Թող ինչ գունէ շողից գրկի,  
մօքս պսակիմ, զմն արև:  
Բայց չիմ լսում դու ինչ, աւանդ,  
էլ չիմ նայում դու վրաս.  
Լինի, շող-արև, շողից մայրաղ,  
նայաք վաղէկ դու կըզմաս...

64. ՄԻ ԽՆՁՐԵՆՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



I  
Անտառում բուսել էր մի վայրի խնձորենի: Աշնանը նրա վրայից գետին ընկաւ մի թթու խնձոր: Թըռչունները կտցահարեցին խնձորը: Նրա կորիզներից մէկը թագնեց հողի մէջ և այնտեղ էլ մնաց:  
Ողջ ձմեռը կորիզը մնաց ձեան տակ. իսկ գարնանը, երբ արևը տաքացրեց թաց հողը, նա աճել սկսեց: Նա արմատ ձգեց հողի մէջ, իսկ դէպի դուրսը արձակեց առա-

Ղին երկու թերթիկները: Թերթիկները մէջ տեղից բուսեց ցօղու-  
նը կոկոնի հետ միասին, որից դուրս եկան կանաչ թերթիկներ:  
Բազմացան կոկոնները, թերթիկները ու տերևիկները և հինգ տա-  
րուց յետոյ մի գեղեցիկ խնձորենի բուսնեց այնտեղ, ուր ընկել  
էր կորիզը:

Անտառ եկաւ պարտիզպանը իր բահը ուսին և տեսնելով  
խնձորենին, ասաց. «Ահա մի լաւ ծառ, նա ինձ պէտք կը դառնայ»:

Ողջ մարմնով գոզաց ծառը, երբ պարտիզպանը սկսեց նրան  
արմատահան անել և մտածում էր. «կորայ ես, բոլորովին կորայ»: Բայց  
պարտիզպանը գգուշութեամբ հանեց խնձորենին, արմատ-  
ները չըփսասեց և բերելով իր այգին, անկեց պարարտ հողի մէջ:

## 2.

Խնձորենին հպարտացաւ. «Երևի ես մի հազարգիւտ ծառ  
եմ, որ անտառից այգին բերին ինձ», մտածում էր նա և բարձ-  
րից էր նայում իր շուրջը դանաձ յայն տղեղ կոճղերին, որ փա-  
թաթում էին փայտաներով: Խեղճը չգիտէր, որ վարժոյ է ընկել:

Միւս տարին եկաւ պարտիզպանը իր կեռ դանակով և սկը-  
սեց թերթել ծառը: Սոսկաց խնձորենին և մտածում էր. «Էհ,  
այժմ ես բոլորովին կորած եմ»:

Պարտիզպանը կտրեց ծառի բոլոր վերին կանաչ մասերը,  
թողեց միայն կոճղը, որը ճեղքեց վերևից, իսկ ճեղքի մէջ խրեց  
մի ճիւղ լաւ տեսակի խնձորենուց: Ապա այդ ճեղքածքը ծածկեց  
ցեխով, փայտով կապեց, նեցուկներ դրեց կողքին և հեռացաւ:

## 3.

Պատահաբար խնձորենին հիւանդացաւ, բայց ջանել ու ա-  
ռողջ լինելով, շուտով կազդուրեց: Օտար ծառի ճիւղը առատօրէն  
խմում է ուժեղ խնձորենու հիւթերը և արագ աճում է: Այսպէս  
աճելով, ծառը չորս տարուց յետոյ տալիս է վարդագոյն հոտա-  
ւէտ ծաղիկներ: Աշնանը թափուում են ծաղիկները, իսկ նրանց  
տեղը երևում են խնձորներ:

Այս խնձորներն առաջնայ պէս վայրի ու թթու չեն, այլ  
մեծ, կարմիր և քաղցրահամ:

## 65. ԳՍՐՆԱՆ ԱՌՈՒՅՑ

Բարի լուսի զանգեր զարկին  
Ձրնգղընգալէն անսուշ, անսուշ,  
Լոյսը բացւեց մեր աշխարհքին  
ձրղճրղալէն անսուշ, անսուշ:

Հսվտում առուն խոխոջում է  
Գըլգըլալէն անսուշ, անսուշ,  
Քամին բարակ շընկընկում է  
Ձըլգըլալէն անսուշ, անսուշ:

Կտունկն եկաւ երամ կապած  
կըռկըռալէն անսուշ, անսուշ,  
Կաքաւն քարին տաղ է կարդում  
Կըղկըղալէն անսուշ, անսուշ,

Հարսն ու աղջիկ հանդերն ելան  
Շորորալէն անսուշ, անսուշ,  
Ծաղկանց բուրմունքն անմահական  
Սըլսըլալէն անսուշ, անսուշ:



66. ՄԱՅԻՍԻՆ

Գառններին հօտը ցիր ու ցան էր եղել սիրուն ծաղիկների և դալար խոտերի մէջ: Հովիւ ընկերներս հեռու, շատ հեռու էին ինձանից, բայց ես մենակ չէի: Եւ ի՞նչպէս կարելի է Մայիսին մեր լեռներում մենակ լինել: Մանրիկ մանիշակներն իրանց խաժուժ աչքերով խլլում էին երեսին, սիրուն սէզն ու սիւմբուլ խոտը գորգի պէս փուշել էին ոտներին տակ: Հապան խնկածաղիկը, մեր ժամի կնգրուկի պէս բուրում էր չորս կողմս: Խոտերի մէջ խումբ-խումբ ցցած կակաչներն էլ կաս կարմիր փեշերը փռած՝ փոփռալով լուռ մրմնջում, խօսակցում էին մեզմ գեփիւռի հետ: Գէմ ու գէմս հսկայի պէս թիփկը տած լերան լանջին, յոգնած ձերուկի պէս կռթնել, կշտին էր ընկել հինաւորուց ժայռը, լեռ սալառածը: Նրա կրծքից, խոր սրտից, լուռ խոխոջով հոսում էր մօր արցունքի պէս պարզ ու վճիտ առակը: Գլխիս վերև, ժայռի վրայ, առակի մօտ, ամեն տեղ, անուշ ճուղով ծլլում, թռչկոտում էին ծիտն ու արտուտը, լորն ու սարեակը, մեղուն ու բղբը, թիթեռն ու ճպուռը..

Հովիւ ընկերներս հեռու, շատ հեռու էին ինձանից, բայց ես մենակ չէի: Եւ ի՞նչպէս կարելի է Մայիսին մեր լեռներում մենակ լինել... չէ՛ բարձրում, էն շատ բարձրում տես կարմիր արևն է ցոլցողում, վառվառում ու իր կճան, կրճկրճան ճառագայթները սուր սլինի պէս ցցած լեռների կատարի ճեպճեմակ ձիւնին, ծակում, ծակծկում է նրանց պսպղուն պաղ սիրտը: Լուսինն էլ, դալկացած՝ գժգոյն լուսինն էլ հիւանդոտ, գունատ տղի պէս, վառ արևից վախեցած աչքերը խփխփելով՝ փախչում էր երկնքի կապուտ եզրից: Հապա սևուկ, սպիտակ գառնուկներին և ուլերիս մրկըկոցն ու մայոցը... Միթէ ես մենակ էի: Խօսում էին, բոլորը խօսում, խաղում ինձ հետ: Ես լսում էի նրանց, հասկանում...

67. ՄԱՅԻՍԸ

Ճամփայ տէք, սար ու դաշտեր,  
Ճամփայ բացէք էն հիւրին,

Նա բերում է ձագեր, թիթեռ,  
Նաշխուն օրեր մեր երկրին:

Աւան-չաւան գորգի վրով  
Տեսէք ո՞վ գալիս էս:  
Նուշիկ-մուշիկ, նազ ու տուգով,  
Միրուն գէմքով ժպտերես:

Գուրս են գալիս նրա առաջ  
Գառնուկ, թռչնիկ, մարդ, ծաղիկ,  
Հազար գոյնի շորեր հագած,  
Երգ ու ապով գեղեցիկ:

Ճամփայ տէք, ծառեր ու խոտ,  
Մեր անուշիկ էդ հիւրին,  
Նա Մայիսն է ցողոտ-շաղոտ,  
Ամիսների թագուհին:

68. ՍՐԵՒԻ ՄՕՏ

1.

Մի անտէք երեխայ՝ ցնցոտիներ հագած կուշ էր եկել պատի տակ: Գարնան անուշ արևը բարի աչքերով նայում էր նրան:

— Կարմիր արև, բարի՛ արև, դո՛ւ ես միայն ինձ տաքացնում — մտածում էր խեղճ մանուկը, — դո՛ւ ես միայն ինձ զգուժում, համբուրում, ինչպէս երբեմն իմ անդին մայրս: Եթէ ոչ՝ մարդիկ աչք չեն դարձնում վրաս:

Բայց կամաց-կամաց արևը թեքում էր կանաչ սարերի յետևը. երեխան կարօտով ու արցունքով նայում էր նրան, մինչև որ ոսկեհեր արևը սահեց ու անցաւ սարի այն կողմը...

— Ձէ, ես, չեմ կարող առանց արևի. — վճռեց մանուկը. — ես



պիտի երթամ արևի մօտ, ես զիտեմ ճամփան, ա՛յ, այս սարի յետեր:

Վճռեց ու ճամփայ ընկաւ:

## 2.

Մութը իջնում էր և կանաչ սարը սևերով ծածկուում: Ճամփին մարդիկ էին հանդիպում և հեռուից ձայն տալիս:

— Է՛յ, հէ՛յ, ո՞վ ես գու:

— Ճամփորդ տղայ եմ, — սլառասխանում էր երեխան:

— Ո՞ւր ես գնում:

— Արևի մօտ. ա՛յ, այս սարի յետեր:

— Յիմա՛ր տղայ. — ասում էին նրանք ու հեռանում:

Բայց երեխան ուշք չէր դարձնում. նա պարզ զգում էր, որ արևն այս սարի միւս երեսին է. մի քիչ էլ, մի քիչ էլ ու կը լինի արևի մօտ:

Ու անվախ, վստահ քայլերով գնում էր վերև, բարձր, միշտ բարձր:

## 3.

Բաւական ուշ էր արդէն, երբ լսեց մօտիկից շներէ: հաջոց ու տեսաւ, որ շատ մօտիկ մի կրակ է շողջողում:

— Ո՞վ ես. — լսեց խաւարի միջից մի ձայն, — ո՞ւր ես գնում:

— Անտէր ճամփորդ տղայ եմ, գնում եմ արևի մօտ: Ասա՛, ո՞րն է արևի ճամփան. մութն է, էլ սարերը չեմ տեսնում:

Ճրագը ձեռքին մօտեցաւ երեխային մի մարդ, նայեց նրան, նայեց ու ասաց քնքոյշ ձայնով:

— Դու դադրած կըլինես ու քաղցած, գնանք ինձ մօտ:

Ասաց բարի անձանօթը, բռնեց երեխայի ձեռքից ու տարաւ տուն:

## 4.

Նրա տունը մի հասարակ խրճիթ էր. մէջ տեղում վառում էր օջախը, որի շուրջը նստել էին բարի մարդու կիներ և երեք փոքր երեխաները, որոնք համարեա հասակակից էին ճամփորդ երեխային: Խրճիթին կից մի մեծ սրահում որսնում էին ոչխար-ները: Նա հովիւ էր, սարի հովիւ:

— Միրելի երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել: Թող չըլինէք երեք եղբայր, լինէք չորս, երեքին հաց տուող ձեռքը, չորսին էլ կըտայ: Միրեցէք սրան եկէք համբուրեցէք ձեր նոր եղբօրը:

Ամենից առաջ հովիւի կիներ մօտ եկաւ, գրկեց երեխային և մօր պէս ջերմ-ջերմ համբուրեց, յետոյ երեխաներն եկան և եղբօր պէս համբուրեցին նրան:

Երեխան իր սրտում մի քաղցր տաքութիւն զգաց. և նրան այնպէս թւաց՝ թէ արեւը հէնց ուղիղ խրճիթի վերևն է վառում...

## 5.

Ուրախութիւնից լաց եղաւ, անուշ-անուշ լաց եղաւ և պատմեց բոլոր իր դիտի եկածները:

Յետոյ օջախի առջև սեղան նստան, կերան, խմեցին, ծիծաղեցին: Մայրը նրանց համար անկողին շինեց և ամենքին քնեցրեց իրա կողքին:

Երեխան շատ էր յոգնած, տեղը մտաւ թէ չէ, խկոյն աչքերը լսփեց ու մնջաց...

Երազի մէջ նա մպտում էր ուրախ:

Իբրև թէ ինքը արևի մօտ էր, գրկել էր նրան ամուր ու պառկել էր նրա գրկում, տաք ու երջանիկ...

Մէկ էլ սրտի ուրախութիւնիցը վեր թոռաւ, գարթնեց ու տեսաւ, որ արևի փոխարէն իր նոր մօր գրկումն էր: Եւ նրան թւաց, որ արեւն ոչ թէ խրճիթի վրան է, այլ հէնց այս խրճիթի մէջը. որ ինքը ուղիղ հէնց արևի գրկումն է...

## 69. ԴԱՐՆԱՆ ԵՐԵԿՈՑ

Լուսնեակն անուշ, հովն անուշ,  
Շինականի քունն անուշ,  
Մագեց լուսնեակն երկնուց  
Հովիւի սրինգն էր անուշ:  
Հօտաղն եզներ կարածէ,  
Մածկալ պառկել, քունն անուշ:

Զրդրդուան քամին կրփչէ,  
 Ծովային հոյն էր անուշ:  
 Դաշտեր, ձորեր մնջեր են,  
 Զրեր գլգլան, ձայնն անուշ.  
 Հաւքեր թռան իրանց բուն,  
 Բլբուլի տաղն էր անուշ.  
 Անմահական հոտ բուրէր,  
 Քափուր վարդի հոտն անուշ:

70. ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1

Հարիւրաւոր տարիներ սրանից առաջ կապուտակ ծովի ափին մի գեղեցիկ այգի էր ընկած: Այգին այնպիսի բոյսեր ունէր, որոնց նմանը ոչ մի տեղ չըկար: Այգաեղ հիանալի ծաղիկները հպարտութեամբ շարժուում էին իրանց ցօղունների վրայ և օգը լցնում անուշահոտութեամբ:



Եւ ծաղիկներից իւրաքանչիւրը իրա համար մտածում էր «ես ամենից լաւն եմ, իզուր չէ, որ այգու թաղունհին եմ»:

Ծաղիկների մէջ ամենից աչքի ընկնողը վարդն էր: Նրա ձկուն ու քնքոյշ ցօղունը զարգարւած էր գեղեցիկ տերևներով, իսկ տերևները այնպիսի վարդերով, որ երկնային անուշահոտութիւն էին սփռում: Թէպէս ծաղիկների մէջ ամենից գեղեցիկը վարդն էր, բայց նա չէր հրապարտանում, այլ նոյնիսկ իրան աղեղ էր համարում, որովհետեւ իր քոյրերի փայլը չունէր: Նրա սրտակը սպիտակ էր ու մաքուր, ինչպէս նոր գրած ձիւնը:

2.

Մայիսեան մի քաղցր զիշեր հեռու երկրներից թռաւ, եկաւ ծաղիկների երգիչը—սոխակը:

Ծաղիկներն անհամբեր սպասում էին և ամեն մէկը կարծում էր. թէ այդ հիւրն իրան պիտի գովէ:

Սոխակն իջաւ յաստիկի թփի վրայ: Ուղիղ նրա դիմացը կանգնած էր սպիտակ վարդը իր քնքոյշ թերթիկներով:

«Ինչպէս գեղեցիկ ես դու. այսօրանից ծաղիկների թագուհին եղիր, երկրի զարդարանքը», երգեց սոխակը նրա գեղեցկութեամբ գերւած:

Վարդը չէր ուզում հաւատալ իր ականջներին: Միթէ ծովի այն կողմից եկած երգիչը իրան է գովում: Միթէ իրան են վերաբերում սոխակի խօսքերը. իրան, որին մինչև այդ ժամանակ արհամարհում էին թուշուններն ու թիթեռները:

Նրա բոլոր ծաղկաթերթերը գողացին. նա այնպէս բազգաւոր էր, որ կարմրեց:

Հէնց այդ ժամանակից վարդը ստացաւ այն, ինչ որ չունէր. նա յանկարծ կարմրեց և եղաւ ծաղիկներից ամենագեղեցիկը:

71. ԳԱՇՏԻ ՎԱՐԴԸ

Փոքրիկ աղան մի վարդ տեսաւ,  
 Սիրուն վարդը դաշտի միջին.  
 Ուրախ ուրախ շուտ մօտեցաւ,  
 Որ լաւ նայէ սիրուն վարդին:

Այ իմ վարդին, կարմիր վարդին,  
 Կարմիր վարդը դաշտի միջին:

Մանուկն ասաց. Գեղ կըքաղեմ,  
 Այ իմ վարդիկ դաշտի միջին.  
 Վարդիկն ասաց. — փշեր ունեմ,  
 Դու ձեռ մի տալ կարմիր վարդին:

Այ իմ վարդին, կարմիր վարդին,  
 Կարմիր վարդը դաշտի միջին:

Չար երեխան վարդը քաղեց,  
 Սիրուն վարդը դաշտի միջին:

Վարդը նրան խիստ ծակծկեց,  
Բայց և գերի մնաց ձեռքին:

Այ իմ վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:

72. ՈՉԻՅՐ ԿԹԵԼԸ

Հովտում մի ձայն էր լսում. լուռ կացեք. այդ հովիւն է իր սրինգը փչում, բրդոտ ոչխարները ջրելու տանում: Ահա ոչխարի առան երևաց, գլուխները քարշ՝ գնում են գնում, մի-մի բառաչում կամ թէ խոտ կծում ու սաստիկ տաքից հագիւ հագ քայլում: Վերջապէս հասան առւի ափին, գլուխներն իսկոյն ամենքը մեկնեցին ու պազուկ ջուրն անուշ փսսոցով իրանց քաշեցին: Սրանք մայրերն են, բայց սւր են գառները, սրանց ձագուկները: Նրանք քիչ հեռու՝ մի բլրի վրայ խոտ են արածում, գլուխները ծռում, դէս ու դէն նայում, անուշ մայրենով կանչում, բզաւում: Եւ ահա հասաւ կթելու ժամը, ոչխարը նստած տեղից վեր կացաւ. իսկ բլրից գառները խունջիկ ու մունջիկ առւի մօտ եկան: մայրը գառնուկին, գառը մայրիկին փնտաւում, որոնում է հարկւրի միջին: բառաչ ու մայրեն և իրարանցում. շարժում են ամենքի սիրան ու հոգին:.

Տես, ահա ձայնով գառն մէկ մէկու, լռիկ ու մնջիկ կանուկեց մեր մաքին, գառնուկն առաջի երկու սաքը ճկեց և մօր ստինքներն իր բերանը քաշեց. անուշ մշշոցով ծծում է ծծում, իր փաքրիկ դնչով մօր կրծքին խփում, երբեմն էլ մօր ծիծն առամների տակ ձգում ու կծում և խիստ ցաւեցնում, բայց ներսը մայրն իր լեզուն հանած՝ սիրուն գառնուկի դնչիկն է լիզում ու մեծ հրճանքով նրան գուրգուրում:.

Անցաւ մի րոպէ, ահա կովկիթներ, կաւէ պուտուկներ շրջ խկ ու թրջ խկ մէջտեղ շարեցին և հարս ու աղջիկ թևերը վեր քաշած հովիւներ ինչ կթել սկսեցին խրժ-բրժ-խրժ-բրժ լսում են ձայներ, փրփրան կաթով լցում ամաններ. իսկ մեր հեզ

մաքին միամիտ կանգնած է տիրոջ առաջին, ոչ ազան խլում է ձագուկի բաժինը:.

Երբ վերջացրին, հովիւներն իսկոյն մօրն իր սրբուց նորից բաժանեցին, առաջւայ կարգով արօտ քշեցին:

72. ԿԱՔԱԿԵ ԵՐԳԸ

Քրու թե փափուկ ու խափու փրկ,  
Այլ քի կը փուլ, կարմիր փոքրիկ,  
կարմիր-կարմիր փոքրիկներով,  
կը շօրօրաւ ծուլ փրկներով:  
Ախրու նիկ, սիրու նիկ,  
Նախընէ կախալի:  
Արք կը կայնիս մանուկ փարիս,  
Աստու կախա ծաղիկներին, -  
Աստու-չորիքը զըւարք կանիս,  
Պարզի ծովէն սիրտ կը հանիս.  
Ախրու նիկ, սիրու նիկ,  
Նախընէ կախալի:





## 74. ԱՄԱՌԸ

Եկաւ փայլուն ամառը իր տաք, շողշողուն արևով, կապոյտ երկնքով ու քաղցր օդով:

Պարտէզները լիքն են գոյնղօյն, անուշահոտ ծաղիկներով: Հայրա ու մարգաղեսին ծածկւած են նոր հնձած անուշաքոյր խոտով:

Քոչուները թռչկոտում են ծառերի վրայ սասից սաս, Ղահաէր մեղուները զբաղւած են ձմեռան պաշարի պատրաստութիւնով:

Սիրուն, չլպտուրիկ—խայտազդէտ թիթեռները փայլուն արևի ճառագայթների տակ, ծաղիկից ծաղիկ թռչկոտելով՝ անց են կացնում իրանց կարճատև կեանքը:

Ուրախ են նաև փոքրիկ երեխաները, որոնք սղջ տարին իրանց դասերը սովորելով, այժմ փայելում են ամառնային երկար արձակուրդը:

Ինչպէս լաւ է, երկար աշխատելուց յետոյ վազվզել մաքուր, առողջարար օդի մէջ: Եւ փոքրիկները վազում են, գարձանում ու իրանց հնչիւն ծիծաղով օդը թնդացնում:

## 75. ԱՄՅՈՒ

Շոք ու աօթ է, քամի չըկայ,  
Արևն այրում է սաստիկ,  
Ծարաւ դաշտում կուշ է եկել  
Շուշանն յոգնած ու հեղիկ:

Քամին սարից էլ չի՛ գալիս  
Այրւած բոյսին յոյս տալու,  
Պարզ ու վճիտ առուն ցամքեց  
Լոկց հառաչն երգելու:

Ծանր է շնչում խիտ անտառը,  
Լուռ ու գունատ է կաղնին,  
Զեփիւռն ու յօղ էլ չեն իջնում  
Նրա դալուկ թերթերին:

Դաշտում չըկան սարեակ, արատու,  
Երգ ու դայլայլ չեն լըւում,  
Մասաղ հովիւ սրինդն անուշ  
Առի ափին չէ հնչւում:

Եւ այրում են աւազ ու հալ  
Ահեղ տապից արևի,  
Ծառ ու ծաղկունք խոնարհ գլխով  
Սպասում են վախճանի...:

## 76. ԱՆՎԵՀԵՐ ՏՂԱՆ

1,

Մի անգամ սարսափելի փոթորիկ բարձրացաւ: Բառն ժամ անընդհատ անձրևում էր, կարծես՝ երկրորդ ջրհեղեղ էր լինելու: Փոքրիկ առակները յորդահոտ գետեր էին դառել, իսկ գետերն իրանց տաշտից գուրս գալով՝ սղողում էին շրջակայքը:

Այդպիսի վատ եղանակին, երեկոյեան ժամը 9-ին 14 տա-

ընկան Կարլոսը դուրս եկաւ խրճիթից, որպէսզի ընթրիք տանէ իր հօրը: Նրա հայրը երկաթուղու պահապաններից մէկն էր, նա հսկում էր «Սատանայական անցք», կոչւած երկաթէ կամուրջը, որ ընկած էր մի սոսկալի անդունդի վրայ: Նրա տակից հոսող փոքրիկ առակը կատաղի հեղեղատ էր դառել. նրա գոսոպ ալիքներն ուժով դիպչում են կամուրջի երկաթէ կողերին:

## 2

Հանդարտ, բայց առայգ քայլերով առաջ էր դնում Կարլոսը սաստիկ մթութեան մէջ: Սրբէն բաւական մօտ էր կամուրջին, որ լսեց մի սարսափելի դղրոց: Նրա գլխում իսկոյն ծագեց այն միտքը, թէ կամուրջը քանդուեց, — այն կամուրջը, որի վրայ գտնուում էր հայրը...

Կարլոսը արագացրեց իր քայլերը և նրա առաջ բացեց մի սոսկալի տեսարան: Հօր փոքրիկ սայլակը և կարմիր լապտերը մնացել էին դրսի ձողերի վրայ, իսկ այն հաստատուն կամուրջից ոչինչ չէր մնացել: Չրկար և հայրը:

Տղան քիչ մնաց ուշաթափուէր, բայց իրան զսպեց: Նա յիշեց, որ այդ կամուրջից պէտք է անցնի քաղաքից եկող արագընթաց գնացքը: Ոչ կամուրջ կար, և ոչ էլ պահապան, որ զգուշացնէր: Կնայքը կըկործանէր «Սատանայական անցքի» անդունդի մէջ:

## 3.

Կարլոսը մտառացաւ իր անձնական վիշտը. նա վճռեց փոխաբերել հօրը և ազատել դնացքը վտանգից: Բայց ի՞նչ անէր նա: Ժամանակն անցնում էր, իսկ գնացքը հետզհետէ մօտենում էր: Կարլոսն արդէն լսում էր նրա ձայնը, զգում էր ճանապարհի զողզողոցը: Նա վերցրեց կարմիր լապտերը, կանգնեց ճանապարհին, անդունդի ափին և բոլոր ուժով աղաղակեց. «կամուրջը քանդուել է, կամուրջը քանդուել է»: Մեքենայատուր տեսնելով կարմիր նշանը, դադարեցրեց դնացքը և հազիւ կարողացաւ կանգնեցնել նրան անդունդից մի քանի քայլ հեռու: Ան-

դունդի եզրին ուշաթափ ընկել էր Կարլոսը կարմիր լապտերը կողքին:

Երկաթուղու ծաղայտոյնները և ճանապարհորդները դուրս թափուցին վազաններից և սկսեցին համբուրել հերոս աղային:

Երեխան ուշքի գալով՝ ուրախութիւնից արտասուեց, որ կարողացել էր ազատել երկու հարիւր մարդկանց կեանքը:

## 77. ՍԱՐԵՐԻ ՈՐՊԻՆ

Արծաթ գօտին ճիւնտ սարից  
Չգոււմ է ցած աղմկալից  
Ու դեռ շրթին ուրախ, գարթ՝  
Սէզ սարերի երզը հարար՝  
Թաղոււմ է խո՞ր  
Փայտոս կրծքում՝  
Լալիս անգօր,  
Խուլ հեծեծում.  
Ու բողոքի,  
Աղաղակի  
Չայն է թնդում  
Խոր անգնդում՝  
Դում, դում, դում...

Եւ ներքեում, անա նորից  
Փայլփլեղով մթին ձորից  
Մի նոր գօտի է դուրս հօսում.  
Բայց անլեզու, էլ չի խօսում.

Երզը մտցած՝  
Առանց փրփուր  
Սզուր դարձած՝  
Սողում է լուռ  
Սոյս՝ւմ, յիշում  
Երգերն անուշ  
Ու վաշ վշում՝  
Վաշ-վաշ, վաշ-վաշ...



## 78. Ք Ա Մ Ի

ՕՓ, ինչ սոսկալի քամի էր երէկ. Դա ոչ թէ սովորական քամի էր, այլ իսկական փոթորիկ: Քամին պոկում էր ծառերի զալար տերևները ու շաղ տալիս օդի մէջ. արմատախիլ էր անում մատղաշ ծառերը, մինչև գետին էր կոացնում դարեօր, հաստաբուն կաղնիները. կոտրատում էր ճիւղերն ու ստերը:

Այդ խիստ քամու ժամանակ ես և քոյրս գտնուում էինք այգում: Մեր աչքի առաջ քամին խորտակեց հին լորենին: Հայրս իր ձեռքովն էր տնկել այդ ծառը և շատ տխրեց, երբ լսեց, որ քամին ոչնչացրել է նրան:

Այդու լճակի շուրջ քամու զօրութեամբ ավերից դուրս էր թափւում: Լճակի վրայ բարձրանում էին կատաղի ալիքներ և սարսափ ազդում մեզ վրայ: Մեր խաղաղ լճակը այդ օրը բոլորովին փոխւել էր. նա ամբողջովին ծածկւած էր սպիտակ փրփուրներով:

Վախենալով, որ քամին երկար կը տևի, որոշեցինք տուն վերադառնալ: Անցնելով քամու ջրազացի մօտով, մենք տեսանք, թէ ինչպիսի արագութեամբ պտոյտ էին գալիս ջրազացի լայն թևերը:

Քամին վզգում էր, սունում. ազմկում. շուրջը մռթն էր, մռայլ կարծես աշխարհի վերջը լինէր:

Մենք արագացրինք մեր քայլերը: Քամին աշխատում էր խլել մեր գլխարկները և մենք դժարութեամբ էինք պահպանում նրանց: Փորձեցինք պաշտպանել հայրիկի մեծ հովանոցով, բայց քամին անմիջապէս շուռ տւեց նրան: Ես և քոյրս պինդ փաթաթւեցինք իրար և շարունակեցինք մեր ճանապարհը: Բարեբաղաբար քամին մեր յետեիցն էր փչում և մենք առանց մեծ ոյժ գործ դնելու տուն հասանք:

Աեղճ մայրս խիստ անհանգստացել էր մեր պատճառով և ստատիկ ուրախացաւ, որ մենք անվտանգ տուն եկանք:

## Լեմպիր

Լեմպիր ին վապուճ բարչր լիւնիբից խիստ քամու շիւրից, փախուճ, գնուճ ին, կարմիս խրպուճ ին ծարաւ արպիրից:

Կայէ՛ք, այ ամպիր, ինչո՞ւ է՛ք փախուճ, անչրեւ չէ՛ք քափուճ, միք ծարաւ արպիր՝ օրիր համրիլով՝ շիւր ին սպասուճ:

Քամի, դու քամի, խղճու արպիրին, թող այդ ամպիրին. թող կանգնելն, թափելն անչրեւի շիւր, զրին միք արպիր:

88. ՀԱՆՆԵԼՈՒԿ

Նկէք տեսէք ո՛վ է բազմել  
 Մեր սէզ. սիրուն սարերին.  
 Կանաչադարձ պսակ կազմել,  
 Փաթաթել է ծառերին:  
 Սասած երկիր նրա անից  
 Արտասուում է, հառաչում,  
 Այդ արցունքն էլ փրփրալից  
 Գետակ կազմում, կարկաչում:  
 Նրա գլխին շողշողում է  
 Ճամանչափայլ սուկէ թազ,  
 Եւ ամենին նա բաշխում է  
 Կենդանութիւն, սէր ու կեանք:



81. ՍԵՆ-ԳՕՏՍՐԴԻ ՇՆԵՐԸ

1.

Երկու երկրներ կան—Շվեյ-  
 ցարիան և Իտալիան, որոնք կողք-  
 կողքի են ընկած: Այդ երկու եր-  
 կրների մէջ տեղում գտնուում են  
 Ալպեան լեռները: Այդ լեռներն  
 այնքան բարձր են, որ նրանց  
 վրայ ձիւնը երբէք չի հալչում:  
 Շվեյցարիայից Իտալիա գնալիս  
 պէտք է անցնել այդ լեռներով:  
 Ճանապարհն անցնում է Սէն-Գո-  
 տարդ սարի վրայով:

Սարի ամենաբարձր մասում  
 ճանապարհի վրայ շինուած է մի  
 վանք: Այնտեղ ապրում են  
 վ ա ղ ա պ ե տ ն ե ռ: Նրանց

մօտ հանդիստ ու իջևան են գտնում անցորդները:

2.

Սէն-Գոտարդը մշտապէս մտայլ է: Սմանն իսկ բացի մշու-  
 շից ոչինչ չի երևում: Իսկ ձմեռը այնպիսի բուքեր են լինում,  
 որ հինգ արշին տարածութեան վրայ մարդիկ ձեռն տալին են  
 թաղում: Յաճախ ճանապարհորդները գոն են գնում այս բքե-  
 րին: Վարդապետները գտնում են մի տեսակ շներ, որոնց սովա-  
 րեցնում են ձեռն միջից մարդկանց դուրս քաշել և ազատել:

Մի անգամ այդ ճանապարհով դէպի Շվեյցարիա էր գնում  
 մի կին իր փոքրիկ երեխայի հետ: Բուք բարձրացաւ, կինը դուրս  
 բնկնելով ճանապարհից, նստեց ձեռն վրայ և ստոեց: Վարդա-  
 պետներն իրանց շներով դուրս եկան և գտան մօրն ու երեխա-  
 յին: Նրանք տաքացրին և կերակրեցին երեխային, իսկ մայրն  
 արդէն մեռած էր: Նրան թաղեցին վանքում:

82. ՀՐԱԻԷՐ

ԷՏԷՅ, ախպէր, էտեղ արի  
 էս շոգ վախտին ո՛ւր կերթաս.  
 Սոված կըլինես, բեզրած կըլինես  
 Ըշտապ-ըշտապ ո՛ւր կերթաս:

Արի մեզ մօտ, Ասածու գրկած  
 Գու մեր հիւրն էս թանկագին.

Արի դէզի շաքի տակ,  
 Գու տեղ ունես մեր գլխին:

Հէնց նոր մերոնք հացի նստան,  
 Գերանդիքն էլ բթացան.

Արի մեզ մօտ, քու էլ, ախպէր,  
 Կուրծքը շոյին սրազ հովեր:

ԷՏԷՅ, արի, ճամբորդ ախպէր,  
 էս շոգ վախտին ո՛ւր կերթաս.

Սոված կըլինես, բեզրած կըլինես,  
 Ըշտապ-ըշտապ ո՛ւր կերթաս:

1.

Յուլիսի սօթ օրերից մէկն էր: Արեգակն անինսոյ այրում էր. օրն անառնելի էր. ամեն առաքկայի վրայ տիրում էր թմրութիւն և աաղակութիւն: Թռչունները լսել էին. ծառերը ցած էին թողել իրանց սատերը. թառամել էին սիրուն խոտերը և կպել էին դեանին: Այլես լսելի չէր լինում գաշտային ծաղիկների ուրախ շշնջիւնը. նրանք խոնարհեցրել էին իրանց գլխիկները և կամաց-կամաց մեռնում էին ծարաւից: Կովերը, ձիաները, այծերը հազիւ-հազ շարժւում էին:

Ամեն ինչ լուռ էր, ոչ մի ձայն չէր լսում... Մի կողմում՝ օդի շերմութեամբ լցւած տարածութեան վրայ երևում էին խորճիթներ, այնտեղ մարդիկ տխրութեամբ նայում էին դէպի ժլատ երկինքը, որ նրանց անձրև չէ տալիս: Այդ սգաւոր գիւղերի մէջ այլևս լսելի չէն լինում ո՛չ ծիծաղ, ո՛չ կատակներ և ոչ ուրախ երգեր:

Մինչև անգամ երեխաները, թուլացած օրւայ տապից, մոռացել էին իրանց խաղը և սիրելի փողոցները, սուս էին կացել և թագնւել մարաքներում:

2.

Երաշար սարսափելի դժբախտութիւն է գիւղացու համար: Երանշտ, — դա մի դանդաղ մահ է հազարաւորների համար:

Նա աղքատացնում է մինչև անգամ նրանց, որոնց մօտ փոքր-իշատէ պահել էր ուսեստի հին պաշարը... Զինականները հասկանում են այդ և արամութեամբ նայում են դէպի երկինք:

Ամբողջ երկու ամիս նրանք սղորմութեան են սպասում երկնքից, բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չըկայ: Այրւեց խոտը, այրւեցան անտառները նիհարեցին, լգարեցան տաւարները: Մարդիկ յուսահատւած են:

Արդէն միքանի անգամ բարի քահանան՝ սուրբ մատուցներ, խաչ ու պատիկեր իր հետ աննելով, անդաստան կատարեց անտառների և գաշտերի շուրջը, Աստծուց անձրև խնդրելով: Շի-

նականների ջերմեռանդ բազմութիւնը հաստատ հաւատով և արտառախառն ազօթքներով շրջապատել էր նրան: Զօրաւոր է հաւատար այդ խեղճ, համբերող մարդկանց մէջ:

3.

Ահա բաց կապտագոյն երկնքի վրայ երեաց ամպի մի փոքրիկ, թափանցիկ սլաօառ: Նա նմանւում էր մի սպիտակ թաշկինակի, որ հազիւ նշմարւում է: Նա կամաց-կամաց լողում է, կնրծես վախենալիս լինի... Թշուտ գիւղացիները տեսան նրան և նրանց վշտայի սրտերում ծագեց յոյսի մի պայծառ նշոյլ... Մօտ էր փրկութիւնը սովատանջ մահից... Բայց փոքրիկ ամպիկը, գուցէ մի շուտէից յետոյ նա անհետանայ... Ո՛չ, նա կըցօղէ երկիրը բարեբեր անձրևով:

Սպիտակ ամպիկը մեզմ սիրով նայում է անբազդ գիւղերի, տխուր խորճիթների վրայ և հեռոցհեռէ աճում, հաւաքում է իր ոյժերը, որ փրկէ սովածներին:

Շուտով նա այնքան աճեց, որ դարձաւ մի ահագին սև մեզ, որը սիրալիր կերպով ցած էր իջնում թշուտացած գաշտերի և տխուր ծառերի վրայ: Լսելի եղաւ մի խուլ դղրդիւն, որ հեռքհեռէ սաստկանալով, սկսեց որոտ խոն մի հարւածը միւսի յետևից աւելի բարձրաձայն տարածել նիհար անտառների, հեռաւոր լեռների մէջ, — և օձի նման գալարւելով՝ նշմարւեց կայծակը... Մի անգամ ևս, մի անգամ ևս... Տեղաց առտտ, զովացուցիչ անձրև: Երկար թափւում էր նա, ուռգելով ամեն մի արմատը տոշորւած խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ընկուզենու, սգաւոր ուռենու, և նրանք ազահութեամբ ծծում էին նրա զովացուցիչ կաթիլները: Ծառերն սկսեցին ազատ շունչ առնել, խոտերը կանաչ գոյն ստացան, ծաղիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները, թռչուններն սկսեցին ձրլւրլալ, երեխաները դուրս թափւեցին դէպի փողոցները և սկսեցին լճակներ շինել ջրերից: Շատ հեռւից լսելի էր լինում նրանց ուրախաձայն ծիծաղը: Կեանք ստացան գիւղերն ու գաշտերը...



Այն սև ամպեր

Այն սև ամպեր, վայն սև ամպեր,  
 սիրտս պատեց սև ու մութ .  
 արդիօ՛ք ի՞նչ է՛ք դու՛ք ի՞նչ բերում՞,  
 դարձան անշուն թէ կարկուտ . . .  
 Յուսով-լուսով արար ի՞մ ցանկը,  
 արթուն թափել ու խրատել,  
 ողջ սուրբերին մո՞՛ք ի՞մ վառել:  
 աղօթք արել, որ երկրի՛ն  
 արարիս նայի, քանիս ի՞նչույի,  
 որ քայլ, կհանի քայլ ի՞մ հույսին  
 վայն թափելիս . . . Կարուստ չանել,  
 թէ որ անհույ մ'նային . . .  
 Այ, սև ամպեր, ի՞նչ էք գոտում,  
 Սիրտս պատեց սև ու մութ .  
 Արդեօք ի՞նչ էք արտիս բերում,  
 Կարնան անձրև, թէ կարկուտ . .

85. ԱՂԲԻՐ

Ամառնային շոգ օրերից մեկն էր: Երեք ճանապարհորդ հանդիպեցին իրար մի վճիռ, սառը աղբիւրի մօտ, որ դուրս էր բղխում դեանից՝ մեծ ճանապարհից ոչ հեռու: Յստակ ջուրը հաւաքւում էր քարից շինած գլխի մէջ և այնտեղից հոսում կանաչ

արօտների միջով: Աղբիւրի շուրջը բուսել էին սուերախիա ծառեր:

Ճանապարհորդները հանգստացան ծառերի սուերի տակ և խմեցին ջուրը: Աղբիւրի գլխին մի քար էր դրւած, իսկ նրա վրայ դրւած էր. «նմանւիր այս աղբիւրին»: Ճանապարհորդները կարգացին այս խօսքերը և սկսեցին մտածել, թէ դա ի՞նչ է նշանակում:

— Դա լաւ խրատ է, ասաց ճանապարհորդներից մէկը, որ ըստ երևոյթին վաճառական էր:— Աղբիւրն անգաղար հոսում է, ստում է նա, գնում է հեռուն, ուրիշ աղբիւրների ջրեր է ընդունում իր մէջ, մեծ գետ է դառնում: Այդպէս էլ մարդս անգաղար պէտք է աշխատի, կարգի բերէ իր գործերը, որպէսզի յաջողութիւն գտնի և մեծ հարստութիւն գիգէ:

— Ոչ, ասաց երկրորդ ճանապարհորդը, որ մի երիտասարդ էր: Իմ կարծիքով դա նշանակում է, որ մարդս իր հոգին պէտք է այս աղբիւրի պէս վճիռ ու մաքուր պահէ, նա պէտք է հեռու վանէ չար մտքերն ու ցանկութիւնները:

Երրորդ ճանապարհորդը, որ մի ծերունի էր, ժպտաց և ասաց. ճիշտ է ասում պատանին: Նրա ասածներին կաւեղացնեմ և այն, որ աղբիւրը ձրիաբար ջուր է տալիս ծարաւ մարդկանց և մեզ սովորեցնում է բարիք անել ամենքին անխաիր և առանց վարձատրութեան:

86. ԲԱՐԻ ԳՈՐԾ

Սարի լանջում, ժայռի տակ,  
 Ջուր էր բղխում ստունորակ,  
 Եւ ցրւելով խոտերում,  
 Իզուր ճահիճ էր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ  
 Շինեց հովիւն ու տարաւ,  
 Խաղ ասելով նա անուշ,  
 Ջրեց հօտը իր ծարաւ:

Պախրէն անցաւ այն սարից,  
 Շողից հանած չոր լիզուն,  
 Կուշա կուշա խմեց աղբիւրից,  
 Ապա նայեց Աստծուն:

Անցւորն եկաւ ասթակէդ,  
 Սառն աղբիւրը որ տեսաւ,  
 Գլխարկն առաւ ու չաքեց,  
 Խմեց, սիրաւ հովացաւ:

Ապա թէ իր օրհնանքը,  
 Մաղթեց մարդը այն բարի,  
 —Քո շինողիդ օր-կեանքը  
 Զրի նման երկարի...




87. ԴՍՅԼ ՈՒ ԵԶՆԵՐ

Երեք եզ մի գաշտում արածում էին, մինը սև էր, միւսը կարմիր, իսկ երրորդը սպիտակ: Մի սոված գայլ տեսնելով եզներին՝ մօտեցաւ նրանց: Եզները քամակ քամակի տւին, պզգեքը սրեցին և պատրաստւեցին յարձակել գայլի վրայ:

Գայլը դիմեց շողքորթութեան:

Տօ, լաւ բարեկամներ, ինչո՞ւ էք անողին պոզերով սրտածաք անում ինձ: Ես ի՞նչ մեզք ունեմ: Ես էլ ձեզ պէս չորս սառնեմ, երկու ականջ, մի պոչ: Միթէ լուած բան է, նմանը նմանին քնաս տայ: Մէկ էլ որ, ես ձեր հորթուկի չափ էլ չըկամ, խելը կտրելու բան է, որ մեծերը փոքրից վախենան: Զուր տեղը սրտերդ ան էք ձգում և ախորժակ ներդ էլ փչացնում: Ժշմարիտ է, վերևումն էլ լաւ խոտ կար, բայց անկեղծն ասած՝ կուլ չէր գնում, ընկեր էի ուզում և Աստուած ձեզ պէս լաւ բարեկամներ հասցրեց:



Եզները հանդստացան և սկսեցին արածել: Գայլն այնպէս էր ցոյց տալիս, թէ ինքն էլ արածում է.—խոտը պոհատում էր, ծածուկ վեր ածում և քաղցր-քաղցրը խօսում էր սև և կարմիր եզներին հետ: —

Բարեկամներ, դուք երկար չէք կարող այս կանաչ խոտում արածել, սպիտակ եզը ձեզ փորձանքի մէջ կընկնէ: Դուք ցերեկն էլ չէք երևում, իսկ սպիտակը գիշերը ճրագի պէս լոյս է տալիս: Թոյլ աւէք ես նրան ձեզանից հեռացնեմ, վաղօրօք ձեզ էլ փորձանքից ազատեմ:

Հն, հն, ուզիդ ևս տաւմ, բարեկամ, միաձայն գոչեցին եզները:

Գայլը վազեց, սպիտակին վեր կոխեց:

Նա բառաչում էր, իսկ սև ու կարմիրը պոզերը չարդախ արած՝ ծիծաղում էին:

—Օգնեցէք, եզբայրներ, բզգում էր սպիտակը գայլի տակից, մի օր էլ ձեր վզին պիտի չաքի:

—Կորի, անպիտան, քեզ օգնէ՛ք, որ սպիտակ դոյնովդ կրակը ձգես մեզ:

Գայլը խրախուռւած այս խօսքերից, պատաստեց սպիտակին և անուշ արաւ միսը:

Երբ նորից քաղց զգաց, մօտեցաւ սևուկին և փախսոց ափանջին:

Գիտէս ինչ կայ, բարեկամ, դու ցերեկն էլ չես երևում, բայց

կարմիրը մթնուժը պարզ երևում է: Ես հաստատ եմ ասում քեզ, որ կարմիրը իր անշահ գոյնով այսօր կամ վաղը փորձանք է բերելու քո գլխին: Յրի քեզ դարձեալ մի լաւութիւն անեմ և ֆաւսակար կարմրիցն ազատեմ: այնուհետեւ մեն մենակ արածիր այս կանաչ խոտերում, որքան քէփու է ուզում:

—Շատ բարի, ասաց սևուկը, ճշմարտան ես ասում, համաձայն եմ, ինչու ուրիշի համար փորձանքի մէջ ընկնեմ:

Գայն հասաւ, վեր կոխեց կարմրին և ժանիքները խրեց նրա կոկորդի մէջ:

—Սևուկ եղբայր, օգնիր ինձ, սպանիր այս կեղծաւորին, թէ չէ քեզ էլ պիտի ուտէ:

— Ինչո՞ւ սպանեմ բարերարին. քեզանից կազատեմ, որ փորձանքի մէջ չընկնեմ, քո բաժին խոտն էլ ինձ կըմնայ, կուտեմ ու կըգլխանամ:

Գայը կարմրին էլ կերաւ:

Երբ սրա միտն էլ հատեցրեց, մօտեցաւ սևուկին և ասաց. «Պխորժակս կապել է, այս քանի օր է մի կտոր միս չեմ կարողանում կուլ տալ: Ասում են, եթէ եզան կաշին առամներս քսեմ, ախորժակս կըբացւի: Խնդրում եմ կատարես այս փորձիկ խնդիրս, միայն փակիր աչքերդ, վախենում եմ»:

Միամիտ սևուկը աչքերը փակեց և այլևս երբէք չըբացեց:

88. ԵՐԵՒ ԸՆԿԵՐ

Բախտի բերձամբ իրար մօտ  
Մի խուլ, մի կոյր, մի անտա  
Հանգիպելով նստեցին  
Մի տաք գրոյց կցեցին:

— Լսէ՛ք, յանկարծ թուլն ասաւ,  
Սկանջիս մի ձայն հասաւ,  
Իսկ կոյրը թէ, հրէն համար  
Հեռում կասես ըսուեր կայ:

Կոյրն էլ ասաւ, երբ լոնց,  
Անտան շտապ վըճոնց:  
— Դէ անաշէն, հօ կազ չէք,  
Ի՞նչ էք նստել, շուտ փախչենք:

89. ԿՍՐԿՈՒՏ

Սև ու թանձր ամպերը սարի քամակից դուրս եկան, դիւլեցին ու կախ ընկան իրկեքից: Չորս կողմը պատեց խորին մթութիւնը:

Յանկարծ երկինքը որոտաց, կայծակը խփեց, երկիրը դըրդաց. անձրևի կաթիլները վայր թափուեցին:

Անձրևը սաստկացաւ, նրան հետեցին սառցէ գնդակները, որոնք շքրը խկ հա շքրը խկ թակում են գետինը, սար ու ձոր ծածկում, ոչ գաշտ են հարցնում, ոչ արտ ու այգի:

Հօտը ցրում է, նախիրը փախչում, խրանած ձիերը դէս ու դէն են վազում, թռչունները պահում են իրանց բներում. հովիւ, հորթարած իրանց գործերը թողած՝ ապաստան են փնտռում թփերի տակին:

«Կարկուտ է, կարկուտ, կանչում են գիւղացիները դռներին կանգնած.— անխ ինչ պատիժ է, Ասուած դու փրկիր»:

Ծերը ծնկաչոք Ասուած է կանչում. պառաւն արցունքն աչքերին կասկարան հանում, բակն է շարաում, հարսներն ու աղջիկները պատերի տակ նստած՝ սուր գանակներով կարկուտ են կարում: Սուգ ու շիւան է գիւղում:

Կարկուտը դադարեց, որոտը լոնց, ամպերի տակից նայեց արևը, երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ:

Արտատէրը վազեց, իր արտը հասաւ. Հասկերը Չարդւած են, արտը արորւած հողին հաւասար:

Այգեպանը վազեց, իր այգին հասաւ. Ծառերը տերեւաթափ են, կարկտահար պտուղները փուած են գետնին:


— Ափսոս իմ այգին. ափսոս իմ արտը, գոչեցին խեղճերը, դառը լաց եղա՞նք

## Կարկուտ

Քոն զոռ զոռուս մութ իրկեցում,  
 Կայծակ, շանթեր անդադար  
 Պիտ խաճին էլ փչում, սուրում  
 Սե է պարիլ դաշտ ու սար:  
 Ու որպող անայր միգից  
 Հանկարծ... կարկուտն է քափում:  
 Անի... պարուհուս, ցաւ է գայթա,  
 Բան չի մնայ էլ հանդում... .

Ծառ ու ծաղիկ ճգահառ,  
 Պտուղները թափթփում,  
 Թռչունները լուռ ու մուր,  
 Զազն ու բունը կորցրած:

Սիրուն գարնան բուրբ բերած  
 Բարիքները փչացան,  
 Դիզականը անձար մնաց,  
 Տրորած է վար ու ցան:



Նկարագրեցէք այս «Գիւղի ընտանեկան կեանքը»: Ի՞նչ են անում  
 պատր եւ տանեցիք: Նախ պատմեցէք եւ ասպս գրի առէք:

92. ՀՐԱՇԱՒԻ ՀԱՏԻԿԸ

Մի այրի կին է լինում, ունենում է մի միմուճար աղայ՝ ա-  
նունը Խորգէն:

Մի օր մայրն ասում է.

— Գնա ամբարից ալիւր բեր, հաց թխեմ:

Խորգէնը գնում է, ամբարը քերում է և եղած ալիւրը բերում:  
Գոանը նրան պատահում է հիւսիսային քամին, տալիս, ալիւրը  
ցրում է:

Խորգէնը խիստ բարկանում է քամու վրայ, գալիս մօրը պա-  
մում է, թէ քամին ալիւրս ցրեց:

Մայրիկ, ասում է նա, մնաս բարով, ես գնում եմ քամուց  
ալիւրը բերեմ:

Ասում է ու գնում: Գնում է, գնում, համարում է քամու սու-  
ցէ պալատներին, ցուրտ, ինչպէս ցուրտ:

Շատ սառն է ընդունում հիւսիսային քամին Խորգէնին ու բար-  
կացած հարցնում է.

— Ի՞նչ ես ուզում, այ աղայ, ինձանից:

— Ինչպէս թէ ինչ եմ ուզում, էդ էլ խօսք է, որ ասում ես:  
Ի՞նչ ցրեցիր մեր ալիւրը, մօր ու աղի քաղցած թողիր, մենք ու-  
տելու հաց չունենք, ես տուր ալիւրս, մինչև չըսաս, ես այստե-  
ղից գնացողը չեմ:

Մտածում է, մտածում քամին ու դառնում ասում նրան.

— Ես ալիւր չունեմ որ ձեզ տամ, բայց ալիւրի տեղակ մի  
ուրիշ բան կըտամ, ես կըտամ քեզ մի հրաշալի, մի հաղապիւտ  
հատիկ: Տար ցանիր, դու միշտ հաց կունենաս:

Տղան վերջրեց հատիկը, եկաւ տուն, ցանեց իրանց բակում:  
Միւս օրը տեսաւ, որ իրանց բակ մի կանաչ արտ է դառել: Ամեն  
մի ցօղունի վրայ հարիւր հասկ, հատիկերը լիքը հատիկներով:

Հաւաքեց Խորգէնը հունձը, ալիւր շինեց, մայրը հաց թխեց,  
կերան կըտացան մայր ու աղայ:

Միւս տարի Խորգէնը մի մեծ արտ ցանեց, դարձեալ լաւ  
հունձ ստացաւ, ամեն մի ցօղունը հարիւր հասկ տեց: Զարմա-  
նալի բան, առաջ հիւսիսային քամին քաշում էր, ցուրտ տա-

նում էր նրա ցանածը, բայց հիմի՛ իսկի...

Հարստացաւ Խորգէնը: Մայր ու աղայ մի լաւ տուն շինեցին  
ու կարգին ապրում էին:

Մի անգամ Խորգէնը տուն էր գալիս, ճանապարհը ցեխ էր,  
կօշիկները ցեխառել էին: Խորգէնը կանգնեց, իր արտից մի փուռ ջ  
ցորեն պահեց և նրանով սաները սրբեց:

Այդտեղ վրայ հասաւ հիւսիսային քա՛մն, տրտեց, պառկեց-  
րեց արտը և սկանչի տալը բարձր սուլեց.

— Անախտան աղայ, դու անարժան ես իմ պարզկին, բաւական  
չէ որ մենակ էք ունում իմ տւած հացը, բաւական չէ որ աղքատ-  
ներին բաժին չէք հանում, տես բանի տեղ էլ չես դնում նրան,  
իմ տւած ցորենով ցեխատ ոտներդ ես սրբում: Էլ ցորենի երես  
չես տեսնի, ինչ որ ցանես, պէտք է փչացնեմ:

Խորգէի շունը լաց եղաւ ու ասաց.

— Քամի, քամի, գոնէ ինձ խղճն, որ տւածդ առնում ես, բա  
ես ինչ անեմ, ինչ ուտեմ, բա սովից մեռնեմ:

— Լաւ, որ այդպէս է, ասաց քամին, ես քեզ կըխնայեմ, քո  
բաժինը կըթողնեմ: Ի՞նչ էլ քո բաժնից մաս հանիր այս քո տի-  
րո՞ջը:

Այն օրից ետ ցօղունի վրայ մենակ մի հասկ բուսնեց: Այն էլ  
հօ անփաս չէր տուն բերում Խորգէնը: Շատ անգամ քամին տրտ-  
րում ու գետնին էր կայցնում ցորենը: Շատ անգամ Խորգէնը իր  
ցանածի կէտն էլ չէր կարողանում տուն բերել:





Լոյսը բացուում է, շուտ արտը գնամ,  
Պատուեմ սուր խոփովես կուրծքը հողի  
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ  
Մինչև օրերը ամռան արևի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարաս քեզ հետ,  
Թէ Ասուած ուզեց, դու կանաչեցիր,  
Թող դարդս մեռնի գեանի տակ անհետ,  
Դու ինձ մխիթար կրկին առն դարձիր:

Եւ շերմ աղօթքով Տիրամօր առջև  
Ես մոմ կրվառեմ, ես խունկ կըծխեմ,  
Որ քեզ պարզեմ մի առատ անձրև,  
Որ քեզ միշտ սիրով նայե խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար  
Արժանի չըլինիմ. ծով կըդարձնեմ  
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,  
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չըթողնեմ:

Մլիր, կանաչիր, ոսկէ սաւանով  
Ծածկիր իմ արարող շաղկապան,  
Նոր այն ժամանակ անուշ շշուկով  
Տուր ջարդած սրտիս մի քուն հանգստեան:

— Հայրիկ, կայծակ է լինելու, տես,  
սև-սև ամպերն ինչպիսի արագութեամբ  
են կուտակում:

— Այո, սիրելիս, սպասելի է, ա  
սաց հայրը: Դու երևի կայծակից վա  
խենում ես, Աշխէն:

Վախենում եմ, հայրիկ: Երբ կայ  
ծակը փայլատակում է, ես կարծում  
եմ, թէ մեզ որևէ զուտ պիտի հասցնէ:



— Ի՞նչուր ես վախենում. հողեակս, հանգստացնում էր նրան  
հայրը: Հազարից մի անգամ կայծակը խփում է որևէ առարկայի,  
իսկ մեզանում շանթարգել էլ է շինւած. ուրեմն վախենալդ բս  
լորովին աւելորդ է:

— Բայց ինչո՞ւ համար է կայծակը, հայրիկ, միթէ նքա հա  
մար է. որ մեզ վախեցնէ:

— Սիրելիս, կայծակից յետոյ օդը մաքրում է. և մարդիկն  
սե կենդանիներն աւելի հեշտութեամբ են շնչում:

Այդ միջոցին երկինքը ծածկեց սև-սև ամպերով, սկսեց հե  
ղեղի պէս անձրև գալ, փայլեց կայծակը և ամպն այնպէս որո  
տաց, որ Աշխէնի մազերը փշաքաղւեցին:

Անձրևը դադարեց: Ամպերի յետևից ժպտաց դարնանային  
արեգակը: Նրա լոյսից անձրևի կաթիլները ազամանգի պէս շոգ  
շոգում էին ծառերի տերևների վրայ:

Աշխէնը հայրիկի հետ գնաց այգին:

— Ա՛խ, որքա՞ն գեղեցիկ է այդու տեօքը, որքան մաքուր է  
օդը, ինչպէս լաւ են երգում թռչունները: Իսկ վարդենիները բու  
քում են մի առանձին թարմութեամբ ու անուշահոտութեամբ:

Ի՞նչ ես կարծում, Աշխէն, ինչիցն է. որ ամենքն էլ ու  
րախ և գեղեցիկ են, հարցրեց հայրը:

— Միթէ կայծակիցն է, թանկագին հայրիկ, բացականչեց  
Աշխէնը, շնչելով թարմ և մաքուր օդը:

95. ԿԱՅԾԱԿԸ

Վերև երկնքում կռիւ է ընկել.  
Սև-սև ամպերը վազէ-վազ եկել,  
Գոռում են, գոչում, մէկ-մէկու թակում,  
Մէկ-մէկու վրայ կրակ արձակում:  
Ու էն տաքացած  
Կուր մէջ յանկարծ  
կրակը էնպէս ամպերն ահօսում,  
Փայլատակում է, զէս սե զէն հօսում,  
Եւ գետի պէս.

Երբեմն էսպէս

Առաջը ընկած ամպերը ծակում,

Նրանց արանքում մոլեգին ճաքում,

Որ նա շատ յաճախ

Դէպի աջ կամ ձախ

Շեղում է յանկարծ ի ք ճանապարհից

Ու մի վայրկեանում էն կուրի վայր՝

Ընկնում է ներքև, այրում է, խանձում

Եւ շուրջը մահւան սարսափ տարածում:

Եսպէս արդիւ

Գարուն է. Իրկնակամարի վայրէ կու-

րակում էն գորշ-ճոխրագոյն խիւր ամ-

պիրը, փայլապրակում է քայ-կապրա-

գոյն կայմակը, ու ծղին դողրոյոյով որո-

րում է Իրկինը, որից յիսոյ քակում է

կարկրախառն անշրէր:

— Այս ամենը միասին վերցրած կոչւում է փոթորիկ: Մեզա-  
նից շատ-շատերը վախենում են փոթորիկից, և զարմանալի էլ չէ, —  
քանի որ կայծակի այժմ սարսափ է ազդում մարդուս:

Եւ ինչէ՞ր չի անում կայծակը:

Նա սպանում է մարդկանց ու կենդանիներին, կտոր-կտոր է  
անում հսկայական ծառերը, քանդում, աւերում է մեծամեծ տներն  
ու եկեղեցիները:

Շատ ու շատ տարիներ կայծակը մարդկանց տեսակ-տեսակ  
փրաններ հասցրեց, մինչև որ յայտնի գիտնականներից մէկը, Բե-  
նիամին Չրանկլինը երկար փորձերից յետոյ գտաւ նրան սանձելու  
հնարը: Նա ապացուցեց, որ հեշտ կերպով կարելի է կայծակից  
ապահով ու անփրաս մնալ:

Այդ գիտնականը մարդկանց խորհուրդ աւեց տան և այլ շի-  
նութիւնների կտուրների գլխին ամբացնել սուր հասա երկաթէ  
ձողեր, որոնց միւս ծայրերը պատերի վրայով տանել ցած և թա-  
ղել գետնի մէջ:

Եւ իրօք, բանից դուրս եկաւ, որ այդպէս վարելու դէպ-  
քում փոթորիկի ժամանակ կայծակը բոլորովին չէր դիպչում ոչ  
մարդկանց և ոչ էլ շէնքերին, այլ գնում էր գետնի տակ և այն-  
տեղ հանդչում:

Այդպիսի ձողը կոչւում է շանթարգիլ:


97. ԵՐՄՇՏ

կապել է երկինք, անձրև չէ գալիս,  
Մրտերն ու մարդեր ծարաւ են ջրի,  
Չորացած գետի՞ր ձեղքեր է կազմել,  
Սպրդնել տերի, թուփ ու ծառերի:

Կեանք չէ երևում ընդարձակ դաշտում,  
Տօթից, անձրևից քաշել են թռչունք,  
Ցամքել են վաղուց գիւղի առուներ,  
Բարակել միակ աղբիւրի աղուներ:


Ախ Աստուած, անձրև կանչում են մարդիկ  
Գիշեր ու ցէրեկ տղօթք մըմնջում  
Անձրև է. Տէր Աստուած, խնայիր երկրին,  
Մեր արա ու այգի ձեռից են ընկնում:





Գիւտեցէք այս պատկերներէն իրարանշիրը եւ այդ բոլորէն նանեք մի ամբողջ պատմութիւն. նոյնը գրի ունեք.

99. ԼՈՅՍԻ ՍԻՐԱՆՔԱՐԸ



Գիշեր էր: Փոքրիկ սենեակի մի անկիւնում ցածրիկ աշտանակի վրայ վառուում էր մոմը իր պարզ, նւազ լոյսով: Մենակ էի ես այնտեղ սենեակում. շուրջս ամեն ինչ լուռ էր ու հանդարտ, ընած էին մինչև իսկ ճանձերը, որոնց բզզոցն այլ ևս չէր

խանդարում իմ հոգու խաղաղութիւնը: Ես հիացած էի փոքրիկ մոմի կատարած մեծ գործով: Որքա՞ն անգնահատելի է ճրագը գիշեր ժամանակ. որքա՞ն թանկագին է թէկուզ փոքրիկ լոյսը խաւարի մէջ... Առանց լոյսի կարելի է խեղդել խաւարում... Սակայն ամե՛նքն են սիրում նրան... Ո՛չ, քնկոտ, խաւարատէր միջատներն ատելով ատում են նրան. մինչև իսկ զարնուրում են նրանից ու փախչում: Այո, փոքրիկ ճրագն էլ ունի իր թշնամիները, որոնք կուզենային, որ նա երբէք չըվառւէր... Սակայնա ունի և իր բարեկամները. ունի մինչև իսկ իր անձնուրաց սիրահարները: Ահա և նրանցից մէկը: Մի փոքրիկ, սիրուն թիթեռնիկ է նա, իր ճիւղափայլ սպիտակ թևիկներով, իր քնքոյշ բրդոտ սաքերով:

Ճրագը նոր էր վառւել և անտ նա յանկարծ յայտնւեց մթութեան միջից և սկսեց թրթռալ մոմի լոյսի շուրջը: Պտտւում էր նրա չորս կողմը, երբեմն կանգ առնում աշտանակի լայն եզրին և ապա նորից թռչում ու այդպէս շատ երկար շարունակում էր իր թրթռումները խիստ արագութեամբ: Երբեմն նա փոքր ինչ հեռանում էր լոյսից և ապա կրկին շտապով մօտ թռչում, կարծես վախենալով խաւարից: Խեղճ, միամիտ արարած, նա կարծես չէր տեսնում մոմի շուրջը թափւած իր նման ուրիշ թիթեռնիկների դիակները, որոնք այրւել էին նրա սիրած ճրագի բոցերով: Նոյն վիճակը սպասում էր և նրան... Մի թռիչք ևս զործեց նա անզուշաբար և մոմի բոցերն իսկոյն խանձեցին նրան: Նա վայր ընկաւ այրւած, մի բանի թոյլ շարժումներ արեց և մեռաւ... Իր սիրած լոյսին զոհ բերեց նա իր կեանքը...



100. ՉԸՀՆՁՍԾ ԱՐՏ

Աշուն է խորին, ծիծառը թռաւ,  
Անտան է դատարկ, դաշար մերկացաւ,  
Միայն դաշտումը անհունն մնացած  
Տխուր ու տրտում մի աչտ կայ հոնգնած:

Կարծես հատկեր ասում են միմեանց,  
— «Մի չպէս մտում ենք մե ջայս ցրտի տակ,  
«Նայք միայն է գեանի խնայրեկ  
«Մե աստօք պտուղը կորում, ջանասել»:

«Սմենայ գիշեր մեղ մտա իջում են  
«Անցնող թռչուններն ու մեղ սևում են,  
«Գազանները տրտը մ, քանին մեղ ճեծում.  
«Ո՛ւր է մեր տերը, մե՞ է սպասում:

Քանին տալիս է նրանց վատ համբաւ.  
«Ձեր տերը երկրից երկինք վերացաւ»:

Արտիկ Եւսրբիկ

Ասանկա գրում է՞ Քաղցից: Աս մի խորը ու  
աղծկուր խաղալ է: Այսպիսի գրկան մի ծաղկաւէր  
ասրիբն ու չորիբը, մի կանաչկուր հովիւրները: Այս  
պիսի յանախ փղում է հիւսիսային խամբն, որը իմաստ  
անդուրիկան է: Քարտիկն արարչը արևորի անմերգ  
չարիբը չէն քոչ փայլալ փխնելու հորիպունը:  
Անպիսի օրը գնայի կասպիական ժովի ափը:

Ձեր միջոցին չայ կում էին կուկից թե՛  
ում էին առե պրական նաւիբը:

Այսպիսիք փառասոր էր,  
յնպեւնիք որդիական արքային յար-  
զանկներս

խորդի Արքայիս:

1913 թ. 5<sup>2</sup> շունայի Բազու:

102. Ա Ր Ե Ի

1.

Մտախիտապատ, մութ ստաւում էր: Արդէն քանի օր է ծանր  
ու մտալ թուխ ամպերս պտտել էին երկինքը և ոչ մի յոյս չըկար,  
թէ վերջ պէս կազանեն նրան իրանց ասուր ճիրաններից, և եր-  
կնքի երեսը նոյն ուղախ կըծպոսայ:

Երկրը այնպէս էր:

Թեև այսօր աւերակ չէր մեղում, բայց խաղը, քարերն ու  
ժառիկները թաց էին գնո շէր: Չորացել էր հեղեղայ հովիտը: Թի-  
թեռնիկներն, ճանճերն ու բաւերն արկիւղից թաք էին կանգնել ծա-  
ծուկ տեղերում, կարծես բորբոս էլ մեծել էր: Այնպիսի թուր-  
նակները — նրանք էլ չէին արշում առաջուց նման ուրախ ու զարթ  
և միմիայն ժամ նակ առ ժամանակ մի տեսակի թաքիծում և ողբա-  
լի ճայնով էին կանչում, ասես մէկին գանգատուելիս լինէին փո-  
թորիկից ու ցրտից:

Սնտառի ծայրին, անաղին հասարմում կայնու տակ նոր  
բացել է պտտիկ մանիշալը:  
Ետայն էր խեղճը, կարծէ էր թէ արդէն գարունը եկել է,  
թէ սոք կըլինի և խիտ ցածկացել էր նայել յոյս աշխարհին:  
Հանել էր դիւրիւր գեանի տակից և բաց էր արել իր կանաչ թա-

ար: Ախ, ինչպէս օգտուում էր արածի համար: Կարծում էր թէ կրտեսնի գեղեցիկ, պայծառ, ուրախ աշխարհը, թէ թուշնակները կըերգեն ու կըծլւան,—իսկ այժմ անա այնպէս ցուրտ է և տրտում:

—Ի՞նչ տխուր է աշխարհը,—ասաց նա վերջապէս դիմելով իր հարեան խոտին:—Աւելի լաւ է քնած մնայի այնտեղ, հողի տակ: Աչքս բաց արի լոյս աշխարհին մտիկ տալու համար, բայց այժմ տեսնում եմ, որ պիտի մեռնեմ ցրտից ու ցաւից, զլխիս կարծես անդադար քարեր լինեն վերեւից թափւելիս: Ես տրտութիւնից կը մաշուեմ:

—Խեղճ,—պատասխանեց խոտը:—Ես էլ եմ մրսում և տրտում, բայց ես յոյս ունեմ որ դեռ լաւ օրին կըհասնեմ: Տերևները բաւականին երկար են ապրում և դեռ կըկշտանան արար աշխարհին նայելուց:

Խոտը հառաչեց. մանիշակն էլ կամաց կուացրեց գլուխը: Զգում էր, որ շուտով մեռնելու է, որ չի դիմանալու այդ ցըրտին և տխրում էր, որ այս աշխարհից մի ուրախութիւն չըտեսաւ:

—Այդ միջոցին մի բան շարժեց շուշանի տերեւի մէջ:

Քնիր, քնիր,—շնչաց տերեւը,—դեռ վաղ է, չըզարթնես: Ես ինքս այնպէս մրսում եմ, որ անշուշտ կըդեղնեմ: Մի՞թէ չըլսեցիր, ինչպէս մի րոպէ առաջ գոնգատում էր մանիշակը: Խեղճը արեւին էր կարօտել, իսկ այժմ պիտի մեռնի սոսանց արե տեսնելու:

—Ախ, այդ ճշմարիտ է ասում, փոփոաց մի ինչ որ թաց եղած մժղուկ, որ գլուխը հանել էր կաղնու չոր տերեւի տակից, ուր ապաստան էր գտել:—Բոլորս էլ կորչելու ենք: Կեանք չի կարող լինել առանց արեի:

—Ամբողջ մեղքը այդ զգւելի ճնծադիկինն է,—նորից սկսեց խօսել մանիշակը: Այնքան բան ասաց ինձ գարնան մասին, որ ես էլ հաւատացի ու շտապեցի:

—Գուցէ դեռ ձմեռ է,—խօսեց նորից մժղուկը,—ինձ ասում էր մի ճիճու, թէ կայ մի ծաղիկ, որ բոլորովին չի վախենում ձիւնից... Բայց մեզ համար՝ էլ փրկութիւն չի լինի, եթէ ձիւն գայ:

Շուշանի տերեւը դողդողօց ձիւնի անուշը լսելուց, իսկ մանիշակը քիչ մնաց ուշաթափւէր

2.

—Է՛հ, դուք վախկոտներ, ծիծաղեց կարմիր քարը, որ մինչև այդ ժամանակ հանգիստ ականջ էր դնում խոտակցութեանը — Հա՛... հա՛... ձիւնից են վախենում: Զէ, մէկ ասէք, տեսեմ, երբեիցէ ձիւն տեսել էք:

—Ասուած փրկի ազատի,—միաձայն կանչեցին մանիշակը, շուշանն ու մժղուկը:

—Խոտը միայն խորը ախ քաշեց, թէև նա շատ էլ չէր վախենում ձիւնից, այնուամենայնիւ սրտանց ցանկանում էր նրան երբէք չըտեսնել:

—Վախկոտներ, վախկոտներ. — շարունակեց քարը: — Իսկ դիտէք, որ ձիւնը մի այնպիսի գեղեցիկ աստղիկ է, որ ոչ մի ծաղիկ չի կարող նրա հետ համեմատուել:

—Մեզ ինչ, որ գեղեցիկ է, երբ մեզ մահացնում է,—ասաց մժղուկը:

—Սուտ է,—պատասխանեց քարը:—Նա միայն այնպիսի անդօրներին է սպանում, որ ապրում են միայն մի քանի օր: Ես քանի-քանի ձմեռ եմ անցկացրել ձիւնի տակ և հաւատացնում եմ ձեզ, որ նոյն իսկ տաքացել եմ:

—Անկարելի բան է,—գարմացած բացականչեցին բոյսերը:

—Շատ էլ կարելի է, ասում եմ ձեզ. Միտո է... մէկ անգամ... այդ մի հարիւր տարի սրանից առաջ էր...

—Հարիւր տարի.—կրկնեցին բոյսերը. իսկ սրտեղից դիտես, թէ ինչ է եկել հարիւր տարի սրանից առաջ:

—Հա՛-հա՛-հա՛, ծիծաղեց քարը: Այ քեզ բան. Հա՛-հա՛-հա՛: Հարիւր տարի սրանից առաջ էլ ես այնպէս էի տպրում, ինչպէս որ այժմ:

Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ է ասում սա, հարցնում էր մժղուկը:— Հարիւր տարի: Այդ ինչ է նշանակում: Ամօթ է ս քար, դու մեզ վրայ ծիծաղում ես:

Այ թէ յիմար արարած ես, ասած քարը: Իմացած եղիր, օրեւելիս, որ հարիւր տարին ինձ համար մի վայրկեան է: Քանի-

Յանկարծ ամեն ինչ փոխւեց: Երկինքը պարզւեց, փայլեց սիրուն արևը: Ողջ աշխարհը կենդանացաւ:

—Արև, արև, կոչեցին ամենքը: Փա՛ռք քեզ Աբարի՛չ, փառքը ոսկեշող արևին, որ կեանք է պարզուում մեզ:

քանի հարիւր տարիներ եմ ապրել աշխարհիս երեսին,—այ այս կաղնին կարող է վկայ լինել: Ես սրտ հեռ ծանօթացայ երեք հարիւր տարի առաջ: Սա այն ժամանակ շատ պատիվ էր, իսկ նս այնպէս էի, ինչպէս այսօր:

3.

Բայց ինչպէս է որ դու չես մեծացել, եթէ այնքան երկար ժամանակ ես ապրում,—Թերահաւատութեամբ գլուխը թափ տալով վերջապէս հարցրեց խոտը:

Վայ, բարեկամ, մի ժամանակ մեծ եմ եղել, կամ աւելի ճիշտն ասած. ես մի մեծ քարի մասն էի, բայց մրրկիւր, հողմը, ձիւնը, անձրևը ինձ այնքան վրայ տըն, քայրչեցին, որ վերջապէս պոկւեցի մեծ քարից: Սին ժամանակ ես աւելի մեծ էի, քան թէ այսօր, բայց լողում էի մեծ գետի մէջ, որը ինձ ու ընկերներին այսօր, բայց լողում էի մեծ գետի մէջ, որը ինձ ու ընկերներին քարը էր տալիս, զերհում էր իրար ու կտոր կտոր անում: Գետը կըփշրէր, աւազ կը դարձնէր ինձ, եթէ ես ափին չը հասնէի:

—Շա՞տ ժամանակ է որ սյդ եղել է,—հարցրեց մտղուկը:

—Հինդ հարիւր տարուց աւելի:

Ա՛յ, այ, այ, բացտիանչեցին բոյսերը:

—Մի դարմանայ, պարտս եր, շարունակեց քարը. քարելս անմահ ենք, երբէք չենք մեռնում: Գետը կարող էր ինձ փշուր փշուր անել, ես աւազ կը դառնայի, բայց այնուամենայնիւ չէի մեռնի, ես անվերջ ապրում եմ:

Դու պիտի որ շատ իմաստուն լիւես,—չճշտաց մանիշակը:

—Լսեցէք, բարեկամներ, թէ ինչ եմ ասում ձեզ,—խօսեց ինքնագոհ քարը: Ես ձեզ մի ուրախ լուր պիտի յայտնեմ. շուտով արևը կըփայլէ և դուք չէք կորչի ցրտից:

Առաւօտը ես տեսայ, թէ ինչպէս ամպերը նօսրացան, արևը նրանց այսօր և եթ կըցրի . . . Նայեցէք երկնքին...

Բոլորն էլ հասկացան, որ գորշ ամպերը շուտով բոլորովին կանհետանան, թեթև մառախուղը սկսել էր վեր բարձրանալ... Երկիրը տաքանում էր:

103. ՎԱԳՐՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ



Օրւան մի օր խանում խաթուն Տան տիրական պահնորդ կատուն Չրհաւանեց էլ կաթ, մածուն, Տաշտ, օրօրոց, ծալքը փափուկ, Մանուկների ծոցը տաքուկ, Չուգեց որսալ էլ տանը մօ՛ւկ: Ելաւ էսպէս, բախտից դժգոհ, Թէ՛ իր ուժից խիստ ինքնագոհ, Դլուխն առաւ, կորաւ գիւղից, Ինչպէս մկներն իր երկիւղից: Ուզեց ապրել ազատ, անկախ Շանից, մարդից հեռու, անվախ, Ու սար, ձորով հասաւ անտառ: Չորս բոլորին որսն անսպառ. Լսեց անա քաղցրահնչիւն Երգ են ասում թև ու թռչուն. Շուրջը նայեց, կամաց, զգոյշ. Դէմի ծառին տեսաւ անուշ, Ուրախ, անհոգ ու միամիտ Մի շատ սիրուն, նաշխուն մի ծիւծիւր Մըլըլալով երգ է երգում:

Մեր որսկանն էլ իրա խելքում  
Որսալ ուզեց,  
Տեղը դըզեց



Փորը գետնին, մէջքը ծռած,  
Աչքերը չորս, լայն-լայն չըռած,  
Սուր հայեացքը ցածից վերև,  
Աչքից կորան ծառ ու տերև:  
Դեռ մի թախը կամաց-կամաց  
Առաջ տարաւ, անշարժ մնաց  
Յետոյ էլ միւս թախը մեկնեց,  
Փորսող տուաւ ոյժ հաւաքեց  
Ու հէնց էն էր, ուզեց ցատկել՝  
Բայց ինչ տեսաւ խեղճը մէկ էլ.  
Ո՛չ թէ ծիտը, որսորդ կատուն  
Իրեն տեսաւ վազրի թախում:  
Կարմիր աչքեր, երկար բեխեր,  
էն սվ տեսնէր, որ չըվախէր.  
Ճանկերը մեծ, սուր ու կեռ-կեռ,  
Էդպէս գազան չէր տեսել դեռ:  
Ժանիքներն էլ մերկ, ահագին,  
Հէնց որ տեսաւ, շարժեց ազին.  
—Հը՛ր՛ հորեղբայր, չես ճանաչում...  
—Ի՞նչ հորեղբայր, ի՞նչ ես հաչում:  
—Վահ, տնաչէն երդուեմ միթէ,  
Ասածըս հօ աշխարհք գիտէ:  
Քանի անգամ իմ խեղճ հայրը,  
Լուսահոգի քո եղբայրը  
Պատմել է մեզ,  
Որ ճիշտ քեզ պէս  
էս անտառու, էս ձորերում,  
Դեռ մենք չեղած, հին օրերում.  
Մի եղբայր է ունեցել նա,  
Բայց չըգիտէ ուր է հիմա.  
Թէ չէ ինչի՛. հայիր կուղէս  
Մի ինձ վրայ. մի մեկ էլ քեզ...

Վազրը նայեց մնաց, ապշած.  
—Դէ լաւ, ասենք ճիշտ է ասած,  
Մեր ցեղի մէջ, որ կայ մի կապ,  
Ինչո՞ւ չըկաս բա ձագիս չափ.  
—Ինչու չըկամ քո ձագիս չափ.  
Հը՛ր՛ մ ուրախ չես, որ կանք էս չափ:  
Թեքւեց ասողը մեր էն վախար.  
Որ բաժանեց մեզ մեր բախար.  
էս հօ մենք ենք, փոքր ես ագնւմ,  
Դո՞ւ լինէիր. ի՞նչ եմ ասում.  
էդ ո՛չ լինի, թէ չէ հալալ  
Կէօիս չափ էլ չէիր մնալ.  
Գիտես ինչո՞ւ. թող ո՛չ մէկ էլ  
Տէրը նշանց տայ. սրան կասես  
Աղամորդու ճանկ ես ընկել:  
—Աղամորդին, աղամորդին...  
Յոյց տուր մի ինձ, ինձ էդ լրբին,  
Տեսնեմ էդ սվ, էդ սվ է, սվ,  
Որ աշխարհս իր անուճով  
Շուռ է տալիս ինչպէս ուզի.  
Բուրդ տամ նրան, բամբակ գզի:  
Ո՞ւր է կարաս  
Ինձ մի ցոյց տաս.  
—Ա՛յ, աղանջ գիր. հրէս, հրէս...  
Նրա կացնի ձայնն է կարծես:  
Ու մէկ մէկու յետքից ըշտապ  
Վազր ու կատու եկան այնչափ,  
Որ գիւղացին  
Դեռ իր կացինն  
Ոյժով տուած կոճղի ճեղքից  
Դուրս չըհանած՝ նրա կողքից  
Բարով աւին  
Ջուղ-ջուղ, մին-մին  
Վազր ու կատուն  
Աղամորդուն:

—Բարի աջողում աղամորդի,  
 Պէտք է ինձ հետ մենամարտի  
 Դուրս գաս էսօր, որ ուժերս  
 փորձենք, տեսնեմ ինչի՞ տէր ես.  
 Դու ի՞նչ ուժով, ի՞նչ հնարքով,  
 Աստու տւած ո՞ր շնորհքով  
 Ողջ աշխարհին տէր ես դառել,  
 Եղբայրներիս պերիզ արել:  
 —Համաձայն եմ հաղար անգամ,  
 Ղափլան ախպէր, հին բարեկամ,  
 Դու ուզենաս ո՞յժքս փորձես.  
 Ես քո խօսքդ անեմ անտե՛ս.  
 Դէ համեցէք. թաթերդ բեր  
 էս իմ կոճղի ճեղքում դիր,  
 Մինչև ես էլ մի տուն գնամ,  
 Ոյժս տանն է, առնեմ ու գամ:  
 Զոյգ թաթերը իրար սղմեց,  
 Վազրը, կոճղի ճեղքը մըղեց.  
 Բայց հէնց շարժւեց կոթը կացնի,  
 Ո՛նց որ միջով գնդակ անցնի.  
 Սարեր, ձորեր իրար առան.  
 Աշխարհքն ասես կերան. տարան.  
 Զէն են տալիս վազրի ձէնով,  
 Բայց տէրն ո՞վ է, լսողն ո՞վ:  
 Կոճղը առաւ, պառկեց գետնին  
 Ու տալիս է գլխին ոտին:  
 Իսկ քիչ հեռու նոր թըխկոցով  
 Նոյն գիւղացին, հէնց նոյն կացնով  
 Կտրում էր հն. մի ուրիշ ծառ.  
 Վազրը նւագ, թոյլ ուժասպառ,  
 Պոչը մեկնած, գլուխը յետ.  
 Գանդաղ ու խոր տնքոցի հետ,  
 Ամեն անգամ քաշւած փորի  
 Կաշի տակից, մերկ կողերի

Նարքն էր բացւում,  
 Նորից ծածկւում

Իսկ աչքերը. էն վան ճրագ,  
 Մթնած, պղտոր որ կիսափակ.  
 Բան չէր ջոկում չորս բոլորին.  
 Օձը չըլինէր նրա օրին.  
 Մէկ էլ նայեց՝ տեսաւ կողքին  
 Իր փոքրացած եղբոր որդին.  
 Զայնը նւագ ու յուսահատ  
 Դիմեց նրան ընդհատ-ընդհատ.  
 —Եղբոր որդի, լաւ գիտես դուն  
 էդ անիծած աղամորդուն,  
 Արնախումին էդ մեր ցեղի,  
 Գեղ չափ դառնամ՝ բաց կըթողնի՞.

#### 104. ԵՆՐ ԿՈՅՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդ ժամանակս ես մի իշապան էի. եօթն էջ ունէի, որոնցով պահում էի թէ ինձ, թէ ծնողներս: Մի օր քաղաքից բաւական հեռու՝ սարից քար էի բերում էջերս բարձած. ծառերի միջից մի ձայն լսեցի, որ կարծես ինձ էր կանչում: Յետ նայեցի, տեսնեմ մի թափառական երգիչ անտառի միջից ինձ է նայում և մատով նշան տալիս: Մօտեցայ նրան և բարևեցինք միմեանց: Նա նայեց ինձ. յետոյ էջերիս ու ծիծաղեց: Ես հարցրի պատճառը. նա բացատրեց ինձ այսպէս.

—Դու մի առողջակազմ և լաւ տղայ. իշապան ես դառել, բայց ես ուզում եմ քեզ ամենահարուստ մարդը դարձնել: Ինձ լսիր: Այս անտառում ես ճանաչում եմ մի տեղ, ուր անազին գանձ կայ թաքցրած. արի դատարկիր էջերիդ բեռները և հետևիր ինձ: Ես մի երգիչ մարդ եմ, ամեն տեղ իմ քնարովս կապրեմ, դու մի խակ պատանի ես, ես խղճում եմ քեզ: Ինձ բաւական է չորս էջի բեռը. իսկ քեզ կըտամ երեք էջի բեռ. համաձայն ես:

—Այո, համաձայն եմ, պատասխանեցի ես:

Դատարկելով էշերիս բեռը, մենք դիմեցինք դէպի անտառի խորը: Նա գնում էր առաջից, իսկ ես չու անելով, հետեւում էի նրան: Յանկարծ նա կանգ առաւ. ես նայեցի առաջ և տեսայ, մի ինչ որ երգ մրմնջաց և մի կախարդական բանալի դնելով քարի տակը, երեք անգամ ոլորեց, ահագին սալը մի կողմ գլորեց: Վա՛յ քո տղիս տղայ, դեղին ոսկիները աչքերս տարան:

Դէ՛հ, մեր տղայ, շուտ արա՛ էշերիդ բարձիր, որ էլ տեղը չէ. սասցի ինքս ինձ մաքուսս: Երբ գործերս վերջացրինք, երգիչը այնտեղից ինչ որ պատիկ թղթի կապոց փոշի վերցրեց և դրեց զրպանը: Ես ուշադրութեամբ նայեցի: Երբ արևը թեւեց դէպի իր մուտքը՝ մենք ճանապարհ ընկանք: Էշերիս բոժոժները հանեցի, որ լսող չըլինի: Շատ չըգնացած՝ մնաս բարով տասցի իմ բարերարին: Մի քիչ հեռացայ թէ չէ՝ մտածեցի, «մեր տղայ, լաւ չըվարեցիր, նա մի թափառական երգիչ է, նրա ի՛նչին է պէտք այնքան ոսկին. արի դարձիր մէկ էշի բեռը յետ ինդրիբ. Իսկոյն վագեցի նրա մօտ. գլուխս քորեցի, նա հասկացաւ բանը և առանց դժարութեան համեցէք արեց:

Այժմ ես չորս իշաբեռն ունէի: Բայց արի տես, որ ագահուած թիւնը կուրացրել էր ինձ: Մտածեցի. «ինչո՞ւ էշերը իմը լինին նա տանի երեք իշաբեռը, շատ շատ մի կողպէք է բացել է՛լի: Դարձայ, մէկն էլ պահանջեցի. նա այնպէս, հէնց ժպտալով, հինգ-երորդը համեցէք արեց: Բայց ես հնգով չըլիտացայ, երեսս պըն դացրի, յետ դարձայ և սասցի. «բարեկամ, ի՛նչիդ է պէտք այսօր քան ոսկին. դու մենակ մարդ ես, արի մէկն էլ տուր ինձ.» Նա զիջեց և այդ: Գոնէ այդ վեցով բաւականանայի. ոչ՝ երեսս շան կաշի էր դառել: Գնացի, եօթներորդն էլ ինդրեցի, որ և տւեց: Այլ ևս ի՛նչ կուզէի, բայց ոչ, մտածեցի ես. «երեի անիւրաւը այն թղթի կապոցում աւելի թանկ բան տարաւ, թէ չէ ինչու եօթ իշաբեռ ոսկին ինձ կըտար ու ինքը մէկ ոսկի էլ չէր վերցնի.» Դուրսդ ինչ ցաւացնեմ, դարձայ և հարցրի, «այդ ի՛նչ փոշի է, ազնիւ բարեկամ.»

—Ոչինչ, սասց նա.—հէնց այնպէս, անմահական հող է:  
—Ի՞նչպէս թէ անմահական, գարմաղած հարցրի ես:

—Ոչինչ: Ով քօէ իր աչքերին, կանձահանայ, երբէք չի մեռնի:  
—Բաս որ այդպէս է, ազնիւ բարեկամ, ինձ էլ տայիր մի փոքր: Նա առանց խօսելու, ժպիտը երեսին, հանդարտութեամբ հանեց զրպանից, մեկնեց ինձ: Ես առայ, իսկ նա ինչպէս մի ոգի աներևոյթացաւ մի ակնթարթում: Էշերս քշեցի տուն: Ես կարճ ժամանակում շինել տւի այս գեղեցիկ ապարանքը: Այժմ ժամանակն էր փոշին գործադրելու: ահա փող, տուն, հարստութիւն, ոսկի, սւամ համար են սրանք, քսիր աչքիդ, անմահանաս սասցի, իսկոյն քսեցի աչքերիս և կուրացայ..

105 ԱՂԻԷՄՆ ՈՒ ԳԱՅԼԸ

1.

Սևերես.

Ուստա աղւէսն օյինբազ,  
Պոչը մագոտ, երկու գազ,  
Իրան քաշած ձէն ու ձուկ  
Ճամփին տւեց սուտ մեռուկ:  
Դհօլ-գուռնա ածելով,  
Կարմիր գինի կոնծելով,  
Տասը քսան ձիւտը,  
Ալ ու ալւան հարանկոր  
Մի նորահարս՝ նոր խաթուն՝  
Տանում էին կեսրանց տուն:  
Տեսան ճամփին աղւէսին,  
Ընծայ տւին նոր հարսին,  
Դրին հարսի գաւակը,  
Բայց էն շարի գաւակը  
Թուաւ ելաւ շալակը,  
Խտուտ տւեց էն հարսին:  
Հարսն էլ ասու աղւէսին.

—Աման աղւէս,  
Աներես.  
Ինձ մի անի

Նորահարս եմ չըխօսկտն,  
Ինձ խնայի էս անգամ:  
„Լաւ, հարսիկ ջան, բաշխեցի.  
Դէհ ոսկիքդ տուր ինձի,“  
Նորահարսը ամօթից  
Ոսկիքն հանեց իր ձօտից.  
Ուրախ-ֆրլախ աղւէսը,  
Չրկայ մինն էլ էդպէսը,  
Պոչ ու ոսկի թափ արեց,  
Չիու թամբից հօփ արեց,  
Թուաւ գետին ու վզզաց,  
Միայն հարսն էր որ տղզաց.  
Յիսուն-վաթսուն, քըչիցը,  
Ոսկին կապած պոչիցը,  
Մին ձախ, մին աջ,  
Ետ ու առաջ շարածը՛ն  
Վեր էր թռչում,  
Պոչն էր պաշում,  
Խաղ էր կանչում.  
Աման, աման,  
Այ աման

Ո՞վ կայ. ո՞վ կայ  
 Ինձ նման:  
 Ելայ հարսի գաւազը.  
 Գաւակից էլ շալակը.  
 Ոսկին առայ  
 Ու փախայ,  
 Դէհ, աղւէս ջան.  
 Դէհ խողայ:—  
 Աղւէսն էդպէս առաջ ետ  
 Հա խաղում էր պոչի հետ.  
 Մի գէլ եկաւ դունչը խէտ.  
 Կունճին անմազ, վիզը փէտ.  
 Ասա՛ւ, Ասա, այ աղւէս,  
 Էսքան ոսկի որդից քեզ:—  
 — Գէլիկ.  
 Փէլիկ.  
 Գէլ բիձա,  
 Լիճը տւեց  
 Ինձ ընծայ,  
 Էնտեզ, էնտեզ կայ մի լիձ.  
 Ա. փերի մօտ ջուրը քիչ.  
 Ես գնացի. էն ջրում  
 Պոչս զրի մի օրում  
 Էսքան ոսկի դեղ-դեղին  
 Շարւան պոչիս մէջտեղին.  
 Ձկների հետ.  
 Ձկան կոյտ:  
 Ախր ինչո՞ւ  
 Ձեկար շուտ:

Գնանք կուղես. գէլ բիձա,  
 Ամբողջ լիճը տամ ընծայ.  
 — «Որ էդպէս է,  
 Այ աղւէս.  
 Հեծի վրէս.  
 Տանեմ քեզ:  
 2.  
 Աղւէսն հեծաւ գէլ բիձին  
 Ու բշելով անտանձ ձին  
 Եկան հասան էն լճին:  
 Գէլը ջրում պըպըզեց.  
 Պոչն արմատից ներս բզեց:  
 Աղւէսը թէ՛— Գէլ. քեզ մօտ  
 Մին էլ կըզամ առաւօտ,  
 Տեղէդ չեղնես դու ըսկի.  
 Պոչդ թող լաւ տըտղկի,  
 Ու գուրս հանի շատ սսկի:  
 Մի ցուրտ օր էր Յունւարի  
 Գիշերն եղաւ մի տարի.  
 Երկինք  
 Գետինք  
 Ճըկճըկաց  
 Գէլը ցրտից  
 Վընգվընգաց,  
 Գոչեց. — «Պսկի, ձուկ. պէտք չի»:  
 Պոչը քաշեց որ փախչի,  
 Բայց որտեղից, էն լճից.  
 Լիճը կպել էր պոչից:



Արքիւնուշիկ.

Եկաօր մի դպրոցում սովորական դասերը  
 վերգայան: Շուրտով կակաւին ցարիկան  
 վերաբու գու մ'ները: մի փանի օրից կվերա  
 դատում Ձիգ Ծօր և միասին ազաւր  
 շոււն կը փալիւն մի եռվասուն լիւնի -  
 բում: միւնի կը քարչքանանի ծաղկաւէր  
 բլուրները, կը խալիւնի աղբիւրները զլլան  
 զրիքը, կը ծծիւնի վունային քարմ օղը:

մի դժբախտ ծռիւփսիկը նորից եր-  
 ւանդապաւ և միւս մասնաւոր եր-  
 ւանդանոց:

ընդունիր սիրալիր բարեւիքս և  
 զխմագին համբոյրներս՝

1913 թ. 1<sup>2</sup> շուն. Թիֆլիս: Իր Իդրայր Թուրքէն:

107. Ե Ր Ա. 2

Մի որսորդ գնացել էր անտառ արջեր որսալու:  
 Նա մեծակ էր և հետը վերցրել էր հրացանը և իր հաւատարիմ  
 շուն Բողարին:

Որսորդը ման եկաւ առաւօտից մինչև երեկոյ. բայց ոչ մի  
 արջի չըպատահելով, ծառի տակ նստեց փոքր ինչ հանգստանա-

լու: Հրացանը կողքին դրեց, իսկ ոտների մօտ պառկեց հաւատարիմ շուն Բողարը:

Անտառում ամեն ինչ հանդարտ էր և միայն հիւսիսային եղմ գեփիւուն էր փչում: Որսորդը թեքւեց ծառի տակ և լուռ էր թռչունների երգը, որոնք հաւաքւած էին ծառի վրայ:

Արդեօք շատ ժամանակ անցաւ,—յայտնի չէ: Բայց որսորդը յանկարծ լսեց մի ինչ որ աղմուկ և իրարանցում, որ քանի գնում, այնքան աւելի ու աւելի էր մօտենում: Չայն հանողները ահագին տրշեր էին, որոնք իր վրայ էին գալիս: Յանկարծ՝ անտառի մէջ, որտեղ նստած էր որսորդը, միանգամից դուրս թռան վեց ահարկու արջեր:

Որսորդը ոտքի կանգնեց, կամենում էր վերցնել հրացանը, բայց հրացանն իրանից առաջ վերցրել էր ամենամեծ արջը: Որսորդը կանչեց իր հաւատարիմ շուն Բողարին, բայց Բողարին մի ուրիշ արջ իր թաթերի մէջն էր առել և թոյլ չէր տալիս տիրոջն օգնելու: Որսորդը մտածեց փախչել: Այդ ժամանակ բոլոր արջերը միանգամից գոռացին.

Բռնեցէք դրան, բռնեցէք:

Հէնց այդ ըստէին երկու մեծ և ահագին թաթեր բռնեցին նրան յետևից և չէին թոնդում, որ տեղից շարժւի:

Նրա գլխարկը յափշտակեցին. ամենափոքրիկ արջը վերցնելով նրան, ծառի տակ տարաւ ու այնտեղ պատառ-պատառ արեց:

Դրանից յետոյ մեծ արջերը գոռացին.

—Այ հէնց գա է ամենաքաջ որսորդը: Ահա տեսնում էք, թէ ո՞վ էր ուզում մեզ որսալ և կենդանի-կենդանի բռնել, իսկ այժմ մենք ենք բռնել նրան և նա մեր որսն է: Մահ, մահ դրան մահ մեր թշնամուն:

Որսորդը աչքերը վեր բարձրացրեց և տեսաւ, որ ամենամեծ արջը այժմ մի քանի քայլ հեռու է կանգնել և հրացանը ուղղել է իրան:

—Սպանիր դրան, գոռացին արջերը, մի լաւ խփիր, որ սրաներս հովանայ...:

Արջը աշխատում էր հրացանը լաւ բռնել իր ահագին թաթերով, բայց չէր կարողանում: Իսկ այն արջը, որ բռնել էր որսորդին, չէր թողնում, որ գետին ընկնէր ու ինքն աւելի ու աւելի

ուղղում էր նրան դէպի հրացանի բերանը և երբ նա կամենում էր փախչել, յանկարծ հրացանը պայթեց... Որսորդը զարթնեց: Այս բոլորը երազումն էր տեսնում:

Չատկի երեկոյ



Նկարագրեցէր այս «Չատկի երեկոյ» պատկերը համեմատեցէք ձեր տեսածի հետ, պատմեցէք ու նոյնը գրի առէք:



109. Ո՞Վ ԱՒԵԼԻ ԿԱՐԵԿՑԵՑ

Պարնանային պայծառ ու զւարթ օրերից մինն էր:  
Քաղաքում համարեա ոչ ոք չէր մնացել:

Մեծ թէ փոքր, տղամարդ թէ կին, ով կարող էր ու գործից ազատ, գուրս էր եկել դաշտը մաքուր ու թարմ օդ շնչելու և կենսատու արևից օգտւելու:

Ահա այդ տարիքաւոր, ջահել ու փոքրահասակ երկու սեռի գրօնողները՝ ոմանք մի շարքում կողք կողքի քայլերով, ոմանք թևանցով ու ոմանք էլ ձեռք-ձեռքի բռնած, իրար հետ զրուցելով, անմեղ կատակներ անելով, ծիծաղելով ու երգելով ուրախ-ուրախ տուն էին վերադառնում դէպի քաղաք տանող մեծ ճանապարհով:

Միևնոյն ճանապարհի վրայ ցնցոտիներ հագած մի մատառ դահաս աղքատ տղայ խղճալի ձայնով ողորմութիւն էր խընդրում:

— Խղճացէք, ողորմացէք որբիս... ահա երկու օր է ոչինչ չեմ կերել... մի պատառ հաց չեմ դրել բերանս... քննցած եմ...:

Այդ անտէր ու անօգնական դժբախտը ոչ-ոք չունէր աշխարհիս երեսին. ոչ սիրելի հայրիկ, ոչ անուշ մայրիկ, ոչ սրտակից եղբայր, ոչ քաղցր քոյրիկ... ոչ-ոք, ոչ-ոք... Բոլորովին, բոլորովին մենակ էր խեղճ որբը:

Եւ բաւական էր նայել արևից այրւած մերկ մարմինը հազիւ հազ ծածկող ազքատ հագուստին, նրա ողբալի դէմքին, անօթութիւնից փոս ընկած աչտերին, որ մարդ համոզւէր, թէ ամեն տեսակ խնամքից զուրկ մնացած որբը իրօք տանջւում է սաստիկ քաղցից:

Բայց ի՞նչ կանես, որ նրա մօտով իրար յետևից շտրան-շտրան անցնողները՝ տարւած իրանց երգ ու խնդով, զբաղւած իրանց զրոյցներով, ասես-թէ ամենեկին չէին էլ նկատում անբաղդին: Եւ այնպէս էր թւում, թէ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնելու վրան. կարծես նրանք թողնելու են, որ քաղցից մեռնի տղան հէնց ճանապարհի վրայ:

Միթէ իրաւ այդպէս կանեն, այդքան անսիրտ կը գտնւեն ճարդիկ... Ո՛հ, այդ շատ ամօթաբեր վարմունք կը լինի նրանց

կողմից, որ առանց խղճահարւելու, առանց կարեկցելու անցնեն որբի մօտովն ու չըկամենան օգնութեան ձեռք մեկնել նրան:

Ձէ՛-որ շատ բան չի հարկաւոր նրան, ուրեմն էլ ինչո՞ւ խնայել այդ քիչն էլ, որով նա կարող էր սովամահ լինելուց ազատւել: Բայց ոչ, ոչ, մարդիկ չեն կարող այդքան անդուլթ, այդ աստիճան քարասիրտ լինել դէպի անօգնական որբը:

Ահա մի կին՝ բռնած իր փոքրիկ ու հրեշտակի նման սիրուն աղջկայ թաթիկը, խղճահարւելով աղքատ տղայի ողբալի դէմքից ու խղճալի արտաքինից, կանգ առաւ: Ուրիշ երկու կին ևս հետևելով նրան՝ նոյնպէս կանգ առաւ:

Այդ վերջիններից մէկը որբին մօտենալով՝ մի արծաթ դրամ տւեց:

— Շնորհակալ եմ, ասաց տղան:

Միւսը ևս մի նոյնպիսի դրամ տւեց:

— Թող Աստուած փոխարէնը հատուցանէ ձեզ, տիկին:

Իսկ փոքրիկ աղջկայ մայրը մօտենալով աղքատ որբին, զըրկեց և մայրական քնքշութեամբ համբուրեց նրան:

Խեղճ տղան ոսկեսիրտ տիկնոջ այդ անսպասելի քաղցր ու անուշ վարմունքից այնպէս յուզւեց, որ լեզուն կապ ընկաւ և մի խօսք անգամ չըկարողացաւ առել, նա նոյնիսկ մոռացաւ երկու օր իրան տանջող քաղցը. անբախտ երեխան կարծես կշտացաւ բարեսիրտ տիկնոջ համբոյրից:

Աչքերը քաղցր արտասուքով լի, նա անմիջապէս վազեց ծաղկավաճառի մօտ, իրա մուրացած դրամով մի գեղեցիկ ծաղկեփունջ առաւ և ընծայեց կնոջ փոքրիկ աղջկան իբրև շնորհակալութիւն իրան ցոյց տւած մայրական այն անգին քնքշութեան համար, որից վաղուց, շատ վաղուց զրկւած էր անբաղդ որբը:

110. ՈՐԲ ՄԱՆՈՒԿ

Նայիր դու այնտեղ—խոնաւ նկուղում  
Մերկ քաղցած որբեր արցունք են թափում,  
Ու մութ անխիւնում յատակին պատկած  
Հիւանդ երեխան ցաւի մէջ տանջւում...:

Մօր քաղցր ձայնը այլևս չի լսուում.  
Հէնց նոր գուրս տարան նրա դագաղը:  
Անգուլթ է հայրը. էլ տուն չի մտնում,  
Վաղուց պառկած է նա գերեզմանում...

Նայիր, անցնում են փողոցով մարդիկ,  
Կարծես բոլորն էլ խուլ են, կուրացած...  
Իսկ այնտեղ— խոնավ՝ նկուղում մանկիկ  
Մերկ, հիւանդ սոված կանչում է մայրիկ:

111. ԱՄԵՆԱՊԷՏՔԱԿԱՆ ԲԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ա.

Փամանակով հեռաւոր և ոսկի արկելքում մի խելացի և ար-  
դարամիտ թագաւոր է եղել: Նա ունեցել է երեք որդի:

Եղաւ՝ որ այդ թագաւորը ծերացաւ և ուզեց կառավարու-  
թեան ղեկն յանձնել իր որդիներէց նրան, որն աւելի ընդունակ  
կրլինի այդ գործին:

Եւ գրա համար նա մի օր կանչեց իր երեք որդիներին և  
ասաց.

— Մերելի զաւակներս, տեսնում էք, որ ձեր հայրը ծերա-  
ցել է և էլ չի կարողանում երկիրը կառավարել: Ես վաղուց ի-  
շած կրլինէի իմ գահից, եթէ կատարւած տեսնէի այն մեծ միտ-  
քը, որը երկար տարիներ պաշարել էր հոգիս: Եւ այժմ, ով որ  
ձեզանից իմաստուն կերպով լուծէ իմ այդ միտքը, նա կըստա-  
նայ իմ թագաւորութիւնը. նա կըկառավարէ իմ ժողովուրդը:

— Ապրած կենայ մեր սիրելի հայրը, սո՛ւրբ է մեզ համար  
նրա վեհ կամքը: Այդ ինչ մեծ միտք է, որ չէ կարողացել լուծել  
նրա իմաստուն հոգին:

— Ահա տեսնում էք այն ահագին և մեծածաւալ շտեմարա-  
նը, որ վաղուց շինել եմ աւել: Իմ ցանկութիւնս էր լցնել դրան  
մի այնպիսի բանով, որ ամենապէտքականը լինի աշխարհիս երե-  
սին, և որով կարողանամ բազաւորացնել իմ ժողովուրդը: Այդ  
շտեմարանը գեռ դատարկ է մնում: Եւ այժմ ձեզանից ո՛վ որ

կարողանայ այդ շտեմարանը իր բոլոր անկիւններով, ծայրէ-ծայր  
լցնել աշխարհիս ամենապէտքական բանով, նա թող լինի իմ ժա-  
ւանդը: Առէք գանձարանիցս, որքան որ կուզէք և առանձին-առան-  
ձին ճանապարհ ընկէք քաղաքից-քաղաք, երկրից-երկիր, գտէք  
այդ բանը և լցրէք իմ շտեմարանը: Ձեզ եօթն անգամ քառա-  
տուն օր ժամանակ եմ տալիս:

Որդիքը համբուրեցին հօր ձեռքն ու ճանապարհ ընկան:  
Բ.

Ամբողջ եօթն անգամ քառասուն օր նրանք շրջեցին քաղա-  
քից քաղաք, երկրից-երկիր, տեսան ուրիշ-ուրիշ մարդիկ, ուրիշ-  
ուրիշ սովորութիւններ և որոշւած ժամանակին կանգնեցին հօր  
առաջ:

— Բարո՛վ էք եկել, թանկագին որդիներ: Գտել էք արդեօք  
ամենապէտքական բանն աշխարհումս:

— Այո՛, գտել ենք:

Եւ հայրը վեր առաւ որդոցն ու նրանց հետ գնաց շտեմա-  
րանի առաջ: Այնտեղ հաւաքւած էին բոլոր պալատականներն ու  
ժողովուրդը:

Թագաւորը մօտեցաւ շտեմարանի դռանը, բաց արաւ և կան-  
չեց մեծ որդուն:

Ինչո՞վ կըլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ,  
ինչ բանով, որ աշխարհումս ամենապէտքական բանը լինի:

Եւ մեծ որդին հանեց գրպանից մի բուռը հացահատիկ և  
պարզելով դէպի հայրը, ասաց.

— Հացով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր:  
Ի՞նչ կայ աշխարհումս աւելի պէտքական, քան հացը: Ո՞վ կարող  
է առանց հացի ապրել: Շատ թափառեցի, շատ բան տեսայ,  
սակայն հացից աւելի պէտքական ոչինչ չըգտայ:

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն և նոյն հարց  
ուեց:

Միջնակ որդին հանեց գրպանից մի բուռը հող և պարզելով  
դէպի հայրը, ասաց.

— Հողով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին  
հայր: Ի՞նչ կայ աշխարհումս աւելի պէտքական, քան հողը:

Առանց հողի հաց չի լինի, իսկ առանց հացի ո՞վ կարող է ապրել: Ծառ թափառեցի, շատ բան տեսայ, սակայն հողից աւելի պէտքական ոչինչ չգտայ:

Գ.

Ամենից վերջը հայրը կանչեց կրտսեր որդուն:

— Ինչո՞վ կըլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որ աշխարհումս ամենապէտքականը լինի:

Կրտսեր որդին հաստատուն քայլերով մօտեցաւ շտեմարանին, անցաւ շէմքը և զննեց ահագին, մեծածաւալ և մութ ու խուար շինութիւնը: Բոլորը հեռաքրքիր նայում էին նրան:

Ապա նա գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, հրահանը լսփեց կայծաքարին, կայծ հանեց և վառեց մոմը: Բոլորը կարծում էին, թէ Նա ուզում է կրակի լոյսով լաւ զննել շտեմարանը:

— Դէհ, ասա, որդի, ինչո՞վ կըլցնես, — անհամբեր ձայնով նորից հարցրեց հայրը:

— Լոյսով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստուն հայր, լոյսով միայն: Ծառ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի, սակայն լոյսից աւելի պէտքական ոչ մի բան չըգտայ: Լոյսն է ամենապէտքական բանն աշխարհում: Առանց ոյսի հողը հաց չի ծնի, առանց լոյսի հողի վրայ մարդ չէր լինի: Ծառ թափառեցի, շատ երկրներ տեսայ, շատ բան սովորեցի և գտայ, որ լուսաւորութիւնն ու գիտութիւնն է ամենապէտքական բանը աշխարհում: Եւ լոյսով կարելի է լցնել ո՞չ միայն այս ահագին շտեմարանը, այլ և ամբողջ աշխարհը իր բոլոր անկիւններով, ծայրից-ծայր:

— Ապրիս, — գոչեց ուրախացած հայրը. — քեզ է արժանի իմ գահն ու իշխանութիւնը, քանի որ լոյսով ու գիտութեամբ պէտք է լցնես թագաւորութիւնդ և մարդկանց հոգիները:

— Ապրած կենայ մեր եղբայր թագաւորը, — գոչեցին միաբերան եղբայրները: Ուզիդ որ՝ նա գտաւ ամենապէտքական բանն աշխարհումս:

— Ապրած կենայ մեր երիտասարդ, լուսաւոր թագաւորը — գոչեցին ուրախացած պալատականներն ու ժողովուրդը:

Եւ հայրը գրկեց կրտսեր որդուն, ձգեց նրա ուսերի վրայ

շողշոյուն ծիրանին և տարաւ, նստեցրեց իր գահի վրայ:

Ամբողջ ժողովուրդն ընկաւ մեծ ուրախութեան մէջ. երգեց ու պարեց քառասուն օր, քառասուն գիշեր, որ ունեցաւ նօրէջ մի խելացի ու լուսամիտ թագաւոր:

112. ԱՇԽԱՏԱՆՔ

1.

Հարուստ էր Ոսկան, հարուստ, մեծատուն, Ունէր նա շատ փող, պատիւ ու անուն: Նրա տան դուռը ձմեռ ու ամառ Միշտ բաց էր լինում ամենքի համար: Քանի՜ աղքատներ հաց էին ուտում Նրա սեղանից ու նրան օրհնում: Սակայն Ոսկանը գոհ չէր վիճակից Նա միշտ տխուր էր, տխուր, վշտալից: Նրա հարազատ ու միակ որդին Չընայած իր հօր խօսք ու խրատին՝ Գործով պարապել բընաւ չէր սիրում, Ուտում էր, խմում ու հանդիստ քնում: Նա ձրիակեր էր վատնող ու շրուայլ, Էնդուր էր հայրը տխուր ու մոռալ: Հայրը խրատեց, մտածեց երկար, Ապա իր որդուն տարաւ այլ աշխարհ: Նա որդուն յանձնեց մի մեծ վարպետի: Որ նա սրա մօտ բանի աշխատի: Վարպետն էլ սիրով ընդունեց նրան Ու նշանակեց ոռճիկ տարեկան: Ոսկանի որդուն շատ չէր բանեցնում, Հարուստ հօր խաթրու լաւ էր պաշտպանում, Կուշտ ուտեցնում էր, խմեցնում նրան, Հագցնում, խնամում իր որդու նման: Իսկ երբ բոլորեց, լրացաւ տարին:

Որդին ստացաւ վարձը լիովին:  
 Վարպետը նրան հրաժեշտ տւեց,  
 Դէպի հայրենիք ճանապարհ գցեց:  
 Ոսկանի որդին, երբ որ տուն հասաւ,  
 Ստացած փողը իր հօրը արւաւ:  
 Բոլոր փողերը հայրը համարեց,  
 Իսկոյն շրջւեցաւ, գետը շարտեց:  
 Ապա ժպտալով նայեց իր որդուն  
 Իսկ անհոգ որդին— ոչ ձայն ոչ ծպտուն:

2.

Դարձեալ Ոսկանը ախուր էր, մոայլ.  
 Իսկ նրա որդին ծոյլ էր ու շոայլ:  
 Մի օր էլ հայրը՝ սաստիկ յուսահատ՝  
 Կանչեց իրա մօտ որդուն բէզով ասթ,  
 Խրատեց նրան, նախատեց երկար  
 Ու տարաւ իր հետ մի հեռու աշխարհ:  
 Այստեղ նա որդուն տւեց վարպետի.  
 Որ նա սրա մօտ բանի աշխատի.  
 Վարպետին պատմեց որդու արարքը,  
 Իսկ ինքը դարձաւ իրանց աշխարհքը:  
 Այս նոր վարպետը լուսաշուն պէս չէր.  
 Նա շատ շարկացկոտ, անգութ ու չար էր:  
 Ոսկանի որդուն չէր խղճում՝ երբէք,  
 Նրան տանջում էր նա գիշերօցերեկ,  
 Գործել էր տալիս. անվերջ բանեցնում,  
 Յոգնեցնում նրան, հալումաջ անում.  
 Փուչ բանի համար գոչում էր ուժգին.  
 Բուռնցքով խփում շնքակոթին,  
 Նրան տւածը դատարկ հաց էր չոր,  
 Մի ձեռք էլ մաշած ու գլխած շոր:  
 Եթէ նա լսէր իր հօր խրատներ,  
 Չէր քաշիլ երբէք այս դառն օրեր:  
 Ոսկանի որդին այնքան նիհարեց,  
 Աւ խեղճի վիզը այնքան բարակեց

Որ նրա ջրից եթէ բռնէին,  
 Տեղն ու տեղը կ'աւանդէր հողին:  
 Վերջապէս տարին մի կերպ լրացաւ,  
 Ոսկանի որդին Տէրին փառք տւաւ...  
 Նա իր վարպետից ստացաւ ոտճիկ.  
 Պարկը շայակեց. գնաց հայրենիք:  
 Երբ որ տուն հասաւ, փողերը հանեց,  
 Հաշւեց, համարեց ու հօրը յանձնեց:  
 Երբ հայրը շրջւեց դէպի գետ կրկին,  
 Շտապով բռնեց հօր ձեռքը որդին.  
 „Հայր, աղաչում եմ, ջուրը մի գցիւր,  
 Արիւն-քրտինքս գոնէ խնայիւր,  
 Շատ թանկ են նստել ինձ այդ փողերը:  
 Թանկ են տանջանքիս այդ պտուղները:  
 Տխրութեան ամպը իսկոյն չքացաւ,  
 Ոսկանը հրճւեց և ուրախացաւ,  
 Նա յուզած սրտով իր որդուն գրկեց,  
 Զակառը պաչեց ու նրան օրհնեց:

Այնուհետ որդին սկսեց բանել,  
 Հօր պատւէրները լսել, կատարել.  
 Նա թողեց նախկին իր շոայլ կեանքը.  
 Սկսեց յարգել սուրբ աշխատանքը:

## 113. ԼՃՍԿՆ ՈՒ ԱՌԻԱԿԸ

1.


Մի փոքրիկ բլրի ստորոտից, հէնց ծեր կաղնու ծառի տակից,  
 Բնչպէս գեղեցիկ էր նա իր ակունքի մօտ:  
 Ամեն կողմից գանգուր, թաւշանման մամուռով պատած՝ նա  
 կարծես իսկ որ մի թռչնակի բուն լինէր:  
 Պայծառ արեւը լուսուորում, կապոյտ երկինքը զովացնում

էր նրա վճիտ ջրերը երջանիկ և ազատ նա վազում էր միշտ առաջ և առաջ: Ապակու պէս թափանցիկ նա սրանում էր մի ուրախ երգ մըմուսլով, գգւելով ուռենիները և հիւթալի խոտերը, որոնք այնպէս ցած էին կռանում՝ նրա մէջ նայելու համար:

Առակից ոչ հեռու ձգւում էր մի ընդարձակ լճակ, որը իր ամբողջ օրը անց էր կացնում խաղաղ և հանգիստ քնի մէջ:

Առակի անդադար քչքչոցն և ուրախ խաղը գրգռում էին հարևանին:

—Ո՛ւֆ, ո՛ւֆ, ո՛ւֆ,—ասաց մէկ անգամ բարկացած ձայնով լճակն իր հարևանին:—Գլուխս տարար քո այդ անվերջ խօսակցութիւնով և անընդհատ շարժումով: Լո՛իր վերջապէս, մի քիչ գաղար տուր թէ քեզ և թէ մեզ: Չէ՞ որ դու անհանդստացնում



ես քո բոլոր հարևաններին: Կանգ առ, ի սէր Ասածու և թող որ ամենքս հանգիստ մնանք:

—Ոչ, իմ քնկոտ հարևան,—պատասխանեց նրան առակը,—եթէ ես դադարեմ երգելուց, իմացիր՝ որ կըզոգարեմ և ապրելուց. կըկարողանամ ես արդեօք օգտաւէտ լինել ուրիշներին, եթէ քեզ պէս քնեմ և հանգստանամ: Մէկ աստ ինձ, լճակ.—դիմեց արեւմտահանքով առակը փնթփնթող հարևանին.—ո՛ւմն ես դու պէտք, դու՛ որ շարունակ քնած ես: Ուղիղ է՝ արևը քեզ տաքացնում է. բայց յետոյ այնպիսի գոլոշիներ են բարձրանում քո ջրերից, որ ամենքին միայն տենդ և հիւանդութիւն են

բերում: Հաւատա ինձ. իմ ծոյլ հարևան, ոչ թէ մենք պէտք է կանգ առնենք և մտածենք հանգստութեան մասին, ոյլ դուք՝ ծոյլերդ պիտի տեղերիցդ շարժւէք և դաք մեզ հետ:

2.

Ծառի վրայ, հէնց առակի և լճակի մէջ տեղ, նստած էր մի փոքրիկ թռչնակ:

—Սրան տեսէք, սրան, ինչպէս է իր գլուխը գովում առակը,—մտածեց թռչնակը,—արի յետեիցը գնամ և տեսնեմ թէ ինչ է անում:

Այսպէս առելով, նա ճիւղից վեր ցատկեց ու թռաւ առակի հոգանքով:

Առակը ճանապարհին՝ ոլոր-մոլոր գայարւելով, դարձաւ մի առու: Ուր որ նա մտնում էր, ամեն տեղ կանաչը թարմանում էր և ափերը ծածկւում էին խիստ ու սքանչելի խոտով:

Առուն առաջ էր վազում, ճանապարհին լցնելով գիւղերի աւազանները. ուր մատաղահաս աղջիկները գալիս էին իրանց ստփորները լցնելու և նախիրը իրիկնադէմին վերադառնալով արածելուց՝ իր ծարաւն էր յաշեցնում:

Գիւղերից նա գըրզալով դահավիժում էր ցած և պըտտեցնում ջրաղացի ահագին երկանաքարերը:

Պէտք էր տեսնել, թէ ինչպիսի աշխոյժով և դարձութեամբ էր նա պտտեցնում ջրաղացները, աշխատանքի ուրախ երգերն երգելով և բարձր, դէպի երկինք ցայտելով իր ոսկեգօծ կաթիլները:

Այդ երգերին միախառնւում էին կանանց ծիծաղն ու հրոհոցները, կանանց, որոնք հաւաքւել էին առւի մօտ իրանց լըւացքը լւանալու:

Այստեղից մեր փոքրիկ՝ առակը,—այժմ արդէն մի մեծ առու,—միացաւ մի ուրիշ առւի հետ և մի գետակ գառնալով՝ սլացաւ միշտ առաջ: Ճանապարհին գետակը խառնուեց մի ուրիշ գետակի հետ և մի ահագին գետ դառած, հպարտ անցաւ խոր ափերի միջով: Բազերի և կարապաների երամներ էին թռչում այդ հրաշալի գետի վրայով, իսկ ջրերի խորքերում խաղում էին գեղեցիկ կարմրախայտ ձկները:

Այդ մեծ գետի ոյժը շարժում էր գործարանների անիւները  
և ամեն տեսակ մեքենաներ. նա փոխադրում էր նաւեր, շոգե-  
նաւեր:

Եւ այսպէս մեր փոքրիկ առւակը, յետոյ առուն և գետը  
անվերջ աշխատում էր. մինչև որ թափւեց անծայր ծովը...

Թռչնակը տեսնելով փոքրիկ առւակի կատարած գործը, քա-  
ջալերւեց: Նա թռաւ բարձր, բարձր, և երգեց իր երգը—, միշտ  
առանջ և առանջ,:

114. ԼԱՑՈՂ ՈՒՌՆԵՐ

Որպէս հերարձակ  
Սգաւոր մի կին՝  
Կանգնած է տխուր  
Լացող ուռենին.

Եւ հին անտառի  
Լռիկ գրկի մէջ,  
Մենակ և անյոյս  
Լալիս է անվերջ:

Իսկ ծեր անտառի  
Դարեւոր կաղնին  
Հանգարտ լսում էր  
Հսկայի լացին:

Եւ դարեր անցան,  
Դարեր գնացին,  
Բայց մինչև այսօր  
Այն հպարտ կաղնին՝

Չընարցրեց ուռենուն՝  
Թէ ինչ վիշտ ունի,  
Կամ նրա լացին  
Ե՞րբ վերջ կըլինի...

1.

Մի երեկոյ հայրն ատաց Յունանին:

—Դու կաց խանութում, իսկ ես պիտի գնամ՝ վաղւայ հա-  
մար մի բանի բան աննեմ: Վաղը Ս. Սարգիս է և երեկ մեր տա-  
նը հիւրեր կըլինեն:

Նա հագնւեց և դուրս գնաց, իսկ Յունանը մնաց մենակ:

Նա շատ տխուր էր: Ոչ ոք չէր գալիս բան անելու: Հեռ-  
ւից լսում էր զանգերի ձայնը. երեկ շատ ժողովուրդ էր հաւաք-  
ւել ժամում՝ Ս. Սարգսի աջը համբուրելու: Լամպը մի տեսակ  
աղօտ լոյս էր սփռում դարակնիքին դարստած ապրանքի և պա-  
տերից կախած դոյլերի, պայտերի, գզալների և պարանների վրայ:

Յունանը այդ բոլորից վաղուց ձանձրացել էր. նա ուզում  
էր շուտով փակել խանութը և վազել տուն, մանաւանդ որ ոտ-  
ներն էլ սառել էին, կօշիկները հին էին և տեղ-տեղ ծակծակած:

Երանի թէ հայրիկը շուտ գար:

Տղան սկսեց գրպանում խաղացնել երկու շահանոցը, որ  
հայրիկն ընծայել էր նրան փոքր եղբօր համար խաղալիք անե-  
լու: չէ որ վաղը նրա տօնն էր: Յունանը գժգոհ էր, որ հայրիկը  
շատ քիչ էր իրան աւել: Ի՞նչ կարելի է անել տասը կոպէկով:  
Այ, եթէ իրանք հարուստ լինէին, անկասկած հայրիկն էլ աւելի  
կըտար իրան փող և կօշիկներն էլ այդպէս պատառուած չէին  
լինի:

Այդ միջոցին խանութի դուռը բացւեց և ներս մտաւ մի բար-  
ձրահատակ, նիհար մարդ՝ հին վերարկուն հագին:

—Բարի երեկոյ:

—Ատածու բարին: Ի՞նչ էք կամենում, —հարցրեց Յունանը՝  
ոտի կանգնելով:

—Կօշիկների համար մանր չիւլի:

—Փայտէ, թէ երկաթէ:

—Երկաթէ:

—Քանի գրւանքայ քաշեմ:

—Երեք գրւանքայ:

Յունանը կշեռքի մի թաթի վրայ թուզթ փոեց և սկսեց վրան չիւի ածել. իսկ մուշտարին իր ուշադրութիւնը դարձրեց պատերից կախած ապրանքի վրայ: Յունանը նկատեց, որ չիւին երեք գրւանքից պակաս էր, բայց մտածեց. «Վաս չունի, թող մի փոքր պակաս լինի, չէ որ սա էլ փող արժէ»,—ու էլ չաւելացրեց:

Եւ մինչդեռ մուշտարին շարունակում էր անհող նայել պատերին, նա չիւին շտապով ածեց թղթէ տոպրակի մէջ և թելով կապեց:

—Համեցէք, արդէն պատրաստ է:

Մուշտարին վճարեց ու գնաց:

—Այս լաւ եղաւ,—մտածեց Յունանը.—երեք գրւանքայի փոթաբէն միայն երկու և կէս տւի: Նա իսկի չը նկատեց, բայց մեզ ձեռնտու է Եթէ միշտ այսպէս առուտուր անենք, աւելի շատ օգուտ կը ստանանք և շուտով էլ կը հարստանանք:

Յունանը ձեռները տրորելով՝ ման էր գալիս դախլի յետեր և անհամբեր սպասում էր գնողների:

Դուռը բացւեց. այս անգամ ներս մտնողը հայրն էր. նա մի քանի կապոց բերեց և վայր դրեց սեղանի վրայ:

—Այդ ինչ ես առել, հայրիկ:

—Ինչ ասես՝ որ չը կայ, ցորեն էլ կայ փոխինձի համար, քիչ միջ էլ, նուշ էլ, մի քիչ էլ սառը շաքար... տօներին մենք էլ քէֆ կանենք: Մի նոր գլխարկ եմ առել Սարգիսին ընծայելու: Իսկ դու երևի ինձ սպասելուց ձանձրացար հմ:

—Ո՛չ, այստեղ մարդ եկաւ, բան առաւ:

—Ի՞նչ ծախեցիր:

—Երեք գրւանքայ կօշիկի չիւի:

Յունանը չասաց, որ ինքը խաբել էր գնողին, նա գիտէր, որ հայրը զժգոհ կը մնար այդ բանից:

—Դու քաղցած չես,—հարցրեց հայրը:

Ոչ, միայն ոտներս են սառել:

Ա՛խ, մոռացայ էլ, նոր կօշիկներ պէտք է կարել տալ քեզ համար: Հէնց այս բոպէին արի գնանք, այստեղ մօտիկ մի կօշիկար է ապրում, որ բաւական արժան ու լաւ է կարում, ահա

մի ամբողջ տարի է հազնում եմ այս կօշիկները և դեռ չեն մաշուել... Իէ՛հ, լամպը հանդցրու, դուռը կողպենք ու գնանք:

2.

Յունանն ու հայրը լայն փողոցով, մի փոքր անցան և մտան աղօտ լուսաւորւած մի նեղ փողոց: Այստեղ ոչ մեծ խանութներ կային. ոչ էլ նոյն իսկ անցուղարձ անոյններ. հազիւ լուսաւորւած տները սևացած պատշգամբներով՝ մոռյլ ձգւած էին, և մինչև անգամ ձիւնը կարծես կեղտոտ լինէր:

—Կօշիկարը անա այս տանն է ապրում,—ասաց հայրը, ցոյց տալով մի նեղ տուն, որի զբոնած տպակու միջից լոյս էր երևում:

Նրանք մօտեցան այդ լոյսին, բաց արին դուռը և իջան մի երկու աստիճան, որովհետև կօշիկարի արհեստանոցը ներքնայարկումն էր:

Դռան բացւելուն պէս վարպետը վեր բարձրացրեց կօշիկի վրայ կուացրած գունատ դէմքը. բիզը դրեց սեղանի վրայ և հարցական հայեացքով նայեց եկւորներին:

Յունանը նրան իսկոյն ձանաչեց, սա այն մարդն էր, որ մի փոքր առաջ իրանից կօշիկի չիւի էր առել:

Կօշիկարը շտապով մաքրեց հին աթոռներից կաշու կտորտանքներն ու չիւին և խնդրեց նրանց նստել:

—Եկել եմ՝ տղիս համար կօշիկներ պատւիրեմ, ասաց հայրը, —չափսը վերցրէք:

—Այս բոպէիս: Ա.ջ ոտդ հանիր, տղայ:

Մինչ դեռ կօշիկարը զբաղւած էր չափս վերցնելով՝ Յունանը իր շուրջն էր գննում: Մութ էր և կեղտոտ և ցուրտ, խոնաւութեան և կաշիների հոտ էր գալիս ամեն տեղ՝ յատակի, սեռ դանի և աթոռների վրայ թափթփած էին հին կօշիկներ, կաշու կտորտանք, մուրճեր, փայտէ կաղապարներ:

Բացի կօշիկարից սենեակում ոչ ոք չէր երևում, բայց լայն վարագոյրի յետևում մէկը տնքում էր, ինչ որ փափսոց էր լուում և վարագոյրն էլ շարժւում էր, յետոյ վարագոյրը մէջտեղից քիչ բացւեց և այնտեղից երևացին երեխայի սևորակ աչքեր:

—Դուք երեխաներ ունէք:

—Ունեմ, աղջիկս չորս տարեկան է, իսկ աղաս երկու և կէս:

—Ձեզ մօտ բաւական ցուրտ է, վարպետ, ասաց Յունանի հայրը:

—Այն, ցուրտ է, փայտը թանկ է և ամեն օր չեմ կարողանում վառել: Երեխաներս ամբողջ օրերով կուշ եկած, նստած են անկողնում:

—Բացի զրանից, խոնաւ էլ է այստեղ:

—Ինչ արած, անա վեցերորդ տարին է ինչ այս հորումն ենք ապրում: Ես ոչինչ, մի կերպ տանում եմ, բայց կինս և երեխաներս շատ են տանջուում:

—Իսկ ձեր կինը սրտեղ է:

—Նա էլ այնտեղ է, անկողնում. երկու ամիս է՝ հիւանդ պառկած է, ոսկրացաւ ունի և ինչ որ վատ հազում է:

—Բժիշկ չէ՞ք հրաւիրել:

—Ինչպէս չէ: Մի անգամ հրաւիրեցի, բժիշկն տուում է, թէ պէտք է տեղափոխուել մեծ և լոյս սենեակ, պէտք է միս և կաթ ուտեցնել... Բայց սրտեղից, աշխատողը մենակ ես եմ, իսկ ինչ որ կինս հիւանդացել է՝ երեխաներն էլ, հիւանդն էլ իմ վզիս են, մինչև անգամ լացքն էլ ես եմ անում: Սատուած չանի՝ գործս պակասի, այն ժամանակ ջուրը եկել մեզ տարել է: Երեխաներս մի կարգին շոշ էլ չունեն, որ փողոց դուրս գան:

Կօշկակարը դէպի վարագոյրը նայեց և ցածր ձայնով աւելացրեց:

—Վախենում եմ. կինս որ մեռնի, փոքրիկ երեխաներին ի՞նչ պիտի անեմ:

Նա լսեց. արտասուքը նրան խեղդում էր:

Յունանը շատ խղճաց նրան. նա յիշեց՝ ինչպէս քիչ տուաջ ինքը խաբել էր նրան, որ մի քանի կոպէկ աւելի աշխատէր և կարողանար աւելորդ խաղալիքներ ու քաղցրեղէն առնել:

Յունանը տանջուում էր. նա մտածում էր, թէ ինչպէս ուղղի իր սխալը: Վերջապէս ձեռքը տարաւ գրպանը. ունեցած երկու հատ հինգ կոպէկանոցները հանեց ու զրեց իր կողքին, աթոռի վրայ:

Հէնց որ կօշկակարը չափսը վերցրեց պրծաւ, հայրը շտա-

պեց դուրս գալ, երևում էր, որ չէր ուզում աւելորդ մի քանի ռոպէ անցկացնել այդ գարշահոտ, ցուրտ սենեակում: Տանաէրը լամպը ձեռքին՝ ճանապարհ դրեց նրանց:

«Եթէ հայրիկս հարցնի իր ընծայած տասը կոպէկի մասին, մտածում է Յունանը, — կասեմ թէ կորցրելի:»

3

Յունանն ու հայրը հասել էին փողոցի ծայրին՝ երբ յետևից մի ձայն լսեցին.

Աղա՛, աղա՛:

Յունանը յետ նայեց, տեսաւ կօշկակարին, որ վերարկուն վրան զցած՝ առանց գլխարկի վազում էր:

Փառք Ասածու, որ ձեզ հասայ, — ասաց նա ծանր շունչ անունով. — դուք փող էք կորցրել իմ տանը. անա վերցրէ՞ք:

— Ես չեմ կորցրել, — ասաց հայրը՝ աղին նայելով և հասկացաւ որ Յունանն է թողել այնտեղ դիտմամբ այդ սև փողը:

Ես էլ չեմ կորցրել, — ասաց Յունանը:

— Ոչ, ոչ, ախր ինչու... վերցրէ՛ք, վերցրէ՛ք — կրկնում էր կօշկակարը:

Նա աշխատում էր Յունանի ձեռքը դնել գրամները: Յունանը չէր ուզում վերցնել, բայց չըզիտէր՝ ինչպէս աղաուէր նրանից, վերջապէս հայրն ասաց.

— Հա, լաւ միտս ընկաւ կարելի է ձեզ փող է հարկաւոր,

ես կարող եմ հիմա մի շասը վճարել, միւս մասն էլ վերջը, երբ կըլայնանէք կօշիկները:

Այս ասելով հանեց քսակը և տւեց երկու ռուբլի:

— Շնորհակալ եմ, հիմա կարող եմ կնոջս համար դեղ առնել:

Յունանն ու հայրը արագ շարունակեցին իրանց ճանապարհը:

— Ապրես, որդի, որ աղքատին խղճում ես, — ասաց հայրը:

Այս կօշկակարն ազնիւ մարդ է երևում, հարկաւոր է սրան օգնել:

Այն, կաշխատեմ որևէ խանութից գործեր ստանալ նրա համար: Յունանը լուռ էր, միայն ինքն իրան հարց էր տալիս. «, իսկ

ես ազնիւ մարդ եմ, թէ՛ ոչ,»

Ամբողջ գիշեր նա չըկարողացաւ քնել. Տղային շարունակ



տանջում էր այն միտքը՝ թէ արժանի էր արդեօք հօր գովասանա-  
քին: Նրան այնպէս էր թւում՝ թէ գողացել էր այդ գովասանքը:  
Առուօտեան վաղ՝ դարթնեց թէ չէ՛ նա շտապեց իրանց իա-  
նութը, ամեն բան սլտամեց հայրիկին, խնդրեց նրան մի կէս  
գրվանքայ չիւր ու թղթի մէջ փաթաթելով՝ վաղեց կօշկակարի  
մօտ:

Դուռը բաց անելով՝ նա արագ մտաւ ներքնայարիը, դրեց  
փաթեթը կօշկակարի առաջ սեղանի վրայ ու ասաց.

Վարպետ երեկ չիւին կշռելիս, ես ուզեցի քեզ խաբել ու երեք  
գրւանքայից պակաս կշռեցի: Ահա պակասը՝ բերի, ներիւր ինձ...

Սյգպիսի ուրախ Ս. Սարգսի օր Յունանը դեռ երբեք չէր  
անցկացրել:

116. ԴԱՐՔԻՆ



Կռանը ձեռքին, զընդանն առջին,  
Գիթ-երես մրոտ, դարբնոցի միջին.  
Կաշէ գոգնոցն առաջը կապած,  
Լոխի կանգնած է մեր Խէչօ ամին:

Փութըր—փո՛ւհ, հա փո՛ւհ, փշում է, փշում,  
Կայծեր ու մոխիր դէս ու դէն փռում.  
Երկաթի մի շերտ հնոցը կոխած,  
Սաստիկ տաքիցը վառում, կարծրում:

Խէչօն հանում է երկաթի շերտը,  
Զնդանի վրայ կռանով ծեծում.  
Շինում նրանից պայտ, մեխ ու կացին  
Նւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թշոււմ է երկաթը ցուրտ ջրի միջին,  
Ամպի պէս փռում տաք-տաք գոլորշին,  
Կրկին պնդանում, կրկին փափկանում,  
Մինչև որ պատրաստ, շարուում գետնին:

Կառում է Խէչօն, տքնում, աշխատում  
Մրտա ու նեղլիկ դարբնոցի միջին,  
Կաշէ գոգնոցը առաջը կապած,  
Կռանը ձեռքին, զնդանն առաջին:



Դիանցէք այս պատկերը եւ գրեցէք բովանդակութիւնը:

Մարդ չըթողեց, որ գլխին մի փորձանք չը բերէր Քաչալը ու սևերես վեր կացաւ հեռացաւ իրանց գիւղից:

Հիմա գնում է, գնում Քաչալը ու իրան-իրան մտածում. ո՞ր գնամ, ո՞ր չըգնամ, էս գիւղումը՝ էս եմ արել, էն գիւղումը՝ էն եմ արել. էն մէկելը մտնել չի լինի ու չորրորդումը՝ բոլորը ճանաչում են... ու էսպէս հաշուով տեսնում է, որ պարզ աղբիւր չէ թողել:



Մին էլ յանկարծ խելքին փչում է, թէ՛ գնամ թագաւորի մօտ. Քաչալը գնում է ուղիղ թագաւորի պալատը:

Գլուխ է տալիս ու առաջին կանգնում.

— Ի՞նչ է ուզածդ, հարցնում է թագաւորը:

— Քո արեշատութիւնդ, թագաւորն ապրած կենայ, պատասխանում է Քաչալը:

— Է՛լի, մի բան կունենաս երևի:

— Ա՛յ, ի՞նչ բան պէտք է ունենամ, թագաւորն ապրած կենայ, սասցի հազար-հազար մարդ քո ձեռքի տակ կառավարւում է ու պէտք պալիս. բա էն ոնց լինի, որ պալատում մի բանով էլ ես չըպէտք գամ թագաւորին, եկել եմ քեզ ծառայելու:

Շատ լաւ ես արել, քմծիծաղեց թագաւորը, ինձ հէնց քեզ պէս մի մարդ էր հարկաւոր:

— Ի՞նչի համար, թագաւորն ապրած կենայ, ինչ պէտք է անեմ:

— Գէտք է պահես պալատի սագերը. առաւօտը կանուխ կը քշես հանդը, երեկոյեան կը բերես տուն, որ նրանցից մինը պակսի՝ վայր եկել է, քեզ տարել:

— Էդ շատ լաւ, աչքիս վրայ, բայց էս էլ ասեմ, որ ես էլ քեզ պէս մի ճշմարտասէր մարդ եմ. լաւն էն է, էս գլխիցը ինձ ասես, թէ ի՞նչ ես տալու դրա համար, որ վերջը մեր մէջ խօսակցութիւն չըլինի:

— Էլ ի՞նչ պէտք է տամ, Քաչալ, էն է աղջիկս քեզ կըտամ ելի, համաձայն չես:

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, ո՞ւմ աղջիկը պէտք է քոնից լաւը լինի, իրան չըհասկանալու տեց Քաչալը ու գուրս եկաւ:

Պալատումն էլ մարդ չըկար, որ Քաչալի գլխին չըտար ու թագաւորի փեսայ, չասէր:

Քաչալն իր սագերը տանում էր հանգ, արածացնում, երեկոյեան ետ բերում տուն. բայց և ոչ մի օր մաքիցը չէր ընկնում թագաւորի խոստումը:

Մի օր էլ հանդում մենակ էր. Սաստիկ անձրև սկսեց: Քաչալը չըթըշուելու համար շորերը հանեց. դրաւ մի տափակ բարի տակ, ինքն էլ մերկ նստեց էդ բարի վրայ. մինչև որ անձրևը դադարեց:

Անձրևը կտրելուն պէս, բարի տակից հանեց շոր շորերը ու հագաւ: Հէնց էս միջոցին մի վհուկ երեաց Քաչալին:

— Բարի աշողում, Քաչալ:

— Ա՛յ Աստծու բարին:

— Ա՛յ Քաչալ, անձրևի ժամանակ էդ սրտեղ ելի:

— Էստեղ, սրտեղ:

— Բա էդ ի՞նչպէս է, որ ես թէ երկնքովն եմ թռչում, թէ երկրիս վրայ շրջում, հազար ու մի հարք գիտեմ, էլի թըշուել եմ, իսկ դու էստեղ անձրևի տակ. չես թըշուել:

— Հ՛ը, ինձ էլ կասեն ո՞նց. աղօթք գիտեմ, ասում եմ. չեմ թըշուում:

— Քաչալ ջան, չի լինի, որ էդ աղօթքը ինձ էլ սովորեցնես. գիտես որ գործս աշխարհ շրջին է. օր չի լինում. ոչ անձրևի տակ չընկնեմ:

— Ինչո՞ւ չէ. եթէ դու էլ քո գիտեցած աղօթքներից ինձ կը սովորեցնես...:

— Որն էլ կուղես:

— Որն ամենից լաւն է, էն:

Ու վհուկը սկսեց թւել իր աղօթքները, որ անսխի թէ, Քաչալը որն է հաւանում: Ա՛յ, օրինակ. որ աղօթես՝ ուրիշները քեզ չըտեսնեն, որ աղօթես՝ սովածութիւնդ անցնի. որ աղօթես՝ զանազան տեսակ կենդանի դառնաս... Քաչալը հէնց մի գլուխ, շարժում էր գլուխը, թէ՛ չէ:

...Որ աղօթես՝ մարդիկ միմեանց ամուր կպչեն...

— Ա՛յ, էդ սովորեցրու, կանգնեցրեց վհուկին Քաչալը. ինչ

կանեմ, էդ արժի իմ աղօթքին:

Վհուկը փորձեց հէնց Քաշալի աչքի առաջ, աղօթեց—բոլոր սագերը իրար կպան. մի ուրիշ աղօթք էլ սոր ասց՝ պոկ եկան, իրարից բաժանուեցին:

Քաշալը շատ հաւանեց աղօթքը ու սկսեց սովորել:

Վհուկը ասում էր ծանր ու բարակ, Քաշալը հետը կրկնում:

Մէկ, երկու, հինգ տասը, մինչև որ լաւ սերտեց:

—Պէ, հիմա էլ դու սովորեցրու, Քաշալ, ասաց վհուկը:

—Սպասիր, մի դեռ ես ես էլ աղօթեմ, տեսնեմ իրար կըպչում են:

Քաշալն աղօթեց՝ սագերն իրար կպան. միացան. միւս աղօթքն ասաց՝ պոկուեցին: Մէկ էլ փորձեց. մէկ էլ: Յաջող էր:

—Հիմա ես սովորեցնեմ իմ աղօթքս: Անձրևից առաջ շորերը կըհանես, կըգնես մի տափակ քարի տակ, ինքզ էլ վրան կընստես. դու կըթրջես. շորերդ չէ. երբ անձրևը վերջանայ կըհանես ու կըհագնես. այն ժամանակը դու չոր կըլինես՝ ուրիշները թրջւած:

—Վայ քո տունդ չըքանդւի, Քաշալ, վհուկին էլ խաբէս...

—Ոչինչ, խաբելը քո արհեստդ է, գնայ, միայն թէ որտեղ քոնն ասես, էնտեղ էլ իմն ասա:

Վհուկը անհետացաւ, կորաւ: Քաշալի ուրախութեանը ուրախութիւնն չէր հասնում: Նա շուտ շուտ փորձում էր սովորած աղօթքը: Այդ օրը, պակասն, էլի մի հարիւր անգամ սագերը իրար կպցրեց ու բաժանեց: Ժամանակ անցկացաւ: Մի օր էլ Քաշալը լսեց, որ թագաւորը պաարաստութեան մէջ է, աղջիկն ուզում է պսակել այն ինչ թագաւորի տղի հետ:

Քաշալն գնաց պալատ:

—Թագաւորն ապրած կենայ, ասաց. դու հօ մի ճշմարտասէր թագաւոր ես, էս ի՞նչ եմ լսում ես:

Հը՛ ի՞նչ է, Քաշալ:

—Էլ ինչը սրն է, մի աղջիկ ունե՛ս, ինձ ես խոստացել, էլ ուրիշ աղջիկդ սրն է, որ ուզում ես պսակել թագաւորի տղի հետ. շատեցի՞՞ կնպէս արա. որ վերջը մեր մէջ խօսակցութիւն չըլինի:

Թագաւորը ծիծաղեց:

է՛ հէր օրհնած, դրա համար ես նեղանում, ասել եմ, խօսքիս տէրն եմ, քեզ մի աղջիկ եմ խոստացել, հօ հէնց էդ չեմ խոստացել. որ մի՛ն էլ Աստուած կըտայ՝ էն էլ քեզ կըտամ:

Լաւ, կըտեսնենք, ասաց ու դուրս եկաւ Քաշալը:

Հարսանիքի օրն է: Ամբոխը իրանուած, կուտակւած հարս ու փեսով, թագաւոր թագուհով, պալատականներով առօք փառօք ժամ են դնում: Քաշալը նրանցից բաժանուեց, մի բանի քայլ ետ ու ետ գնաց և սկսեց աղօթքը: Հարս, փեսայ, թագաւոր, պալատականներ, նազիր, վէզիր, ձի կառք, ժողովուրդ՝ բոլորը իրար կպան ու մնացին կաղապարւած փողոցումը: Քաշալը մնաց մեն-մենակ նրանցից մի քիչ հեռու կանգնած:

Սարսափը բռնեց բոլորին: Ազատ մարդ էլ չըկար, որ հնարքի դիմէր: Մենակ Քաշալն էր մնացել ազատ, թագաւորն էլ նրան հրամայեց, որ գնայ մօտիկ գիւղից այն ինչ իմաստուն ձերուսուն կանչի. զո՛ցէ մի հնարք իմանայ:

Քաշալը մտքումը ծիծաղելով՝ ճամփայ ընկաւ:

Հիմա ձերուսուն առած ետ է գայիս: Ծանաղարհին պէտք է անցնեն մի գետով. շորերը հանեցին երկուան էլ, փաթաթեցին վզներին, որ չըթոջեն ու շուրը մտան:

Ձրի մէջ Քաշալն աղօթքն սկսեց. ջրից դուրս եկան, բայց ձերուսու շորերը էլ վզիցը պոկ չեն գալիս: Երկձը մնաց մերկ կանգնած. ոչ կարում է յետ գնայ, ոչ էլ առաջ: Քաշալն իր շորերը հագաւ, եկաւ թագաւորին յայտնեց պատահած դժբախտութիւնը:

Չարմանքը տարաւ թագաւորին: Ուղարկեց մի ուրիշ յետակից ու պատւիրեց, որ նոյն դժբախտութիւնը չըպատահելու համար, ձիով գայ:

—Էդ Քաշալը զիտէ, մտածեց նա ու ճամփայ ընկաւ:

Գնաց, բերաւ գրան էլ, բայց ճանապարհին էլի աղօթեց: Նորեկ ձերուսին եկաւ, բայց ձիուց չըկարողացաւ իջնել՝ կպել էր թամբին:

Եւրոպիկն կանչել տւեց. սա էլ մի տեղ նստեց հանգստանալու՝ մնաց նստած:

Չորրորդը հէնց տեղ հասաւ, Քաշալն աղօթքի վերջին խօսքն ասելուն պէս՝ կպաւ ամբոխին:

Հինգերորդը Ֆասց մի տեղ պատկած. վեցերորդը մի քարի թիկն աւած, եօթներորդը կռացած ետնից բան վերցնելիս, ութերորդը, էններորդը թնչ գիտեմ ինչ գեղան. մի խօսքով ամեն մէկին ճամփին մի փորձանքի, մի պատուհասի բերեց ու միայն լուրը բերեց թագաւորին: Վերջը թագաւորը մատը կծեց:

Քաշալ, էս ոնց որ տեսնում եմ, ասաց, քո բաներդ են լինելու՝ եկ էս խայտառակութիւնից ազատի՛ր մեզ, ի սէր Աստծոյ: Քաշալը ժպտաց.

— Հը՛, թագաւոր, հիմա Քաշալին ճանաչում ես, չասեցի՞ հէնց բան արա, որ վերջը մեր մէջ խօսակցութիւն չլինի:

— Իէ շուտ, դրա ժամանակը չէ: Քաշալ, թէ մի բան գիտես, արա:

— Յետոյ խօսքիդ տէրն ես:

— Տէրն եմ, ախպէր, տէրն եմ:

Հարսանիքաւորներն էլ բիւնբը բռնած, սկսեցին աղաչել Քաշալին, որ ամեն բանի համաձայն են, միայն թէ իրանց ազատի էդ պատուհասից:

Քաշալը նորից բոլորի ներկայութեամբ խօսք անուելով թագաւորից՝ աղօթեց. Հարսանիքաւորներն իրարուց բաժանւեցին, ծերունու շորերը վզից, երկրորդ ծերունին ձիուց, էրրորդը գետնից, միւսներն էլ ծառից. քարից և այլն բաներից, մի խօսքով բոլորն ազատւեցին: Հարսանիքն էլ շարունակեց առաջւայ պէս: Քաշալն դարձաւ թագաւորի իսկական փեսան ու վերջն էլ էն աշխարհի թագաւորը:

119. Ա. Ղ. Ի է Ս



Ասում են՝ իբրև մի խեղճ այգեպան Շատ էր չարչարում տղւէսի ձեռքից, Որ միշտ գողի պէս ամենայն գիշեր Մտնում էր այգին չափարի անցքից, Ուտում խաղողը, համեղ մրգերը, Ու ինչ որ չուտում, ստքով էր շարդում:

Եւ այս ամենը այնպէս գաղտնաբար Որ այգեպանը գլխի չէր ընկնում:

Խորհեց, հասկացաւ մեր այգեպանը, Ու անցքի առաջ մի թակարդ լարեց.

«Էլ չես ազատիլ դու իմ թակարդից»:

Նա ուրախացած մի լաւ ծիծաղեց:

Եկաւ աղւէսը. հոտոտեց, տեսաւ.

— «Թակարդ կայ այստեղ», — իսկոյն գուշակեց,

Ու ուրիշ տեղից — չափարի պիտով —

Ցատկեց նա այգին ու կուշտ խրժրոտեց:

Չարմացաւ, շմեց խեղճ այգեպանը,

Երբ տեսաւ էլի խաղողը կերած. —

Չափարի տակին կար նոր ոտնատեղ,

Թակարդը մի կողմ՝ լարւած մնացած:

Հանեց թակարդը. չափարի տակին

Խոտերում սարքեց սաւտիկ չորացած,

Սնցքի առաջ էլ հոյն այնպէս շինեց,

Իբրև այնտեղ է թակարդը սարքած:

Եկաւ աղւէսը, առանց կասկածի

Չափարի գլխով — հօպ — ցատկեց այգին.

Բայց, վայ քո օրին... նա երկու ոտքով

Թըր՛ըմփ — թաւալեց թակարդի միջին...

Հասաւ հեալով մեր այգեպանը

Ոտները բոբիկ, բահը իր ձեռքին,

Էլ չը խնայեց — շատ էր նա դաղւել —

Տրանք, հա տրանք — աղւէսի գանգին...

120. ՂԱԴՈՒ\*) ԿԱՏՇ

1.

Փօքրիկ արարական քաղաքի դարբասի շուքի տակ նստած էր Իւսուֆը և արմաւ էր ծախում: Քաղաքը մօտ էր մեծ անապատին և ազան նայում էր բարաւանի ճանապարհին: Ու գտա-

\*) Ղազի նշանակում է դասաւոր:

պանների սուր ձայները աւելի ու աւելի մօտիկ էին լսոււմ և շուտով բեռնաւորաւծ ուղտերի երկար շարանը անցաւ քաղաքի բաց դռնից: Ուղտապանները մօտիկից անցնելով, տեսան Իւսուֆին և նետեցին մի քանի մանր դրամներ:

Նրա հայրն էլ ուղտապան էր և շատ անգամ յաջողութեամբ տարել էր քարաւանը աւազոտ անապատներով: Բայց մի անգամ նա անհետացաւ իր հարստութիւնով այն սոսիալի քամուց (սամուից), որը յանկարծակի երևալով անապատում, կուրացնում, այրում և տւազով ծածկում է թէ մարդկանց և թէ կենդանիներին: Ահա այդ էր պատճառը, որ ուղտապանները ցաւելով էին նայում փոքրիկ որբին: Այժմ Իւսուֆի ցանկութիւնն էր ունենալ մի ուղտ և ճանապարհորդել քարաւանի հետ: Ծովագնացի որդին սիրում է ծովը, չընայած, որ հայրը խեղդւել է ծովի ալիքների մէջ: Իւսուֆին էլ քաշում էր անապատը, թէև դիտէր, որ հօր դիակը հանգստանում է աւագների մէջ:

Ամեն կէս օրին, երբ խոնութեանները փակում էին խանութները շոգից հանգիստ առնելու, փոքրիկ Իւսուֆը դնում էր քաղաքի դուռը և մտախոհ նայում էր ընդարձակ անապատին:

Այժմ նայելով անցնող ուղտերին, նա մտածում էր. «Արդեօք կըզայ մի օր, որ ես էլ կարողանամ դնել այդ մեծ կենդանիներից մէկը»: Մի ուղտապան ասել էր նրան, որ ամենափառ ուղտը արժէ 100 ոսկի, իսկ լաւը երկու անգամ աւելի: Երեխան ձեռքը տարաւ չալմային (գլխի փաթաթանը), որի ծալքերի մէջ պահում էր նա միակ ոսկի փողը: Ընդամենը մի հատ: Իսկ նրան դեռ շատ էր հարկաւոր: Նա վերցրեց իրան նետած փողերը և տխուր քայլեց քարաւանի յետևից, որը հասել էր նեղ փողոցի ծայրը:

2.

Յանկարծ նրա բոբիկ ոտը դիպաւ մի պինդ բանի, որ ընկած էր ճանապարհի փոշու մէջ: Նա շտապ կուացաւ և բարձրացրեց՝ կանաչ մետաքսից գործած մի քսակ էր, — փողով լիքը: Փողոցը դատարկ էր: Ոչ ոք չըտեսաւ, ինչպէս բարձրացրեց

քսակը: Ոչ ոք էլ չի իմանայ, եթէ ինքը չըլայտանէ: Պէտք էր արդեօք յայտնել:

Նա նորից վերադարձաւ դռան շաքը, նստեց ու սկսեց մտածել: Նստեց բաւական երկար ու մտածում էր, թէ ինչպէս վարել: Քսակը զգուշութեամբ դրեց ծոցը — ինչքան ծանր էր: Իւսուֆը չէր համարձակոււմ հանել ու համարել իր հարստութիւնը, բայց ծանրութիւնից նա զուշակեց, որ քսակում աւելի ոսկի կայ, քան իրան հարկաւոր է մի ուղտ գնելու համար:

Պէտք էր արդեօք յայտնել:

«Ինչպէս կըվարէր իր տեղը հայրը», — հարցրեց Իւսուֆը ինքըն իրան և պատասխանն էլ գտաւ:

«Նա կըվնարէր քսակի տերօջը»:

Այո, հարկաւոր է գտնել տիրոջը. նա պարտական է այսպէս վարւելու: Իւսուֆը վեր կացաւ և վազեց:

Նա չըպիտէր, ով էր կորցրել քսակը, բայց ենթադրում էր, որ քարաւանի մարդկանցից կըլինէր:

Պէտք է առաջ այնտեղ հարցնել:

Բայց նախ քան Իւսուֆը կըհասնէր քարաւանին, փողոցում երևաց մուսնետիկը: Նա բռնած ունէր խոշոր ձեռնափայտ, որը ամեն քայլափոխում խփում էր գետնին:

— Լսեցէք, լսեցէք, լսեցէք, աղնիւ մարդիկ — գտում էր նա, — վաճառական էրէն Ազիզը կորցրել է իր քսակը 200 ոսկով: Նա կընւիրէ կէսը այն մարդուն, ով կըվերադարձնէ քսակը: Աւելի լաւ է ստանալ կէսը և աղնիւ ֆալ, քան վերցնել բոլորը և դառնալ գող:

Իւսուֆը նրան կարեց:

— Ես եմ գտել, ասաց նա, հանելով ծոցից քսակը և ցոյց տալով մուսնետիկին:

— Հետեիր ինձ, ասաց մուսնետիկը, էրէն Ազիզը նւերդ կըտայ:

3.

Շուտով նրանց շուրջը հաւաքւեց մեծ բազմութիւն: Մուսնետիկը նրանց միջից ճանապարհ ընկաւ Իւսուֆի հետ գէպի էրէն Ազիզի խանութը: Նրանց միացան և մի քանի տնգործ մարդիկ:

Գանւեցին և այնպիսիները, որոնք վաղեցին սուղ և յայանեցին էբէն Ազիզին այդ ուրախալի լուրը:

Փողոցով անցնելիս՝ Իւսուֆը լսում էր թէ ինչպէս ամեն կողմից իրա անունն էին տալիս:

—Այն արմաւ ծախող Իւսուֆն է գտել էբէն Ազիզի քսակը, բզաւում էր մէկը:

—Նա 100 ոսկի կտանայ, ասում էր երկրորդը:

—Նրան 100 ոսկի է խոստացել, չէ՞, հակաճառում էր երրորդը, բայց ես շատ լաւ եմ ճանաչում ժլատ էբէն Ազիզին, նա աւելի շատ կըմեռնի, քան թէ մի ոսկուց կըզրկուի:

Հինգ րոպէից յետոյ նրանք հասան էբէն Ազիզի խանութը: Նա յիբաւի շափից դուրս ժլատ մտրդ էր:

Հէնց որ իմացաւ, թէ գտնուել է քսակը, սէտեց մտածել մի հնար, որպէսզի նւէրը չըտայ:

Փողովուրդը համակրում էր տղային, սւտաի և յուզած բզաւում էր:

—Դէ, քաւթառ ժլատ, ահա քսակդ, անը տղային խոստացածդ:

—Կամաց, կամաց, մըթմըթաց ձերը, պէտք է դեռ ևս օտուգեմ:

էբէն Ազիզը ձեռքն երկարացրեց, Իւսուֆը աւեց քսակը:

—Լաւ, ասաց վաճառականը, սեղմելով ձեռքում ոսկին և կատաղած նայելով Իւսուֆին իր կախկախ յօնքերի տակից:

—Սա երեխայ է և աղքատ, —մտածեց նա ինքն իրան,—շատ հեշտ կազատուեմ սրա ձեռքից:

Նա բացեց քսակը:

—Համարիբ փողը, —գտնում էր ժողովուրդը, կէսը քեզ, կէսն էլ աղային:

Վաճառականը իր շորչրուկ ձեռքը կոխելով քսակի մէջ, սկսեց ոսկու մէջ ինչ որ բան որոնել:

—Այ անպիտան, յանկարծ գտաց նա կեղծ յուզմունքով, —գմբուխաս սւր է:

—Չմըռնխա, —մըթմըթաց Իւսուֆը:

—Այո, գմբուխա, —բզաւեց էբէնը և կոպտաբար բանելով աղայի օձիքից, սկսեց թփափ առլ: Ինչ խոսքի ևս մտածում

դու վերադարձրիր ոսկին, բայց գողացար գմբուխաս, իմ թանկագին գմբուխաս, որը տասն անգամ աւելի արժէ այս սղորմելի բսակից: Յէ, ես անբախտ եմ, գմբուխաս, իմ գմբուխաս տալը: Ի՞նչ ես արել դու, գող աղքատ:

Իւսուֆը դուրս պրծաւ նրա ձեռքից և կրակոտ աչքերով նայելով ձերունուն՝ ասաց

—Ես ոչ աղքատ եմ և ոչ գող: Ես քեզ աւեցի քսակը և չը գիտեմ, մէջը ինչ կար—ես բաց չեմ արել: Եթէ չես ուզում նւէրս տալ, —Ասուած քեզ հետ, ինչ հարկաւոր չէ, — Եւ նա շուռ եկաւ, որ հեռանայ:

—Գնա, ասաց էբէնը ինքնագոհ ժպտով և շնորհակալ եղիք Աստծուց, որ այդպէս հեշտ պրծար: Ես ներում եմ քեզ, վախճանւած հորդ յիշատակը յարդելով: Ես չեմ ուզում անպատուել նրան: Բայց մունետիկը կանգնեցրեց աղային:

—Կանգնիր, —կանչեց նա և դառնալով վաճառականին՝ ասաց. դու չես կարող ոչ ներել, ոչ էլ պատժել: Այդպիսի իրաւունք քեզ ոչ սք չէ տուել: Եթէ սղան ազնւ է, պէտք է որ ստանայ այդ նւէրը, իսկ եթէ նա, ինչպէս դու ես ասում՝ գող է, հարկաւոր է պատժել նրան. Գնանք Ղազու մօտ:

—Ղազու մօտ, Ղազու մօտ —կրկնեց ամբոխը:

2.

Ղազու մօտ գալով՝ նրանք պատմեցին գործի եղելութիւնը:

—Ինչի՞ համար քեզ հրամայեցին կանչել—ասաց Ղազին՝ դառնալով մունետիկին:

200 ոսկով լի քսակի համար:

—Չմըռնխաի մասին ոչինչ չասացին:

—Ո՛չ, քսակի մասին էր միայն խօսքը:

—էբէն Ազիզ, —ասաց Ղազին, —եթէ, ինչպէս դու ասում ես, քսակումդ կար գմբուխա էլ, ինչո՞ւ չըհրամայեցիր նրա մասին էլ յայանելու:

Պարոն, ասաց նա, գմբուխաը մեծ էր, բայց ոսկեպատ չէր: Ես յուսով էի, որ քսակ գտնողը նրա գինը չի իմանայ: Շատերը կը վերադարձնէին ոսկին, որ նրա կէսը սաանան: Իսկ եթէ ես յայտարարէի գմբուխաի մասին, շատ հաւանական է, չէին վե-

բողոքներն և որ զլիսուորն է, այն ժամանակ, ես ստիպւած պէտք է լինէի աւելի շատ նւէր տալ:

—Նայիր, ինչ ժլատն է եղել—բղաւեց մէկը ժողովրդից:

Էբէն Ազիզը ժպտաց: Նրա պէտքը չէր, թէ ինչ կասեն մարդիկ, միայն թէ հաւատային իր բացատրութեանը: Եւ նա հաստիք նպատակին:

—Տղայ,—ասաց Ղազին, դու տեսնո՞ր զմրուխտը:

—Ոչ, պարոն:

—Խուզարկէք դրան, հրամայեց Ղազին:

Երկու մարդ բռնեցին Իւսուֆին և սկսեցին շորերը բռնել: Չարմայի մէջ պահած ոսկին գնգալով ընկաւ յատակին:

—Ահա,—բղաւեց էբէն-Ազիզը,—նա խաբոււմ էր, ոսկիներէր էլ է վերցրել, այն ինչ երզուում էր, թէ քսակը չէ բացել:

—Դա իմն է,—բացականչեց Իւսուֆը:

—Քանն է, հա,—կրկնեց էբէնը:—Որտեղից կարող է աղքատ մարդու մօտ ոսկի լինել: Դրանից յետոյ երևի կասես, թէ զրմութեան էլ քանն է:

—Ամբոխը սկսեց թեքուել էբէն Ազիզի կողմը: Ղազին յօնքերը կիտած նայում էր:

Բայց Իւսուֆին պաշտպանեց իւր բարեկամներէր մէկը:

—Պարոն,—ասաց նա,—տղան ճիշտ է ասում. ես ինքս անցած շարթին տւեցի այդ ոսկին պղինձ փողերի փոխարէն, որ յարմար լինի այդ փոքրիկ հարստութիւնը պահել շարմայի մէջ:

—Քանն ոսկի կար քսակումդ, Ազիզ,—հարցրեց Ղազին:

—Ես... ես... չեմ հաշուել,—մըթմըթաց վաճառականը:

—Հաշիւը այժմ. Սպասիր, այնպէս հաշիւը, որ ես էլ տեսնեմ: Վաճառականը թափեց ոսկին Ղազու առջ և գողգողալով սկսեց մէկ-մէկ քսակը լցնել: Ճիշտ 200 հատ էր, ոչ աւել, ոչ պակաս:

Ղազին դռնալով իրա մօտ նստողներից մէկին՝ թելադրեց դատը:

Ապա, Ղազու նշանով գրադիրը բարձր ձայնով սկսեց.

—Ատածոյ անունով, լսեցէք արդարագատ Ղազու վճիռը վաճառական էբէն Ազիզի և Իւսուֆ տղայի գործի մասին:

Ամբոխը մօտեցաւ դատաւորին. էբէն Ազիզը տակեանց նայում էր Ղազուն, բայց նրա դէմքից ոչինչ չէր կարողանում հասկանալ:

—Լսեցէք ինձ ուշադրութեամբ, ասաց Ղազին: Էբէն Ազիզ, քո պատասխանից է կախւած իմ վճիռը, յիշիր նաև, որ քեզանից է կախւած այս որբ տղայի պատիւը. լաւ մտածիր, յետոյ խօսիր: Ճիշտ է, որ քո քսակի մէջ զմրուխտ կար:

—Թող Աստուած անի՞՞՞, եթէ սուտ եմ ասում—պատասխանեց Ազիզը—ես հաւատացած եմ դրանում:

—Այն ժամանակ վճռելը հեշտ է, ասաց Ղազին—ես իրաւունք չունեմ չըհաւատալու քո խօսքերի:

Վաճառականը խոր գլուխ աւեց, որ ծածկի իր յողթական ժպիտը:

—Բայց ես չեմ կարող չը հաւատալ Իւսուֆի խօսքերին,—հանդարտ շարունակեց Ղազին, որը յայտնի է շատ շատերին որբ պէս ազնիւ և մաքուր տղայ:

—Էբէն Ազիզը յանկարծ շիտակեց. ժպիտը թուաւ նրա երեսից:

—Ահա իմ գատավճիռն—ասաց Ղազին որովհետեւ քո քսակի մէջ, Ազիզ, զմրուխտ կար, իսկ Իւսուֆի գտածի մէջ ոչ, ուստի գտած քսակը քոնը չէ: Դրա համար էլ հրամայում եմ քսակը վերադարձնել գանոզ Իւսուֆին, իսկ քեզ, էբէն Ազիզ, խորհուրդ եմ տալիս երկրորդ անգամ յայտարարել կորցրածիդ մասին, կարելի է քանն էլ գանել:

Մի քանի օրից յետոյ մի շաբթուա ընդհատ զուրս էին գնում քաղաքի դարպասից և ուղղոււմ դէպի անապատը. Իւսուֆը գոռոզ դէմքով գնում էր իր ուղախ հետ, որին նա համարում էր ամենապեղեցիկ կենդանին աշխարհի երեսին:

121. ԱԳՈՍԻՆ ՈՒ ԱՂԻԼՍԷ

Բախտի բերմամբ  
Թէ պատանճամբ  
Մի մեծ ազաւ  
Մի գունդ պանիր

Դաշտում գաւա,  
Կտցում առաւ,  
Ծառին թառաւ:  
Օ, ինչ պանիր, դեղին ոսկի...

Դայց նա շառած համը իսկի,  
 Աղւէոն անցաւ  
 Մառի մօտով,  
 Գերեկց,  
 Էրւեց,  
 Պանրի հոտով,  
 Վազեց գնաց բերնի շուրը  
 Եւ թուլացան կուռն ու ճուար:  
 Կախարդն էդտեղ, իրա ձևին,  
 Մառի տակից, աչքն ազոաւին,  
 Հեղիկ-նազիկ,  
 Փափկամազի  
 Բացեց լեզուն  
 Անուշ-մեղուշ,  
 Թափեց-չափեց  
 Շաքար ու նուշ.  
 — Ինչքան լանն ես,  
 Ես քո գերին,  
 Քս էդ սեիկ  
 Վառ աչերին,  
 Նուրբ ծալքերով  
 Զոյգ թևերին:  
 Մի գու մտիկ.

Էդպէս քթիկ,  
 Էդպէս ճտիկ.  
 Մախմուր ազին,  
 Խաս ու դումաշ  
 Ատլասն հագին.  
 Գիտե՛մ անշուշտ իմ քուրբիկի  
 Զայնն էլ կըլի հրեշտակի.  
 Երգի՛ր, քուրբիկ, մի ամաչի,  
 Իմ ուղածը մի մեծ բան չի:  
 Թէ որ չընազ էդ տեսքիդ հետ  
 Երգելում էլ եղար վարպետ,  
 Օ, կըդառնաս, իմ սրբուհի,  
 Թռչունների մայր Թագուհի:  
 Ազոաւ ազին  
 Գովեստներից  
 Իրա մասին  
 Շշմած, ուռած՝  
 Ազոաւային  
 Բըկովը մին  
 Որ չը կ'ըսուաց,  
 Պանիրն ընկաւ կացիցը ցած,  
 Շողաքորթը ըռխեց գնաց:

192. ԿՍՅՅՐԱՆՈՒՄ


1.

Ութը տարեկան Աշոտը գեռ ևս չէր եղել երկաթուղու կայա-  
 րանում և սրտանց ցանկանում էր տեսնել: Նրա խաղընկերները և  
 տանեցիները ինչնք ասես, չէին պատմել կայաքանի մասին:  
 Կա շարունակ ազաչում էր իբ մեծ եղբորը, Տիգրանին, որ  
 միանգամ կայաքան գնալիս երան էլ ասնի հետը: Տիգրանը կա-  
 արեց Աշոտի ինգիբը:

Եւ անա մի գեղեցիկ օր եղբայրները պատրաստում են կա-  
 յարան գնալ: Կայարանը հեռու էր գիւղից: Նրանք կառք նստե-  
 ցին և ճանապարհ ընկան: Ծանապարհն անցնում էր սիրուն դաշ-  
 տերով ու բլուրներով: Կէս ժամից յետոյ նրանք հասան ձորակը,  
 որի մէջ գտնւում էր կայարանը:

2.

Ասուած իմ, ինչ աղմուկ, ինչ իրարանցում:  
 Աշոտը մնացել էր շմած. բերանը բաց այս ու այն կողմն էր  
 նայում և չէր կարողանում հասկանալ, թէ ինչու մարդիկ անգա-  
 դար վազում են, շտապում, աղմկում...



Մի քանի մարդիկ իրար յետև կանգնած մի պատուհանի ա-  
 աջ, տոմսակներ էին առնում: Նրանք անհանգիստ ու անհամբեր  
 սպասում էին իրանց հերթին: Պատուհանի յետևը մի փոքրիկ  
 սենեակում փակւած՝ տոմսակ ծախողը արագ-արագ վերցնում էր  
 փողերը, համարում և տոմսակներ տալիս: Սաստիկ արագ աշխա-  
 տելուց խեղճը քրտնել էր:  
 Միւսները մեծ-մեծ հակերը բեռնակիրների միջոցով դարսո-  
 տել էին այս ու այն կողմում: Շուտով նրանք ևս հաւաքւեցին մի  
 ուրիշ պատուհանի մօտ: Մառայողը բեռնակիրների օգնութեամբ  
 կշռում էր հակերը, փողը վերցնում և թղթեր տալիս, որպէսզի  
 ճանապարհորդները իրանց իջած տեղերում ներկայացնեն և ստա-  
 նան իրերը:



Նրանք, ովքեր տոմսակները գնել էին և ծանր իրեր չունեին, իրանց թեթև կապոցները ձեռքերին կամ գրոյց էին անում բարեկամների հետ և կամ կայարանի դահլիճում նստած, նախաճաշիկ էին անում:

3.

Յանկարծ լուեց մի սուր, երկար շուռ: Ազմուկն և շարժումը աւելի շատացան: Մարդիկ իրանց իրերը վերցրած, շտապում են դէպի դուրս, կայարանի այն մասը, ուր կանգնելու է երկաթուղու գնացքը: Բեռնակիրները այս ու այն ճանապարհորդի շորերով բեռնաւորւած, ծախ նման թռչում են: Ամենքը շտապում են, որ տեղեր գտնեն վազօններում:

Տիգրանն ու Աշոտը նոյնպէս դուրս եկան՝ գնացքը տեսնելու:

Ահա նա մտել է ձորակը և օձի նման սողալով, մօտենում է կայարանին: Նա անքում է, Փշռում, ծռխ ու գոլորշի բանջ թողնում..

Գնացքը կանգ առաւ կայարանում: Ըանապարհորդները շտապով տեղաւորւեցին: Տւեց երբորդ գանգը, դուրս մնացածները վերև բարձրացան:

Երկաթուղին առիւծի պէս մոնչաց և ճանապարհ ընկաւ՝ իր հետ տանելով բազմաթիւ մարդիկ, անասուններ և զանազան իրեր..:

Աշոտը գիւղ վերադառնալով, երկար ժամանակ պատմում էր կայարանում տեսած ու լսած բաների մասին:



1 Մանկական սէր, ըստ Է. Դէ Ամիչիս փոփոխւած	3
2 *Կարգա. Ա. Ծառուբեան մի մասը ձեռագիր (ոտսնաւորի առաջին բառը գլխագրով)	4
3 Աղջիկն ու վառիկները. փոխադր.	5
4 *Մայրն ու Մանուկը. Հ. Հայրապետեան	6
5 Ողորմութիւն. փոխադր.	—
6 *Մանկանը. Յ. Պետրոսեան	8
7 Ամենալաւ վկայականը. Սահակեան	—
8 *Դու քեզ հաւատա, Լ. Մանուէլեան	9
9 Որսորդն ու կապիկը. ձեռագիր (վերջակէտից յետոյ գլխագիր և տողադարձ)	10
10 Լուսքը. շարադրական պատկեր	11
11 Վայրենին ու զիւրը. փոխադր.	12
12 *Գիւղացին ու արջը. Աթ. Խնկոյեան	13
13 Ատաղձագործ Սիմէօնը. Մ. Բ. մի մասը ձեռ. (է. տառի գործած)	15
14 *Մշակ. Կ. Մելիք Շահնազարեան	16
15 Վեհանձն օտարականը փոխադր.	17
16 *Մանկանը. Ս. Չահագիդ մի մասը ձեռագիր (ը ի գործած)	18
17 Դժգոհ ծառը, թարգ. Ազատեան „Հասկեր“	19
18 *Փայտահատն ու մահը. Աթ. Խնկոյեան	21
19 Գթասիրտ Հնդկացին Հ. Բ.	22
20 *Նամուս ու զէյրաթ Յ. Յախոբեան	23
21 Ոսկէ կացին. ըստ Լ. Տօլստոյի	—
22 Սանդուխքը. ձեռագիր (ը. և տողադարձ)	25
23 *Խնդն ու կաղնին. Աթ. Խնկոյեան	—
24 Օհանը. ըստ Չեխովի մի մասը ձեռագ. (յատուկ անուններ գլխագրով)	26
25 *Որբիկ. Ա. Ծառուբեան	28
26 Խելացի տղաւը. շարադրական պատկեր	29
27 Խաղընկերներ Լ. Տէր-Մանուէլեան, փոփոխւած	30
28 *Մօրս. Պ. Մանուէլեան	31
29 Ժլատ. ըստ Լ. Տօլստոյի	62

30	*Յոգնած երկիր. Ե. Յովհաննիսեան ձեռագիր (ած. ող.)	34
31	Մեր չուչիկը, Ա. Իսահակեան	—
32	Մկնբրի ժողովը. Աթ. Խնկոյեան	36
33	Առիւծն ու շունը, փոխ. Հ, Նիկողոսեան	38
34	Աղջիկ և թռչնակ. շարագրական պատկեր	40
35	*Պոչատ աղէտը. Աթ. Խնկոյեան	41
36	Երախտագէտ առիւծը. փոփոխ.	42
37	Երախտագէտ կապիկը. Ս. Գալաչեան ձեռագիր (ոյ. այ)	44
38	*Մանուկն ու ջուրը. Յովհ. Թումանեան	45
39	Աշուն, Ս. Պապեանց	46
40	Աշուն. ձեռագիր- եր, ներ. Լ Մանուկեան	47
41	Ի՞նչպէս են փայտից տներ շինում. շարագրական պատկ.	48
42	Ուխտ գնալը. Սէյրի „Հասկեր„	49
43	*Հովի հրաժեշտը. Գ. Բարխուդարեան	50
44	Անձրեային ճիճու. Տիկ. Մարգարիտ „Հասկեր„	51
45	*Հրաժեշտ. Հ, Հայրապետեան	52
46	Ուխտ գնալ. շարագրական պատկեր	53
47	Զմեռ. Ա. Ահարոնեան	54
48	*Զիւն. ձեռագիր—իւ. երկբառբառ. Գամառ-Քաթիպա	55
49	Անկոչ հիւրը Տիկ. Շ. Կուրղինեան	—
50	Զմեռ. Պ. Մոճոռեան	57
51	Բարեկենդան. Գ. Պոչեան	58
52	Բարեկենդան. շարագրական պատկեր	59
53	*Պապաճըստ. Հ, Հայրապետեան	60
54	Բարեկենդանը, Յով. Թումանեան	—
55	*Գարուն Գ. Մեսեան	62
56	Ինչո՞ւ է մանիշակի վիզը ծուռ, Յար, Մելքումեան	63
57	*Մանիշակ, Գ. Ք. ձեռագիր—պարզ բառեր, նիւթ, գոյակ, և ած.	64
58	Գարուն. Գ. Դեմիրճեան	—
59	*Գութանի երգ. Յ, Թումանեան մի մասը ձեռագիր հրամայական եզանակ.	65
60	Գարուն, Կ. Մելիք-Շահնազարեան	66
16	*Սերմնացան, Ա. Արարատեան	67
62	Թռչնակի երգը. ըստ Անդրեասէնի	68

63	*Արեւի շողը. Ա, Ծասուրեան ձեռագիր—առողանութեան նշաններ և կետադրութիւն	61
64	Մի խնձորենու պատմութիւն. փոխադր.	—
65	*Գարնան առաւօտ	73
66	Մայիսի, Զաւախեցի	74
67	*Մայիս Հ. Հայրապետեան	—
68	Արեւի մօտ, Ա, Իսահակեան	75
69	*Գարնան երեկոյ. ժողովը.	77
70	Վարդի պատմութիւնը. Կ, Մելիք-Շահնազարեան. փոփոխ.	78
71	Գառնի վարդը, Յ. Յովհաննիսեան	79
72	Ոչխար կթելը, Կ, Մելիք-Շահնազարեան	80
73	Կաքաւի երգ. Յով. Թումանեան ձեռագիր „իկ„	81
74	Ամառը. Տիկ. Հայկ. փոփոխած	82
75	Ամառ. Պ. Մոճոռեան	83
76	Անվեհեր տղան. փոխադր.	—
77	Սարերի որդին. Գ Մեսեան	85
78	Քամի. փոխադրութիւն	86
79	Ամպեր. Կ. Մելիք-Շահնազարեան ձեռագիր „եր„	87
80	Հանելուկ, Կ, Յարութիւնեան	88
81	Մէն. Գոտարդի շները. փոխադր.	—
82	Հրաւէր, Գ Սարիբէկեան	89
83	Ա. Լ. Բաֆֆի	90
84	Այ սև ամպեր. Յ. Յովհաննիսեան ձեռագիր յ-առաի գործած. 9	—
85	Աղբիւր փոխադար.	—
86	Բարի գործ, Յար. Թումանեան	93
87	Գայլ ու եղներ. փոխադր.	64
88	Երեք ընկեր. Գ Մեսեան	96
89	Կարկուտ, Կ. Մելիք-Շահնազարեան	97
90	Կարկուտ. Հ. Հայրապետեան ձեռագիր. ներկայ ժաման.	98
91	Գիւղի ընտանեկան կեանքը. շարագրական պատկեր	96
92	Հրաշալի հատիկը. Աթ. Խնկոյեան „Հասկեր„	100
93	Հատիկ, Յ Յովհաննիսեան	102
94	Կայծակ. Ս. Սիմէոնեան. փոփոխած	—
95	Կայծակ. Յ, Աղաբաբ	103

96	Չանթարդել. Յ. Ակունեան փոփոխած. մի մասը ձեռագիր (վ և ւ)	104 105
97	*Երաշտ. Կ. Մելիք Շահնազարեան	106
98	Գիւղական աշխատանքը. շարադրական պատկեր	107
99	Լոյսի սիրահարը. Լ. Օնիգ	108
100	*Չըհնձւած արտ	
101	Նամակ. ձեռագիր. աւոր. ոտ, լէտ, ային, ներկայ և ան. ցեալ անկատար ժամանակ	— 109
102	Արև. նեվեագոմակայի „Հասկեր,“	113
103	*Վազրն ու կատուն Գ. Մեսեան „Հասկեր,“	117
104	Ծեր կոյրի պատմութիւնը. Աղբիւր, փոփոխ.	119
105	*Աղւէսն ու գայլը. Աթ. Խնկոյեան	
106	Նամակ. ձեռագիր, ան, դժ, ային, անցեալ կատարեալ և ապառնի ժամանակ:	121 —
107	Երազ. Հ. Բարուրեան	123
108	Ձատկի երեկոյ. շարադրական պատկեր	124
109	Ով աւելի կարեկցեց. Լ. Մելիք-Աղամեան փոխ. „Հասկեր,“	125
110	*Որք ժանուկ. Շատել-Արաբ	126
111	Ամենապէտքական բանն աշխարհում. Ս. Իսահակեան	129
112	*Աշխատանք. Յար. Թումանեան	131
113	Լճակն ու առւակը. Թարգ. Սովասիւնա „Հասկեր,“	134
114	*Լացոզ ուռենին Գ. Մոճոռեան	135
115	Խաբէց. օր. Մ. Ս. „Հասկեր,“	140
116	*Դարբին, Կ. Մելիք-Շահնազարեան	141
117	Հովիւ շարադրական պատկեր	142
118	Քաջալը. Գ. Մեսեան „Հասկեր,“	146
119	*Աղւէս. Սրինգ	147
120	Ղազու դատը. Հ. Բարսեղեան „Հասկեր,“	153
121	*Ագռանն ու աղւէսը. Աթ. Խնկոյեան	154
122	Կայարանում	



« Ազգային գրադարան



NL0245879

Վաճառում է Կովկասի բոլոր յայտնի զբոսայգիների և  
 և Ալեքսանդրապոլում՝ կազմողների մաս

Երևանում Գլխավոր պահեստը գտնվում է «КУЛЬТУРА»  
 Տպարանում Бебутовская № 7

---

ԳՈՒՄԱՐՈՎ, ԳՆՈՂՆԵՐԻՆ ԼԻՆՈՒՄ Է ՋՅԱԼԻ ՋԵՂՏ

---

Մեր խոսքն՝ Александрополь, учителю Геворку Микаелянъ  
 Больш. Слобол. № 42

---